Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 27-ի N 251-Ա որոշման

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (2021-2026 ԹԹ.) 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

2022 թվականի արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ ՀՀ կառավարություն) գործունեության առանցքային մարտահրավերը շարունակում է մնալ արտաքին անվտանգության ապահովումը:

Աշխարհաքաղաքական խորացող անկայունությունը, աշխարհակարգի և միջազգային անվտանգության ոլորտում ակնհայտ դարձող անորոշություններն ու լարվածություններն ավելի են սրում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ կամ Հայաստան) արտաքին անվտանգության սպառնալիքները:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի Հանրապետության (այսուհետ՝ Ադրբեջան կամ ԱՀ) կողմից սանձազերծված հերթական ագրեսիան ընդդեմ ՀՀ-ի, ՀՀ ինքնիշխան տարածքների շարունակվող օկուպացիան, նոր ագրեսիայի չվերացող վտանգը, Լեռնային Ղարաբաղի (այսուհետ՝ ԼՂ) հիմնախնդրի կարգավորված չլինելը, ադրբեջանական զինուժի ներխուժումները ԼՂ-ում Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտի, Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը, ԼՂ-ի բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարումների միտումնավոր խափանումները և դրանց հետևանքով ԼՂ-ում ծայր առած հումանիտար, պարենային, էներգետիկ և բնապահպանական ճգնաժամերը ՀՀ կառավարությանը, ցավոք, թույլ չեն տվել ողջ ռեսուրսները լիարժեք կենտրոնացնել զարգացման օրակարգերի իրագործման շուրջ:

Այսուհանդերձ, 2022 թվականը եղել է լայնածավալ բարեփոխումների տարի: ՀՀ կառավարությունը որդեգրել է անվտանգային մարտահրավերներին լայնածավալ բարեփոխումներով, պետական ինստիտուտների կայացմամբ և զարգացմամբ արձագանքելու քաղաքականություն:

Արդյունքում, 2022 թվականն ամփոփվել է վերջին 15 տարվա համար աննախա-դեպ՝ 12,6% տնտեսական աճով, մեկնարկել և շարունակվել են ինստիտուցիոնալ բարեփոխումները զինված ուժերի, արտաքին և ներքին անվտանգության, կրթության և գիտության, առողջապահության, բնապահպանության, տնտեսության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, տարածքային համաչափ զարգացման, տրանսպորտի, էներգետիկայի, բարձր տեխնոլոգիաների, հակակոռուպցիոն քաղաքականության, ժողովրդավարության և մարդու իրավունքների, դատաիրավական և այլ համակարգերում:

ՀՀ կառավարությունը շարունակել է բալանսավորված և բալանսավորման արտաքին քաղաքականություն: Այսուհանդերձ, չլուծված է մնում առանցքային խնդիրը՝ ՀՀ արտաքին անվտանգության երաշխավորումը:

Սեպտեմբերյան ագրեսիան և միջազգային արձագանքը

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ ագրեսիա են սկսել ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ՝ խոշոր տրամաչափի զինատեսակների, հրետանու, հրթիռային համակարգերի, անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ:

Ագրեսիայի հետևանքով հայկական կողմն ունեցել է 225 զոհ, այդ թվում՝ զոհվել է քաղաքացիական 3 անձ, վիրավորվել է 293 զինծառայող և քաղաքացիական 7 անձ, գերեվարվել է 20 զինծառայող:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից թիրախավորվել են Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի մարզերի 36 բնակավայր, այդ թվում՝ Գորիս, Սիսիան, Կապան, Ջերմուկ, Վարդենիս, Տեղ, Գեղամասար համայնքները, ինչի հետևանքով մասնակի կամ ամբողջական ավերվել են 192 տուն, 3 հյուրանոց, 2 դպրոց, 1 բժշկական հաստատություն, 1 հանդիսությունների սրահ, 4 գոմ: Վնասվել են 7 էլեկտրական ենթակառուցվածք, 5 ջրային ենթակառուցվածք, 3 գազամուղ, 1 կամուրջ, 2 ավտոճանապարհ, 1 փողոց: Թիրախավորվել են 2 շտապօգնության մեքենա, 4 անձնական օգտագործման ավտոմեքենա: Ադրբեջանի զինված ուժերը մի քանի ուղղություններով մխրճվել են ՀՀ ինքնիշխան տարածք:

2021 և 2022 թվականների ընթացքում Հայաստանի դեմ իրականացրած ագրեսիաների հետևանքով Ադրբեջանն օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքի ավելի քան 150 քառակուսի կիլոմետր հատված: ՀՀ ինքնիշխան տարածքի ևս 75 քառակուսի կիլոմետր հատված ադրբեջանական օկուպացիայի ներքո է 1990-ականներից:

ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի առնչությամբ ՀՀ-ն պաշտոնապես դիմել է ՌԴ-ին՝ Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի դրույթները գործողության մեջ դնելու, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (այսուհետ՝ ՀԱՊԿ)՝ ՀՀ անվտանգության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովման նպատակով «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ին համապատասխան աջակցություն (այդ թվում՝ ռազմական) տրամադրելու և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ հատուկ նիստում ՀՀ-ի հանդեպ իրականացված ագրեսիայի վերաբերյալ քննարկումներ անցկացնելու նպատակով:

Ագրեսիայի առնչությամբ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեսակոնֆերանսի ձևաչափով տեղի է ունեցել ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի արտահերթ նիստ, որի որոշմամբ սեպտեմբերի 15-ին մոնիթորինգային առաքելություն իրականացնելու նպատակով ՀՀ է ժամանել ՀԱՊԿ Միացյալ շտաբի օպերատիվ խումբը:

2022 թվականի նոյեմբերի 23-ին Երևանում տեղի է ունեցել ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստը, որի ընթացքում հայկական կողմն ընդգծել է, որ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիաների կապակցությամբ ՀԱՊԿ-ից համարժեք արձագանք չի ստացվել: Հայկական կողմն արձանագրել է, որ նիստի ընթացքում ստորագրման ներկայացված «ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հռչակագրի» և «Հայաստանի Հանրապետությանն օժանդակություն ցուցաբերելու համատեղ միջոցառումների մասին» նախագծերը չեն պարունակում ՀՀ-ի դեմ ագրեսիայի վերաբերյալ քաղաքական հստակ գնահատական և ագրեսիայի հետևանքները վերացնելու, ՀՀ տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործողությունների պլան: Բացի դրանից, ՀԱՊԿ մի շարք անդամ երկրների կողմից արտահայտված անորոշ դիրքորոշումների բերումով ՀԱՊԿ պատասխանատվության գոտին ճշգրտելու անհրաժեշտություն է առաջացել: Առանց նշված հարցերի ճշգրտման՝ ՀՀ-ն նպատակահարմար չի համարել հիշատակված փաստաթղթերի ստորագրումը, ինչի պատճառով որոշումները չեն ընդունվել:

ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի կապակցությամբ, ՀՀ-ի դիմումի հիման վրա, սեպտեմբերի 15-ին Ֆրանսիայի Հանրապետության (այսուհետ՝ Ֆրանսիա) նախագահությամբ տեղի է ունեցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ հանդիպում: Հանդիպման ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետություններն արձանագրել են ուժի կիրառման անթույլատրելիությունը, կարևորել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանումը՝ շեշտելով նաև ՀՀ տարածքում քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման փաստը:

2022 թվականի հոկտեմբերի 21-27-ը ՀՀ է ժամանել ԵԱՀԿ կարիքների գնահատման թիմը՝ սեպտեմբերի 13-ին սկսված ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանային հատվածներում և բնակավայրերում ստեղծված իրավիճակին ծանոթանալու համար:

2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի քառակողմ հանդիպմանը ձեռք բերված համաձայնության արդյունքում հոկտեմբերի 17-ին Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) խորհուրդն ընդունել է որոշում՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև միջազգային սահմանի երկայնքով ԵՄ դիտորդ-փորձագետներ տեղակայելու մասին: Առաքելության մանդատը ներառում էր իրավիճակի դիտորդություն Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանի երկայնքով՝ երկու երկրների միջև վստահության կառուցմանն աջակցելու և սահմանային հանձնաժողովներին ԵՄ առավել առարկայական աջակցությունն ապահովելու նպատակով: ԵՄ դիտորդական առաքելությունը 2022 թվականի դեկտեմբերի 19-ին ավարտել է իր մանդատը: ԵՄ խորհուրդը 2023 թվականի հունվարի 23-ին համաձայնություն է

տվել ՀՀ տարածքում երկու տարի ժամկետով քաղաքացիական նոր առաքելություն (EUMA) ստեղծելու առաջարկին: 2023 թվականի փետրվարի 20-ին առաքելությունն սկսել է իր աշխատանքը ՀՀ-ում:

Լաչինի միջանցքի փակումը և միջազգային արձագանքը

Ադրբեջանը, կոպտորեն խախտելով ՀՀ վարչապետի, ԱՀ նախագահի և ՌԴ նախագահի 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության պահանջները, 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ապօրինի արգելափակել է ԼՂ-ն ՀՀ-ին կապող Լաչինի միջանցքը՝ խափանելով միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների երթևեկությունը և շարժը՝ հարուցելով հումանիտար ճգնաժամ: 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Ադրբեջանը միտումնավոր խափանել է նաև ԼՂ-ին բնական գազի մատակարարումը, մի քանի օրից ԼՂ-ի գազամատակարարումը վերականգնվել է, ապա նորից խափանել: 2023 թվականի փետրվարի 20-ի դրությամբ Ադրբեջանը Լաչինի միջանցքի շրջափակումից ի վեր 10 անգամ ամբողջությամբ միտումնավոր խափանել է բնական գազի մատակարարումը ԼՂ: Ավելի քան 20 անգամ ԼՂ-ին մատակարարվող գազի ծավալը միտումնավոր նվազեցվել է 10-ից մինչև 90%-ով:

2023 թվականի հունվարի 9-ից Ադրբեջանը միտումնավոր խափանել է ՀՀ-ից էլեկտրական էներգիայի մատակարարումը ԼՂ: Բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարումների խափանման պատճառով ԼՂ կառավարությունն ստիպված էլեկտրաէներգիայի մատակարարման հովհարային անջատումներ է իրականացրել: Սննդի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների պակասուրդի պատճառով դրանց առևտուրը ԼՂ-ում կտրոնավորվել և սահմանափակվել է: Տևական ժամանակով փակվել են բուհերը, դպրոցներն ու մանկապարտեզները, ինչի պատճառով ավելի քան 30 հազար սովորող զրկվել է կրթության իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Լաչինի միջանցքի փակման հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական ծանր հետևանքները մեղմելու նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված հումանիտար ճգնաժամի կառավարման հարցում ԼՂ-ի ժողովրդին աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ:

ՀՀ կառավարությունը գործադրել է բոլոր անհրաժեշտ ջանքերն ստեղծված իրավիճակը միջազգային ուշադրության և գնահատականի արժանացնելու համար. ՀՀ-ի դիմումի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի է ունեցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ հանդիպում Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակի վերաբերյալ: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամների գերակշիռ մեծամասնության կողմից հնչել են հստակ կոչեր՝ Ադրբեջանի կողմից միջանցքի շրջափակումը դադարեցվելու և միջազգային կառույցների՝ ԼՂ մուտքն ապահովելու վերաբերյալ:

Տասնյակ երկրներ և կազմակերպություններ հասցեական դատապարտել են Լաչինի միջանցքի արգելափակումը և Ադրբեջանից պահանջել դադարեցնել այն: ՀՀ-ն ակտիվ ջանքեր է գործադրել և գործադրում ԼՂ և Լաչինի միջանցք ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի փաստահավաք առաքելություն ուղարկելու ուղղությամբ:

ՀՀ-ի կողմից ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան է ներկայացվել Լաչինի միջանցքի ապաշրջափակման ժամանակավոր միջոցներ կիրառելու պահանջ: Այդ կապակցությամբ 2023 թվականի փետրվարի 22-ին Միջազգային դատարանը հրապարակեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին իր որոշումները: Դատարանը բավարարեց Հայաստանի ժամանակավոր միջոց կիրառելու հիմնական պահանջը և պարտավորեցրեց Ադրբեջանին, մինչև Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործով վերջնական որոշման կայացումը, ձեռնարկել իր տրամադրության տակ առկա բոլոր միջոցները՝ երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը: Անդրադառնալով Հայաստանի դեմ Ադրբեջանի ներկայացրած ենթադրյալ ականապատման վերաբերյալ հակընդդեմ պահանջներին՝ Դատարանն ամբողջությամբ և միաձայն մերժեց դրանք:

Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթաց

Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացը տեղի է ունեցել հետևյալ հիմնական ուղղություններով՝ Հայաստան-Ադրբեջան խաղաղության և հարաբերությունների հաստատման պայմանագիր, ԼՂ հիմնախնդրի կարգավորում, տարածաշրջանի տրանսպորտային և տնտեսական կոմունիկացիաների ապաշրջափակում, սահմանազատում և անվտանգություն, հումանիտար հարցեր:

Այս հարցերի քննարկման համար ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել 3 եռակողմ հանդիպում Եվրոպական խորհրդի նախագահի միջնորդությամբ (2022 թվականի ապրիլի 6-ին, մայիսի 22-ին և օգոստոսի 31-ին՝ Բրյուսելում), 2 քառակողմ հանդիպում Եվրոպական խորհրդի նախագահի և Ֆրանսիայի նախագահի միջնորդությամբ (որոնցից մեկը՝ հեռավար, մյուսը՝ Պրահայում՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին) և 1 եռակողմ հանդիպում ՌԴ նախագահի միջնորդությամբ (2022 թվականի հոկտեմբերի 31-ին Սոչիում): 2023 թվականի փետրվարի 18-ին Մյունխենում ևս 1 եռակողմ հանդիպում է տեղի ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջնորդությամբ: ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը և Ադրբեջանի նախագահի արտաքին հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիևը ԱՄՆ և ԵՄ միջնորդությամբ հանդիպել են 4 անգամ, ՀՀ և Ադրբեջանի գլխավոր դատախազները ՌԴ միջնորդությամբ

հանդիպել են երկու անգամ, ՀՀ և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները ՌԴ, ԱՄՆ և այլ գործընկերների միջնորդությամբ հանդիպել են 6 անգամ:

Տեղի է ունեցել խաղաղության և հարաբերությունների հաստատման պայմանագրի վրա աշխատանքի երեք շրջափուլ, որի ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը փոխանակել են դիտարկումներ և առաջարկություններ: ՀՀ-ն իր դիտարկումներն ու առաջարկություններն ադրբեջանական կողմին է փոխանցել 2023 թվականի փետրվարի 14-ին:

ՀՀ-ի համար ընդունելի է այն մոտեցումը, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև պայմանագրի ստորագրումը կարող է առանձնացվել ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման գործընթացից՝ այն տրամաբանությամբ, որ Ստեփանակերտի և Բաքվի միջև քննարկումների միջազգային մեխանիզմ կձևավորվի: ՀՀ-ի համար էական է ԼՂ հայության անվտանգության և իրավունքների հասցեագրման երաշխավորված մեխանիզմների ձևավորումը, որը կունենա միջազգային տեսանելիություն և ներգրավվածություն:

Հայաստան-Ադրբեջան պայմանագրի համատեքստում ՀՀ կառավարության համար առանցքային են ՀՀ-ի 29 800 քառակուսի կիլոմետր տարածքի անվտանգության երաշխիքների ձևավորումը, պայմանագրի տեքստի շուրջ հնարավոր տարընթերցումների և վեճերի կարգավորման գործնական մեխանիզմի ձևավորումը:

2022 թվականին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորությամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև սահմանազատման և սահմանային անվտանգության հանձնաժողովը, որից հետո տարվա ընթացքում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի երեք համատեղ հանդիպում:

2023 թվականի փետրվարի 17-ին ՀՀ-ն դիվանագիտական խողովակներով Ադրբեջանին է փոխանցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի նիստերի ու համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման և անցկացման աշխատակարգի հերթական նախագիծը:

2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում և հոկտեմբերի 31-ին Սոչիում ձեռք բերված պայմանավորվածությունների ուժով Հայաստանն ու Ադրբեջանը հաստատել են իրենց հանձնառությունը՝ ճանաչելու միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը՝ ՄԱԿ-ի կանոնադրության և 1991

թվականի Ալմա Աթայի հռչակագրի դրույթների համաձայն: Սոչիի հայտարարությամբ կողմերը հստակ պայմանավորվել են զերծ մնալ ուժի կիրառումից կամ դրա կիրառման սպառնալիքից, քննարկել և լուծել բոլոր խնդրահարույց հարցերը՝ բացառապես ինքնիշխանության, տարածքային ամբողջականության սկզբունքները հարգելով:

2022 թվականի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ-ի, ՌԴ-ի և Ադրբեջանի փոխվարչապետերի համանախագահությամբ տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման եռակողմ աշխատանքային խմբի երկու նիստ (ստեղծման օրվանից ի վեր տեղի է ունեցել 11 նիստ): Ապաշրջափակման թեման պարբերաբար քննարկվել է նաև այլ ձևաչափերում: ՀՀ-ն հետաքրքրված է տարածաշրջանի տնտեսական և տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակմամբ և պատրաստ է օր առաջ իրագործել այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Հայկական խաչմերուկ» նախագծի շրջանակներում:

Բեռների, ապրանքների և քաղաքացիների շարժի նոր հնարավորություններն ակնհայտորեն կմեծացնեն «Հայկական խաչմերուկի» գրավչությունը միջազգային և տարածաշրջանային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար՝ էականորեն ընդգծելով Հայաստանի չիրացված լոգիստիկ դերը տարածաշրջանում, ինչն իր հերթին նաև հավելյալ անվտանգության և կայունության երաշխիքներ կապահովի:

ՀՀ վարչապետի որոշմամբ 2022 թվականի հունվարի 14-ին տրանսպորտային ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որին ներգրավվել են նաև միջազգային բարձրակարգ փորձագետներ:

Չհաստատագրված են մնում նաև Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում առկա մի շարք հումանիտար հարցերի շուրջ պայմանավորվածություններ: Ի հեճուկս 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետի՝ Ադրբեջանը մինչև օրս շարունակում է 33 գերեվարված հայ քաղաքացու պահել անազատության մեջ: ՀՀ-ն բոլոր միջազգային ատյաններում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, Արդարադատության միջազգային դատարանում, հետապնդում է գերեվարված քաղաքացիների և նրանց վերադարձի խնդիրը: 2022 թվականի ընթացքում հաջողվել է ապահովել 31 գերեվարված հայ քաղաքացու վերադարձը:

Հայաստանի և Ադրբեջանի հարաբերություններում կարևոր է մնում նաև անհետ կորած անձանց հարցը: Հայկական կողմից 975 քաղաքացու գտնվելու վայրն անհայտ է համարվում, որոնցից 777-ը՝ Ղարաբաղյան առաջին պատերազմի, 196-ը՝ 44-օրյա պատերազմի, 2-ը՝ սեպտեմբերյան ագրեսիայի հետևանքով: ՀՀ-ն միջազգային դատական և դիվանագիտական ատյաններում հետևողականորեն բարձրացնում է բռնի անհետացումների, ինչպես նաև գերիների խոշտանգման և զոհված զինծառայողների դիակների խոշտանգման և անարգման հարցերը:

2022 թվականին ՀՀ-ն Ադրբեջանին է վերադարձրել ենթադրաբար անհետ կորած համարվող ադրբեջանցիների 35 ոսկոր և մարմինների գտնվելու հնարավոր վայրերի երեք քարտեզ:

2022 թվականի ընթացքում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի 4 գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝

1. 44-օրյա պատերազմի ընթացքում և դրան հաջորդող երկու ամսվա ընթացքում կատարված մարդու իրավունքների զանգվածային խախտումների, ներառյալ կյանքի իրավունքի, խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքի, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի, սեփականության իրավունքի և մի շարք այլ իրավունքների խախտումների վերաբերյալ,
2. գերեվարված անձանց նկատմամբ տեղի ունեցած ապօրինի դատավարությունների հետևանքով իրավունքների խախտումների, ներառյալ ազատությունից ապօրինի զրկելու վերաբերյալ,
3. Հայաստանի ինքնիշխան տարածքում Ադրբեջանի զինված ուժերի կողմից օկուպացիայի հետևանքով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ,
4. Լեռնային Ղարաբաղում՝ Փարուխի և Քարագլխի դեպքերի և Լաչինի միջանցքում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ:

2022 թվականի ընթացքում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան է ներկայացրել գանգատ՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի կիրառման վերաբերյալ: Գանգատը վերաբերում է ռասայական խտրականության բոլոր դրսևորումներին՝ ատելության և հակահայկականության քարոզ, ներառյալ պաշտոնատար անձանց կողմից, հայկական մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանության հարց, պատմության կեղծում, կրթական հաստատություններում հակահայկականության հետևողական քարոզ, էթնիկ զտում, էթնիկ ատելության հիմքով խոշտանգումներ և վատ վերաբերմունքի դեպքեր, էթնիկ ատելության հիմքով սպանություններ, գլխատումներ և շատ այլ խախտումներ, որոնց կատարման մոտիվն էթնիկ հայերի նկատմամբ ատելությունն է: Սկզբնական հայցը ներկայացվել էր 2021 թվականի սեպտեմբերի 16-ին, ամբողջական հայցը ներկայացվել է 2023 թվականի հունվարի 23-ին:

Դատական ատյաններում բոլոր միջպետական գանգատներով Հայաստանի կողմից բարձրացվել են և բարձրացվելու են գույքային և ոչ գույքային վնասների հատուցման պահանջներ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականին գործուն քայլեր են արվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ հարաբերությունների խորացման ուղղությամբ: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել ՀՀ հարևանների՝ Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ), Թուրքիայի Հանրապետության (այսուհետ՝ Թուրքիա), ինչպես նաև ԵՄ և ԵՄ անդամ պետությունների, Հնդկաստանի Հանրապետության (այսուհետ՝ Հնդկաստան) և բոլոր այլ գործընկեր պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստան-ՌԴ հարաբերություններ

ՀՀ-ն շարունակել է ընդլայնել համագործակցությունը ՌԴ-ի հետ քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգային և այլ ուղղություններով: Տեղի են ունեցել դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներ:

2022 թվականի ապրիլի 19-20-ը կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը ՌԴ: Այցի ընթացքում ստորագրվել են հետևյալ երկկողմ փաստաթղթերը՝
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև սոցիալ-աշխատանքային ոլորտում համագործակցության մասին» հուշագիր,

- «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության և Ռուսաստանի Դաշնության դատական կարգադրիչների դաշնային ծառայության միջև 2022-2023 թթ.» համագործակցության ծրագիր,

- Էներգետիկական և ոչ էներգետիկական նախագծերի բնագավառում հայ-ռուսական համագործակցության համալիր ծրագիր,

- «Հայաստանի Հանրապետության սննդի անվտանգության տեսչական մարմնի և Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության միջև՝ բույսերի կարանտինի ոլորտում տեղեկատվական համակարգերի ինտեգրմանն անցնելու վերաբերյալ» արձանագրություն,

- «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2022-2025 թթ. մշակույթի ոլորտում համագործակցության մասին» ծրագիր,

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության միջև 2022-2023 թթ. համագործակցության ծրագիր,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր,

2022 թվականի հուլիսի 18-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուս-գազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը 2022 թվականի նոյեմբերին ՀԱՊԿ Հավա-քական անվտանգության խորհրդի նիստի առթիվ այցելել է ՀՀ: 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահի 6 երկկողմ հանդիպում և 20 հեռախոսազրույց:

ՀՀ վարչապետի և ՌԴ նախարարների խորհրդի նախագահ Միխայիլ Միշուստինի միջև 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել 3 երկկողմ հանդիպում և 2 հեռախոսազրույց, 2023 թվականի սկզբին՝ ևս 1 հանդիպում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՌԴ իր պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ է ունեցել նաև ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի և ՌԴ Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի հետ:

2022 թվականի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է նաև Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին:

2022 թվականի սեպտեմբերի 19-ին Երևանում կայացել են «Հայ-ռուսական համագործակցություն. նոր մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով Հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովը և Հայ-ռուսական գործարար երկխոսությունը, ինչից հետո ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկն ստորագրել են ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2022-2025 թվականների տնտեսական համագործակցության ծրագիրը:

2022 թվականի դեկտեմբերի 22-23-ը երկու երկրների փոխվարչապետերի համանախագահությամբ Մոսկվայում կայացել է ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 21-րդ նիստը:

Հաշվետու տարում տեղի են ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի 8 հանդիպում և 10 հեռախոսազրույց:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանն աշխատանքային այցեր են ունեցել ՌԴ: ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սերգեյ Նարիշկինը, թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցությունների նախարար Մաքսուդ Շադաևը, սպորտի նախարար Օլեգ Մատիցինը, տրանսպորտի նախարար Վիտալի Սավելևը, առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոն այց են կատարել ՀՀ:

ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 5 մլրդ ԱՄՆ դոլար, 2021 թվականի շուրջ 2,6 մլրդ ԱՄՆ դոլարի համեմատ՝ գրանցելով 91,7%-ով աճ:

Հայաստան-ԱՄՆ հարաբերություններ

Շարունակվել է ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության զարգացումը ժողովրդավարության, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, ոստիկանության, դատաիրավական համակարգի բարեփոխումների և այլ ուղղություններով: Մայիսի 2-3-ը Վաշինգտոնում կայացել է Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության հերթական նիստը: Ամրապնդվել է տնտեսական և քաղաքական ոլորտներում երկխոսությունը:

2022 թվականի հունիսի 29-ին ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը և ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ղեկավար Ջոն Ալելոն ստորագրել են ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև զարգացմանն ուղղված համագործակցության 5-ամյա ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ-ին 120 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային աջակցություն կտրամադրվի՝ ժողովրդավարության ամրապնդման և տնտեսական կայունության ապահովման նպատակով:

Հայաստան է ժամանել ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի գլխավորած պատվիրակությունը, որին ընդունել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Աշխատանքային այցով ՀՀ է ժամանել նաև ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Ուիլյամ Բըրնսը:

2022 թվականի ընթացքում կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի 1 հանդիպում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակում և 9 հեռախոսազրույց:

Մայիսի 2-ին աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Հանդիպման ավարտին ստորագրվել է ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև «Քաղաքացիական միջուկային էներգիայի ոլորտում համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր:

Տարվա ընթացքում կայացել է նաև ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցն ԱՄՆ:

ՀՀ-ԱՄՆ առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 465 մլն ԱՄՆ դոլար, 2021 թվականի՝ շուրջ 207 մլն ԱՄՆ դոլարի համեմատ՝ գրանցելով 2,2 անգամ աճ:

Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններ

Ֆրանսիայի հետ ընդլայնվել են առանձնաշնորհյալ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, անվտանգային և այլ ոլորտներում:

2022 թվականի մարտի 9-ին Փարիզում անցկացվել է «Հավակնություններ՝ Հայաստան-Ֆրանսիա» խորագրով հայ-ֆրանսիական համաժողովը՝ նվիրված ՀՀ-ի և Ֆրանսիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Համաժողովի ամփոփիչ նիստին մասնակցել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Համաժողովին մասնակցել են ՀՀ-ի և Ֆրանսիայի կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղի հայ համայնքի մի շարք ներկայացուցիչներ, Ֆրանսիայի գործարար համայնքի ներկայացուցիչներ:

2022 թվականի սեպտեմբերի 25-26-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այց է կատարել Ֆրանսիա, որի շրջանակներում Ելիսեյան պալատում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և Ֆրանսիայի նախագահի հանդիպումը: Ընդհանուր առմամբ 2022 թվականին կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի 3 հանդիպում և 3 հեռախոսազրույց, ինչպես նաև կարճատև 1 հանդիպում՝ 2023 թվականի փետրվարին կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում:

2023 թվականի հունվարի 13-ին Հայաստան է այցելել Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Յաել Բրաուն-Պիվեն, որին ընդունել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունների, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի աշխատանքային այցերը Ֆրանսիա:

Շարունակվել են աշխատանքները Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026 թվականների ճանապարհային քարտեզի դրույթների իրագործման ուղղությամբ:

ՀՀ-ի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջև պահպանվել է համագործակցության հագեցած օրակարգը: Նոյեմբերի 19-20-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Թունիսի Հանրապետության (այսուհետ՝ Թունիս) Ջերբա քաղաքում մասնակցել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 18-րդ գագաթնաժողովին, որի ընթացքում ՀՀ-ն Թունիսին է փոխանցել Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախագահությունը, որն ստանձնել էր 2018 թվականի հոկտեմբերին:

ՀՀ-Ֆրանսիա առևտրաշրջանառությունը 2022 թվականին կազմել է 122,5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով շուրջ 30%-ով:

Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններ

Էականորեն խորացել է ՀՀ-ԵՄ քաղաքական երկխոսությունը, այդ թվում՝ տարածաշրջանային անվտանգության հարցերով:

Շարունակվել են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների իրականացումը և այդ գործընթացի համակարգումը՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի նախագահությամբ գործող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

ԵՄ տնտեսական և ներդրումային պլանի շրջանակում նախանշված ուղենիշների ներքո 2022 թվականին իրականացվել են զգալի աշխատանքներ, մասնավորապես եվրոպական ֆինանսական կառույցների հետ հաստատվել են 195,7 մլն եվրո ընդհանուր արժողությամբ ծրագրեր, հաստատման փուլում են գտնվում 86,3 մլն եվրո ընդհանուր արժողությամբ ծրագրեր, ինչպես նաև ծավալուն աշխատանքներ են իրականացվել շուրջ 900 մլն եվրո գնահատված՝ Հյուսիս-հարավ մայրուղու Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի (ներառյալ Բարգուշատի թունելը) ծրագրի նախապատրաստման նպատակով:

ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակներում հաստատվել են նաև 10 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհային ֆինանսավորման համաձայնագիր՝ ուղղված ոստիկանության բարեփոխումներին, միգրացիայի կառավարմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև 5,2 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհային ֆինանսավորման համաձայնագիր՝ ուղղված ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը:

2022 թվականի հոկտեմբերին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին,

որին մասնակցում էին չորս տասնյակից ավելի պետությունների առաջնորդներ՝ ԵՄ անդամ, ինչպես նաև ԵՄ գործընկեր երկրների ղեկավարներ:

2022 թվականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հինգ հանդիպում և հինգ հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

2023 թվականի փետրվարի 17-ին Մյունխենում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լյաենի հանդիպումը:

2022 թվականի արդյունքներով ԵՄ երկրների հետ Հայաստանի ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համեմատ աճել է 43,8%-ով՝ հասնելով ռեկորդային՝ շուրջ 2 մլրդ եվրոյի, ընդ որում ՀՀ–ից արտահանումը ԵՄ երկրներ նախորդ տարվա համեմատ աճել է 17,8%-ով:

Հայաստան-Վրաստան հարաբերություններ

Հետևողականորեն զարգանում են Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունները, ընդլայնվում է երկու երկրների համագործակցությունը գրեթե բոլոր ոլորտներում, այդ թվում՝ բեռնափոխադրումների և քաղաքացիների անխափան տեղաշարժն ապահովելու նպատակով:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի գլխավորությամբ 2023 թվականի հունվարի 12-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ-ի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը, որի ընթացքում ստորագրվել է նաև «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագիր, ինչը ենթադրում է, որ ըստ որի ՀՀ-ի և Վրաստանի քաղաքացիները երկու երկրներ կկարողանան այցելել նաև նույնականացման քարտերով:

2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի 4 հանդիպում և 5 հեռախոսազրույց:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թվականի ապրիլի 5-ին ընդունել է երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակությանը:

Տարվա ընթացքում ՀՀ են այցելել նաև Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին, գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն, արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն, ներքին գործերի նախարար, ԱԽ քարտուղար Վախթանգ Գոմելաուրին:

2022 թվականին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Վրաստան: Վրաստան այց են ունեցել նաև ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը, ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

Ավարտվել և շահագործման է հանձնվել ՀՀ-Վրաստան սահմանային «Բարեկամություն» կամուրջը, որը կառուցվել է ՀՀ-ի և Վրաստանի կառավարությունների համատեղ ջանքերով և ֆինանսավորմամբ:

ՀՀ-Վրաստան առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 879 մլն ԱՄՆ դոլար (ներմուծման ցուցանիշներն ըստ արտահանող երկրի) 2021 թվականի՝ շուրջ 422 մլն ԱՄՆ դոլարի համեմատ՝ աճելով շուրջ 2 անգամ:

Հայաստան-Իրան հարաբերություններ

Շարունակվել է բարձր մակարդակի երկխոսությունը ԻԻՀ-ի հետ:

Նոյեմբերի 1-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև աշխատանքային այց է կատարել ԻԻՀ, որի ընթացքում ստորագրվել է «Բնական գազի ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսիի 2 հանդիպում և 4 հեռախոսազրույց:

2022 թվականի մայիսի 10-11-ը ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Ալի Աքբար Մեհրաբիանի համանախագահությամբ Երևանում կայացել է ՀՀ և ԻԻՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստը, ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: 2023 թվականի հունվարի 30-31-ը Թեհրանում կայացել է ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի պայմանավորվածությունները մշտադիտարկող հանձնախմբի նիստը:

2022 թվականի հոկտեմբերին Կապանում բացվել է ԻԻՀ-ի գլխավոր հյուպատոսություն:

Իրանական կողմից 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել հետևյալ այցերը ՀՀ՝ ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանի, արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիան, արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարար Սեյեդ Ռեզա Ֆաթեմի Ամին, տնտեսական հարցերի և ֆինանսների նախարար Սեյեդ Էհսան Խանդուզի:

Նույն ժամանակահատվածում ԻԻՀ են այցելել ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

ՀՀ-ԻԻՀ առևտրաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 711 մլն ԱՄՆ դոլար, 2021 թվականի՝ շուրջ 503,5 մլն ԱՄՆ դոլարի համեմատ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով շուրջ 42%-ով:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններ

2022 թվականի հուլիսի 11-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ, որի ընթացքում ՀՀ վարչապետը շնորհավորել է Թուրքիայի նախագահին Կուրբան Բայրամի առթիվ, իսկ Թուրքիայի նախագահը շնորհավորել է ՀՀ վարչապետին Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի առթիվ: Երկրների ղեկավարներն ընդգծել են իրենց երկրների միջև հարաբերությունների կարգավորման երկկողմ գործընթացի կարևորությունը:

Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը:

2023 թվականի փետրվարի 6-ին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի կապակցությամբ 2023 թվականի փետրվարի 7-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: ՀՀ վարչապետը ցավակցություն ու զորակցություն է հայտնել Թուրքիայի նախագահին և ժողովրդին՝ երկրի հարավարևելյան շրջաններում տեղի ունեցած հուժկու երկրաշարժի հետևանքով բազմաթիվ զոհերի կապակցությամբ:

ՀՀ վարչապետի որոշմամբ փետրվարի 8-ին ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմի 27 անդամ և ՀՀ արտաքին գործերի նախարարության մեկ աշխատակից գործուղվել են Թուրքիայի Ադիյաման քաղաք և մասնակցել երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին:

2023 թվականի փետրվարի 11-ին 1993 թվականից փակված Մարգարայի կամրջով 100 տոննա մարդասիրական բեռով 5 հայկական բեռնատար հատել է հայ-թուրքական սահմանը՝ ուղևորվելով աղետի գոտի՝ Ադիյաման:

2023 թվականի փետրվարի 14-ին ՀՀ-ն 2 բեռնատարով (12 տոննա) երկրորդ մարդասիրական օգնությունն է ուղարկել Թուրքիա՝ կրկին Մարգարայի կամրջով:

2023 թվականի փետրվարի 15-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Թուրքիա: Պատվիրակության կազմում է եղել նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցություններում հատուկ ներկայացուցիչ, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը: Անկարայի օդանավակայանում հայկական պատվիրակությանը դիմավորել է Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչը: Այնուհետև տեղի է ունեցել ՀՀ-ի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների առանձնազրույցը, որին հաջորդել է ընդլայնված կազմով հանդիպումը:

Նույն օրը ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն այցելել է երկրաշարժից տուժած Ադիյաման քաղաք, որտեղ հանդիպել է փետրվարի 8-ից որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնող ՀՀ փրկարարական խմբին, ինչպես նաև ծանոթացել ՀՀ-ի կողմից նախօրեին ուղարկված հումանիտար օգնության տեղաբաշխման ընթացքին:

ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկա-րարական թիմը փետրվարի 16-ին Մարգարա-Ալիջան սահմանակետով վերադարձել է ՀՀ:

2022 թվականի մարտի 12-ին Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մևլյութ Չավուշօղլուի հանդիպումը, որի ընթացքում երկու երկրների արտաքին գործերի նախարարները վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ իրականացնելու ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների լիարժեք կարգավորմանն ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանն ուղղված գործընթացն առանց նախապայմանների և աջակցություն են հայտնել այս գործընթացում երկու երկրների հատուկ ներկայացուցիչների աշխատանքներին:

2022 թվականի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ-ի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների 4 հանդիպում:

ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում 2022 թվականի փետրվարից վերականգնվել է երկու երկրների միջև ուղիղ ավիահաղորդակցությունը: Թուրքիան 2023 թվականի հունվարի 1-ից հանել է նաև ՀՀ-ի հետ ուղիղ օդային բեռնափոխադրումների արգելքը:

2022 թվականի հուլիսի 1-ին ՀՀ-ի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչները Վիեննայում պայմանավորվածություն են ձեռք բերել հնարավոր ամենասեղմ ժամկետներում ապահովել ՀՀ-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարա-վորություն ՀՀ և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար և որոշել են սկսել այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները: Այս պայմանավորվածության իրականացման շրջանակներում նոյեմբեր-դեկտեմբեր

ամիսներին տեղի է ունեցել 2 երկրների միջգերատեսչական մասնագիտական խմբերի 2 հանդիպում:

Հայաստան-Հնդկաստան հարաբերություններ

2022 թվականի ապրիլի 25-27-ը կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակության այցը Հնդկաստան՝ «Ռայսինայի երկխոսություն» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով: Այցի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հետ: Պատվիրակության մաս է կազմել նաև գործարար բնագավառի 30-ից ավելի ներկայացուցիչ:

2022 թվականի հուլիսի 4-ին Երևանում տեղի է ունեցել Առևտրի, տնտեսական, տեխնոլոգիաների, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստը՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության Արևմուտքի հարցերով քարտուղար (նախարարի տեղակալ) Սանջեյ Վերմայի համանախագահությամբ, որի ընթացքում կողմերը մանրամասնորեն քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության հետագա խորացման ուղիները և պայմանավորվածություններ ձեռք բերել հետագա աշխատանքների շուրջ: Ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ «Հնդկաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Հնդկաստանի կողմից համայնքների զարգացման՝ բարձր արդյունավետության ծրագրերի իրականացման համար տրամադրվելիք դրամաշնորհային աջակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի աշխատանքային այցերը Հնդկաստան:

Հայաստան-Չինաստան

Շարունակվել է հարաբերությունների զարգացումը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (այսուհետ՝ Չինաստան) հետ: Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառության ծավալները և աճը վկայում են երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների կայուն և դինամիկ զարգացման մասին:

2022 թվականի արդյունքներով առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 1,8 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2021 թվականի շուրջ 1,3 մլրդ ԱՄՆ դոլար ծավալը գերազանցելով 39,4%-ով:

Համագործակցությունը գործընկեր այլ պետությունների հետ

2022 թվականին ՀՀ-ն նշել է մի շարք բարեկամ պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը. այդ կապակցությամբ իրականացվել են համատեղ մի շարք միջոցառումներ:

ՀՀ կառավարությունը շարունակել է ԵՄ անդամ պետությունների, Ճապոնիայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքները:

ՀՀ-ն ընդգրկվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության բարեփոխումների ռազմավարության («BMZ 2030 reform strategy») շրջանակում՝ որպես երկկողմ և տրանսֆորմացիոն գործընկեր: 2022 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար Սվենյա Շուլցեն այցելել է Հայաստան, 2022 թվականի հուլիսի 1-ին նրան ընդունել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թվականի մայիսի 10-ին երկօրյա պաշտոնական այցով մեկնել է Նիդերլանդների Թագավորություն և հանդիպումներ է ունեցել Նիդերլանդների Թագավորության վարչապետ Մարկ Ռութեի, Սենատի նախագահ Յան Անտոնի Բրաունի և Ներկայացուցիչների պալատի նախագահ Վերա Բերգկամպի հետ:

2022 թվականի սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Սլովենիայի նախագահ Բորութ Պահորի և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության վարչապետ Քսավյե Բեթթելի հետ:

2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակում տեղի են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումները Հունաստանի Հանրապետության վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Օլաֆ Շոլցի հետ:

2022 թվականի նոյեմբերի 20-ին Թունիսում անցկացված Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 18-րդ գագաթնաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի և Չեռնոգորիայի վարչապետ Դրիտան Աբազովիչի հետ:

2023 թվականի փետրվարի 17-19-ը կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Իրաքի Հանրապետության վարչապետ Մոհամմեդ Շիա Սուդանի,

Իրաքյան Քուրդիստանի նախագահ Նեչիրվան Բարզանիի, Խորվաթիայի վարչապետ Անդրեյ Պլենկովիչի, Լատվիայի Հանրապետության նախագահ Էգիլս Լևիցի և Լիտվայի Հանրապետության վարչապետ Ինգրիդա Շիմոնիտեի հետ:

2022 թվականի հունիսի 13-14-ը Կատարի Պետություն կատարած այցի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Կատարի Պետության վարչապետ, ներքին գործերի նախարար Շեյխ Խալիդ բին Խալիֆա բին Աբդուլազիզ Թանիի և փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Շեյխ Մուհամմեդ Բին Աբդուլ Ռահման Ալ-Թանիի հետ և Հայր Էմիր Համադ բին Խալիֆա Ալ Թանիի հետ: Այցի շրջանակներում ստորագրվել է 7 փաստաթուղթ, մասնավորապես արտաքին գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդակցությունների անցկացման, կրթության, բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների, առողջապահության, զբոսաշրջության և գործարար միջոցառումների բնագավառներում համագործակցության, երկու պետությունների պետական համալսարանների փոխգործակցության, Երևանը և Դոհան քույր քաղաքներ հռչակելու, ինչպես նաև «Արմենպրես» լրատվական գործակալության և Կատարի ազգային լրատվական գործակալության միջև լրատվության փոխանակման մասին փաստաթղթերը:

2022 թվականի մայիսի 19-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Լիտվայի Հանրապետության նախագահ Գիտանաս Նաուսեդան:

2022 թվականի մայիսի 26-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Չեռնոգորիայի նախագահ Միլո Ջուկանովիչը:

2023 թվականի հունվարի 29-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ-Սիսին:

2022 թվականի ընթացքում Հայաստան են ժամանել Ավստրիայի Հանրապետության եվրոպական և միջազգային հարցերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալլենբերգը, Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Զբիգնև Ռաուն, Իտալիայի արտաքին գործերի նախարար Լուիջի Դի Մայոն, Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Նիկոս Դենդիասը, Խորվաթիայի արտաքին գործերի նախարար Գորդան Գրլիչ Ռադման, Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարար Աննիկեն Հյութֆիլդտը և Ռուանդայի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Վինսենտ Բիրուտան, իսկ 2023 թվականի սկզբին Հայաստան են այցելել Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության արտաքին և եվրոպական գործերի նախարար Ժան Ասելբորնը և Խորվաթիայի արտաքին գործերի նախարար Գորդան Գրլիչ Ռադման:

Եվրասիական տնտեսական միություն

ՀՀ-ն շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ ԵԱՏՄ) ընթացող գործընթացներում:

2022 թվականին տեղի է ունեցել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2 նիստ, որոնց ընթացքում ընդունվել են 26 որոշում և 5 կարգադրություն՝ ուղղված ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրման զարգացմանը և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը:

2022 թվականի հոկտեմբերի 20-21-ը Երևանում կայացել է Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը՝ ԵԱՏՄ անդամ երկրների կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ:

2022 թվականին կայացած Եվրասիական միջկառավարական նիստերի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևի և Բելառուսի Հանրապետության վարչապետ Ռոման Գոլովչենկոյի հետ:

2022 թվականի ընթացքում մասնավորապես՝

- հաստատվել է «ԵԱՏՄ տարածքում արտադրանքը որպես օրգանական ճանաչելու ընթացակարգի մասին» համաձայնագիրը, որը հայ ֆերմերների համար հնարավորություն կընձեռի ստանալու օրգանական արտադրանքի վկայական և անարգել արտահանելու օրգանական գյուղմթերքը ԵԱՏՄ ընդհանուր շուկա,
- «ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական կոոպերացիայի ֆինանսավորման աղբյուրների և մեխանիզմի մասին» որոշմամբ հնարավորություն է ընձեռվել սուբսիդավորելու արդյունաբերության ոլորտում կոոպերացիոն նախագծերի իրականացման նպատակով ստացվելիք վարկերի և փոխառությունների տոկոսադրույքները՝ ամբողջությամբ,
- «Քաղաքացիական ավիաշինություն» նոր տեխնոլոգիական հարթակը հնարավորություն է ընձեռում զարգացնելու անօդաչու թռչող սարքերի ոլորտում ունեցած հայկական մշակումները՝ ապահովելով նաև դրանց հնարավոր կոմերցիոն կիրառումը կոոպերացիոն ծրագրերի շրջանակներում,
- «ԵԱՏՄ անդամ պետություններում քաղաքացիական ավիաշինության ոլորտում արդյունաբերական համագործակցության ընդլայնման 2022-2023 թվականների միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզի) մասին» որոշմամբ հնարավորություն է ընձեռվում ՀՀ ավիացիոն ոլորտի ընկերություններին ներգրավվելու կոոպերացիոն շղթայի մեջ՝ ավիացիոն պահեստամասերի արտադրության և հավաքման գործարանների տեղայնացման միջոցով,
- պարենային անվտանգության և տնտեսության կայունացման ապահովման նպատակով «Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» որոշմամբ ՀՀ-ն ստացել է սակագնային արտոնություններ մի շարք ապրանքատեսակների մասով,
- «Առանձին գյուղատնտեսական ապրանքների 2022-2023 թթ. պահանջարկի և առաջարկի համատեղ ինդիկատիվ հավասարակշիռների մասին» որոշմամբ ՀՀ-ի համար երաշխավորվել է ռազմավարական կարևորություն ունեցող պարենի ներմուծումը ՌԴ-ից և ԵԱՏՄ այլ երկրներից՝ պարենային անվտանգությունը լիարժեք ապահովելու նպատակով,

• «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանվող և ՀՀ տարածք երրորդ երկրներից ներմուծվող թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին» որոշմամբ ՀՀ-ի համար նախատեսվել է ոչ սակագնային քվոտա,

• ՀՀ-ի նախաձեռնությամբ որոշում է կայացվել ներմուծվող ավտոմեքենաների համապատասխանության գնահատման և տիպի հաստատման սերտիֆիկատների ժամկետների երկարացում և հեշտացված կարգով տիպի հաստատման ընթացակարգի կիրառում, որը հնարավորություն է տալիս օտարերկրյա մեքենա արտադրող ընկերությունների հայաստանյան պաշտոնական ներկայացուցչություններին առանց որևէ խոչընդոտի շարունակելու իրենց գործունեությունը:

ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ-ի առևտրաշրջանառությունը 2022 թվականին կազմել է շուրջ 5,3 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 93%-ով:

Բազմակողմ համագործակցություն

Քայլեր են ձեռնարկվել ՀԱՊԿ-ում ՀՀ նախագահության առաջնահերթությունների առաջմղման ուղղությամբ: Նախագահության շրջանակներում ՀՀ-ում անցկացվել են միջոցառումներ, այդ թվում՝ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստը: Հարկ է նշել, որ ՀՀ-ի նախագահության շրջանակներում իրականացվել է ՀԱՊԿ-ի օպերատիվ արձագանքը Ղազախստանի նախագահի՝ 2022 թվականի հունվարին Ղազախստանում օրինականության և կարգուկանոնի վերականգնման հարցում աջակցելու դիմումին ի պատասխան:

• Շարունակվել է ԵԱՀԿ շրջանակներում ՀՀ անվտանգային խնդիրների հասցեագրման գործընթացը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2023 թվականի փետրվարի 17-ին Մյունխենում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Շմիդի հետ: 2022 թվականի ընթացքում ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի հետ 2 հանդիպում է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

• Հաստատվել է ՀՀ-ՆԱՏՕ Պլանավորման և վերանայման փաստաթուղթը՝ համագործակցության 27 նպատակով, որը հնարավորություններ է ստեղծել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով համագործակցության զարգացման համար: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակում, հանդիպում է ունեցել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը 2022 թվականի մարտի 17-ին հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի առաջին տեղակալ Միրչա Ջոանայի և 2023 թվականի մարտի 17-ին՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Հոկտեմբերի 3-ին Բրյուսելում ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է ՆԱՏՕ-ում անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների տեղակալների կոմիտեի (DPRC) անդամների հետ:

- ՀՀ-ն շարունակել է աջակցություն ցուցաբերել ցեղասպանության և մարդկության դեմ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման միջազգային օրակարգին: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 49-րդ նստաշրջանի ընթացքում կոնսենսուսով ընդունվել է ՀՀ կողմից ներկայացված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը, որը համահեղինակել է 65 երկիր: 2022 թվականի դեկտեմբերի 12-13-ը տեղի է ունեցել «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» չորրորդ գլոբալ ֆորումը՝ նվիրված ցեղասպանությունների կանխարգելմանը նոր տեխնոլոգիաների կիրառման պայմաններում:

ՀՀ-ի զարգացման գործընկերների հետ համագործակցություն

- Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) հետ բարեփոխումների օրակարգը զարգացնելու, 2019 թվականին մեկնարկած եռամյա Պահուստային ծրագրով իրականացված միջոցառումների շարունակականությունն ապահովելու նպատակով ԱՄՀ-ի գործընկերների հետ 2022 թվականի ընթացքում մշակվել և ստորագրվել է եռամյա նոր «Stand-by» ծրագիրը (171,1 մլն ԱՄՆ դոլարի):
- Համաշխարհային բանկի հետ հաշվետու ժամանակահատվածում ստորագրվել են «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» (22,6 մլն եվրոյի) և «Պետական հատվածի արդիականացման IV ծրագիր» (26,5 մլն եվրոյի) համաձայնագրերը: Մեկնարկել են Համաշխարհային բանկի հետ «Զարգացման քաղաքականության գործառնություններ» 100 մլն ԱՄՆ դոլար գումարի բյուջետային աջակցության ծրագրի մշակման և դրանով նախատեսված գործողությունների իրականացման աշխատանքները:
- Ասիական զարգացման բանկի և Զարգացման ֆրանսիական գործակալության հետ համատեղ հաստատվել է Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման բյուջետային աջակցության ծրագիրը, որը բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր լինելուց բացի, ուղղված է նաև միջնաժամկետում բարեփոխումների իրականացմանը: Ծրագրի ներքո Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրվող բյուջետային աջակցության գումարը կազմում է 100 մլն ԱՄՆ դոլար, իսկ Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից տրամադրվող բյուջետային աջակցության գումարը կազմում է 100 մլն եվրո:
- 2022 թվականի ընթացքում Միջազգային ֆինանսական կորպորացիան ՀՀ-ում մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ ստորագրել է շուրջ 80 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր: Նույն ժամանակահատվածում Եվրասիական զարգացման բանկը ՀՀ-ում մասնավոր հատվածի հետ ստորագրել է շուրջ 95 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրեր:

Սփյուռքի հետ կապեր

- Հայրենադարձության և ինտեգրման տարբեր հարցերով Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակն սպասարկել է ավելի քան 8000 դիմում:
- 2022 թվականի հոկտեմբերի 28-31-ը Երևանում անցկացվել է Համաշխարհային հայկական գագաթնաժողովը, որին մասնակցել է մոտ 600

անձ՝ աշխարհի 50 երկրից: Գագաթնաժողովին ելույթ է ունեցել 120 բանախոս՝ 15 երկրից:

• «ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ և Արցախի պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2021-2022 թվականներին սփյուռքահայ 50 մասնագետ ներգրավվել է ՀՀ և ԼՂ պետական կառավարման համակարգի 26 կառույցում: ՀՀ-ում մնացած ծրագրի շրջանավարտների մոտ 80%-ն աշխատանքի է անցել: 68%-ը հայրենադարձվել է՝ ակնկալվող 35%-ի փոխարեն: Միջոցառման մասնակիցները մշակել են 10 նոր ծրագիր: «ԻԳործ» ծրագիրը ներառված է ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության՝ հայրենադարձությանը նպաստող լավագույն փորձերի շտեմարանում:

• 2022-2023 թվականների ծրագրի շրջանակներում ՀՀ և ԼՂ պետական կառավարման համակարգի 24 կառույցում ներգրավվել է սփյուռքահայ բարձրակարգ 50 մասնագետ:

• «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների համար ուսումնաճանաչողական ծրագիր, որը ներառել է 13-օրյա ճամբարային ծրագիր, որին 4 փուլով մասնակցել է 422 անձ՝ 18 երկրից:

• 2022 թվականին շարունակվել են սփյուռքի մարդկային ներուժի վերաբերյալ ուսումնասիրությունները, հավաքագրվել է ավելի քան 20 ոլորտներում ներգրավված սփյուռքահայ 25 000 բարձրակարգ մասնագետների և գործիչների վերաբերյալ տեղեկատվություն:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության ոլորտում առաջնային են բանակի մարտունակության, նյութատեխնիկական պատշաճ ապահովման, կարգապահության, զինծառայողների սոցիալական ապահովության, մասնագիտական հմտությունների, բարոյա-հոգեբանական վիճակի, արժեքային համակարգի, միջանձնային հարաբերությունների խնդիրները:

44-օրյա պատերազմում կրած պարտությունն ահռելի բացասական ազդեցություն է ունեցել բանակի մարտունակության, բարոյահոգեբանական վիճակի, նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի վրա, բայց նշված խնդիրների մանրամասն ուսումնասիրությունը հանգեցնում է եզրակացության, որ այդ ամենը ոչ թե հետևանք է, այլ պատճառ:

Քրեական ենթամշակույթի տասնամյակների տարածվածությունը երիտասարդության շրջանում ամենագործնական կերպով արտահայտվում է բանակում, որտեղ ծառայության մեկուսի բնույթը՝ գաղտնիության բերումով, պայմաններ է ստեղծում այդ ենթամշակույթի գործնական արտահայտման համար:

Այս պայմաններում առավել ևս զինծառայողների սոցիալական պաշտպան-վածության ցածր մակարդակը, զինվորական ծառայության, պետական արժեքային և կառուցակարգային համակարգի կիսակատար և մակերեսային ընկալումը պարարտ հող են ստեղծում անառողջ միջանձնային հարաբերությունների, կոռուպցիայի, անգամ դավաճանության համար:
Ավելի քան 5 տասնյակ զինծառայողներ որպես մեղադրյալ ներգրավված են օտարերկրյա հատուկ ծառայությունների օգտին լրտեսության գործերով, բազմաթիվ բարձրաստիճան զինվորականներ անցնում են տարբեր քրեական գործերով, որոնք իրենց բնույթով ի հայտ են բերում բանակում առկա այնպիսի խորքային արատավոր երևույթներ, որոնք սպառնում են ՀՀ ինքնիշխանությանը, անկախությանը, տարածքային ամբողջականությանը:

Այս ամենի հաղթահարման միջոցը ՀՀ կառավարությունը դիտարկում է խոր և համապարփակ բարեփոխումները բանակում: ՀՀ բանակում ծառայում են հազարավոր ազնիվ, նվիրված և պետականամետ զինծառայողներ, որոնք դարձել են բարեփոխումների օրակարգի համահեղինակն ու կրողը:

Բանակի բարեփոխումների ուղղությամբ իրականացվում են լայնածավալ աշխատանքներ: Մասնավորապես 2022 թվականին՝

- ընթացել են ՀՀ զինված ուժերի, զինված ուժերի գլխավոր շտաբի ստորաբաժանումների կազմկառուցվածքային փոփոխությունները,
- պայմանագրային զինծառայողների համար սահմանվել է լրավճար՝ դրա հաշվարկման համար նախատեսելով ատեստավորման գործընթաց, որի արդյունքում նախատեսվում է զինծառայողների աշխատավարձերի կրկնապատկում,
- սահմանվել է պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության փոխադրման նոր կարգ՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագրի իրականացման միջոցով,
- ռազմաուսումնական հաստատություն ավարտած և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կամ ՀՀազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողների համար սահմանվել է անհատույց օգտագործման, իսկ հետագայում՝ նաև անհատույց սեփականության իրավունքով բնակարան ստանալու իրավունք,
- ընդլայնվել է վարժական հավաքների անցկացման շրջանակը, բարեփոխվել է վարժական հավաքների կառուցվածքը,
- շարունակվել են «IP» կապի համակարգի ներդրման աշխատանքները,
- սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացների իրագործման համար ընդլայնվել է ռազմատեխնիկական համագործակցության շրջանակը և կնքվել են 3 տասնյակից ավելի պայմանագրեր,
- ՀՀ պետական սահմանի հայ-ադրբեջանական սահմանի տեղամասի պահպանության պատշաճ կազմակերպման համար ձեռք են բերվել անհրաժեշտ համակարգեր, ինժեներական, շինարարական, ուսումնական և այլ միջոցներ,

• ՀՀ զինված ուժերի ավիացիան համալրվել է ժամանակակից բազմա-ֆունկցիոնալ նոր ուղղաթիռներով, որոնք նախատեսված են դեսանտային, կրակային, տրանսպորտային և սանիտարական խնդիրներ կատարելու համար,

• շարունակվել է տեսադիտարկման համակարգերի տեղադրումը՝ դրանք համակցելով ընդհանուր ցանցին և հասցնելով ՀՀ զինված ուժերի օպերատիվ կառավարման կենտրոն,

• տեղի է ունեցել ԱՄՆ-ի աջակցությամբ բարեկարգված՝ ՀՀ պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի հիմնական ուսումնական ստորաբաժանման «Զառ» ուսումնական կենտրոնի բացման արարողությունը,

• գործողության է դրվել Հայրենիքի պաշտպանի ազգային-գաղափարական դաստիարակության միջոցառումների ծրագիրը,

• հիփոթեքային վարկավորման ծրագրում ընդգրկվելու համար դիմում-հայտ ներկայացրած և ծրագրի մասնակիցների ռեեստրում գրանցված բոլոր զինծառայողներն ընդգրկվել են հիփոթեքային վարկավորման նպատակային ծրագրում,

• մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը ռազմաուսումնական հաստատություն-ներ (ՌՈՒՀ) ընդունված և ավարտած (ավարտող) և սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողների համար սահմանվել է ՌՈՒՀ ավարտելուց հետո 5 տարի ժամկետով հիփոթեքային վարկավորման ծրագրում առաջնահերթությամբ ընդգրկվելու իրավունք (այս ծրագրի միջոցով 2022 թվականի դեկտեմբերի դրությամբ բնակարան կամ բնակելի տուն է ձեռք բերել 917 զինծառայող),

• իրականացվել են դիրքերի և զորամասերի մշտական տեղակայման վայրերի կահավորման և անձնակազմի կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման աշխատանքներ, տարբեր համայնքներում կատարվել են զինված ուժերի ստորաբաժանումների մշտական տեղակայման վայրերի կառուցապատման աշխատանքներ,

• մշակվել են բանակում կանանց ներգրավման ընդլայնման ծրագրեր, որոնք օրենքի նախագծերի տեսքով առաջիկայում կներկայացվեն ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը,

• բանակի բարեփոխման շրջանակներում իրականացվում են այլ բարեփոխումներ ևս, իրականացվում են ինժեներատեխնիկական աշխատանքներ:

Անվտանգային համակարգեր

• 2022 թվականի ընթացքում իրականացվել է պետական սահմանի պահպանության գործառույթը փուլ առ փուլ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերին փոխանցելու գործընթացը:

• Իրականացվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմա-նապահ զորքերի սահմանապահ ստորաբաժանումների մշտական տեղակայման վայրերի կառուցմանն ուղղված աշխատանքներ, ավարտական փուլում են գտնվում ՀՀ պետական սահմանի հայ-ադրբեջանական տեղամասում 2021 թվականին

մեկնարկած 8 սահմանապահ ուղեկալի կառուցման աշխատանքները, ինչպես նաև ձեռք են բերվել անհրաժեշտ գույք և տեխնիկական միջոցներ:

• 2022 թվականին ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ զինված ուժերի զինծառայողների նկատմամբ նախաձեռնվել է 143 քրեական վարույթ, որոնցից 17-ը՝ պետական դավաճանության, 47-ը՝ կոռուպցիոն, 9-ը՝ զենք-զինամթերքի, 12-ը՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության և 58-ը՝ զինվորական բնույթի այլ հանցագործությունների դեպքերով:

• Պետական դավաճանության և լրտեսության դեպքերով 2022 թվականին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվել է 26 քրեական վարույթ, որոնցով որպես մեղադրյալ ներգրավված է եղել 51 անձ, որից 17 անձի վերաբերյալ քրեական գործերն ուղարկվել են դատարան, իսկ 11 քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

• 2022 թվականին մեկնարկել են ՀՀ վարչապետին ենթակա պետական կառավարման համակարգի երկու նոր մարմնի՝ Արտաքին հետախուզության ծառայություն և Պետական պահպանության ծառայություն ձևավորելու աշխատանքները:

• Հաշվետու ժամանակահատվածում Փրկարար ծառայությունը համալրվել է 17 ԱԹՍ-ով, 2 ստորջրյա դրոնով, գիշերային տեսանելիության 2 սարքով, լազերային թեոդոլիտ 1 սարքով, 1 միավոր «Մագիրուս» մակնիշի հրշեջ-ավտոմեքենայով, «Պոլարիս» մակնիշի 1 միավոր կվադրոցիկլով, 1400 լրակազմ հրշեջ համազգեստով:

• Փրկարար ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով ձեռք են բերվել «ՈՒԱԶ Պատրիոտ կլասիկ» մակնիշի 8 միավոր, «ՈՒԱԶ Պիկապ» մակնիշի 11 միավոր և «ՈՒՐԱԼ» մակնիշի հրշեջ-փրկարարական ավտոմեքենաներ:

• Վերածրագրավորվել և կենտրոնացված ազդարարման ցանցի մեջ է ընդգրկվել «ԲՈՒՍ» մոդելի կենտրոնացված ազդարարման համակարգի 142 հեռակառավարման վահանակ՝ իրենց ուղղորդիչներով: Տեղադրվել է 76 նոր էլեկտրաշչակ, ՀՀ տարածքում տեղադրված և սարքին շչակների ընդհանուր քանակը 2022 թվականի դրությամբ 1007-ն է:

• «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից լրացվել է 2084 երկրաշարժի տվյալ: Օպերատիվ որոշվել են 429 երկրաշարժի հիմնական պարամետրեր:

• Ստեղծվել է ժողովրդավարական պետությանն ու հասարակարգին բնորոշ, ոստիկանության ոլորտի միասնական քաղաքականություն մշակող և իրականացնող գործադիր իշխանության մարմինը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ այդպիսով ապահովելով նաև ոլորտի թե՛ խորհրդարանական, թե՛ քաղաքացիական վերահսկողությունը: Ոչ ոստիկանական գործառույթները (հատկապես պետության կողմից մատուցվող հանրային ծառայությունները) կիրականացվեն նախարարության կողմից: Ոստիկանության կառուցվածքային վերափոխման շրջանակներում ծառայությունը զարգանալու է որպես մասնագիտական կառույց 4 հենասյունային ուղղություններով՝ քրեական ոստիկանություն, պարեկային ծառայություն, ոստիկանական գվարդիա և համայնքային ոստիկանություն: Վերացվելու են ոստիկանության մարզային վարչությունները, 4 հիմնական ուղղություններով ստորաբաժանումները Երևանում

և մարզերում ունենալու են իրենց տարածքային ստորաբաժանումները՝ ուղղաձիգ և արդյունավետ կառավարմամբ՝ բացառելով կրկնվող գործառույթները: Նոր նախարարության կառուցվածքի հենքում են ոստիկանությունը, փրկարար և միգրացիայի ծառայությունները:

• Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում պարեկային ոստիկանությունն սկսել է ծառայությունը: Ընթանում են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում պարեկային ոստիկանության ներդրման նախապատրաստական աշխատանքները: Պարեկային ոստիկանության ծառայության առաջին արդյունքները տեսանելի են, մասնավորապես ճանապարհային երթևեկության անվտանգության մակարդակի բարելավմամբ: Չնայած ավտոմեքենաների թվի շարունակական աճին՝ 2022 թվականին 2021 թվականի համեմատ ՃՏՊ-ները նվազել են 296 դեպքով կամ 6,4%-ով, վիրավորների թիվը նվազել է 546-ով, զոհերի թիվը նվազել է 47-ով:

• Պարեկային ոստիկանության մարզերի ստորաբաժանումների համար ձեռք է բերվել գործարանային վիճակում գտնվող 315 ավտոմեքենա, ծառայությունը հագեցվել է ժամանակակից տեխնիկական բոլոր անհրաժեշտ սարքավորումներով:

• Մշակվել է կին պարեկների ներգրավման համար գործողությունների պլանը: Ներկայումս պարեկային ոստիկանությունում ծառայող կանայք ընդամենը 4,5% են: Որպես նպատակ սահմանվել է մինչև 2026 թվականն այդ թիվը հասցնել 30%-ի:

• Մշակվել է ջրային պարեկային ծառայության ներդրման հայեցակարգն ու դրա իրականացման գործողությունների պլանը: Արդեն 2023 թվականի ավարտին Սևանա լճում և դրա առափնյա հատվածում վերապատրաստված, ջրային ժամանակակից տեխնիկայով ապահովված ջրային պարեկները կիրականացնեն մասնագիտացված ծառայություն:

• ՀՀ կառավարության կողմից հիմնադրվել է «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որին վերապահվել է ինչպես նախկինում մասնավոր կազմակերպության կողմից իրականացվող՝ երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության ապահովումը, այնպես էլ իրավախախտումների հայտնաբերումը, կանխարգելումը և բացահայտումը, իսկ ապագայում նաև այլ անձանց հարակից ծառայությունների մատուցումը: Նախաձեռնվել է նաև օրենսդրական փոփոխություն, որի շնորհիվ ՊՈԱԿ-ի համար 24-ժամյա իրական ժամանակի ռեժիմով հասանելիություն կապահովվի բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների, այլ օբյեկտների, ինչպես նաև էլեկտրոնային համակարգերի միջոցով հսկվող ավտոկայանատեղերի տեսահսկման համակարգերին: Այդ ճանապարհով առավել անվտանգ քաղաք ունենալու կոնցեպտի շրջանակներում կունենանք ինչպես վարչական իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման, այնպես էլ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման միասնական կենտրոն: Բացի այդ, ՊՈԱԿ-ը հնարավորություն կունենա իրականացնելու վերլուծությունների, օրենքով չարգելված տեղեկատվության (օրինակ՝ ապահովագրական ընկերություններին վթարների վերաբերյալ տեղակատվության), օբյեկտների պահպանության և այլ ծառայությունների վճարովի մատուցում:

• Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում 2022 թվականի հուլիսին կատարվել է լրացում, ըստ որի՝ եթե առանց ԱՊՊԱ պայմանագիր ունենալու տրանսպորտային միջոց վարելու ձևով վարչական իրավախախտում կատարած անձը լիազորված մարմնի կողմից իրավախախտումը հայտնաբերվելու պահից 24 ժամվա ընթացքում վերացնում է իրավախախտման հատկանիշները, ապա նա ազատվում է նշանակված տուգանքի 75%-ի չափով վճարման պարտականությունից:

• Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ իրավախախտ վարորդներին երթևեկությունից «դուրս բերելու» քաղաքականության իրացման շրջանակներում 2022 թվականին կայացվել է տուգանային միավոր նախատեսող 588 296 (2021 թվականին 699 103) որոշում, բայց միևնույն ժամանակ 602 (2021 թվականին 395) անձ զրկվել է վարորդական իրավունքից:

• Ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կազմում ստեղծվել է համացանցի միջոցով թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանում: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության 134 դեպք, որից 37-ը՝ իրացնելու, իսկ 97-ը՝ ձեռք բերելու: Արգելափակվել է «Տելեգրամ» հավելվածում գործող 17 համացանցային խանութի գործունեություն, որոնց վարողները ձերբակալվել են: Որպես ֆինանսական միջոց՝ հանցագործները մեծ ծավալներով օգտագործում են կրիպտոարժույթը:

• Ըստ միջազգային հեղինակավոր ՆԱՄԲԵՈ (NUMBEO) վերլուծական-տեղեկատվական պորտալի՝ 2023 թվականին ներկայացված Հանցավորության և անվտանգության ինդեքսի ամփոփ տվյալների՝ Հայաստանն ուսումնասիրված 142 երկրի շարքում զբաղեցնում է 7-րդ տեղը (2018 թվականին հրապարակված տվյալներով՝ 18-րդ տեղը), իսկ Երևան քաղաքն ընդգրկվել է 20 ամենաանվտանգ քաղաքների շարքում՝ 416-ից (2018 թվականին հրապարակված տվյալներով՝ 59-րդ տեղը), իսկ տարածաշրջանում առաջինն է:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի արդյունքներով Հայաստանում տնտեսական տպավորիչ ցուցանիշներ են արձանագրվել՝

- ✓ տնտեսական աճը կազմել է 12,6%, այդ թվում՝
- ✓ առևտուրն ու ծառայություններն աճել են 17,7%-ով,
- ✓ շինարարության ոլորտն աճել է 18,8%-ով,
- ✓ արդյունաբերությունն աճել է 6,4%-ով,
- ✓ արտահանումն աճել է 54,4%-ով, իսկ ներմուծումը՝ 33,8%-ով:

ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 8 496 777,9 մլն ՀՀ դրամ, նախորդ տարվա միջին տարեկան գներով՝ 7 865 923,1 մլն ՀՀ դրամ:

2022 թվականի ՀՆԱ-ի հավելաճի կազմում ամենամեծ տեմպն ունեցել է ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 46,9%: 2022 թվականի արդյունքներով բանկային համակարգի ամփոփ ցուցանիշներն են՝

- ✓ ակտիվները կազմել են շուրջ 8,4 տրլն ՀՀ դրամ,
- ✓ կապիտալը՝ շուրջ 1,2 տրլն ՀՀ դրամ,
- ✓ վարկային պորտֆելը՝ շուրջ 4,2 տրլն ՀՀ դրամ,
- ✓ ավանդները (ցպահանջ և ժամկետային)՝ շուրջ 5,1 տրլն ՀՀ դրամ:

Ընդ որում, նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝

- ✓ ակտիվներն ավելացել են շուրջ 1,3 տրլն ՀՀ դրամով կամ 18,4%-ով,
- ✓ վարկային պորտֆելն աճել է շուրջ 242 մլրդ ՀՀ դրամով կամ 6,1%-ով,
- ✓ ավանդները (ցպահանջ և ժամկետային) ավելացել են շուրջ 1,1 տրլն ՀՀ դրամով կամ 27,3%-ով,
- ✓ կապիտալն աճել է շուրջ 328,7 մլրդ ՀՀ դրամով կամ 35,8%-ով:

2022 թվականին շարունակվել է գրանցված աշխատատեղերի թվի աճը: Մասնավորապես հաշվետու տարվա դեկտեմբերին, ըստ Պետական եկամուտների կոմիտեի տվյալների, գրանցվել է աշխատատեղերի ՀՀ պատմության բացարձակ ռեկորդ՝ 704 հազար աշխատատեղ: Սա շուրջ 45 հազարով կամ 6,8%-ով ավելի է 2021 թվականի դեկտեմբերի, շուրջ 116 հազարով կամ 19,7%-ով ավելի է 2018 թվականի դեկտեմբերի և շուրջ 156 հազարով կամ 28,5%-ով ավելի է 2018 թվականի մայիսի նույն ցուցանիշի համեմատ:

2022 թվականին երկրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը նվազել է և կազմել է 13%՝ 2021 թվականի երկրորդ եռամսյակի 15,2%-ի, 2021 թվականի միջին տարեկան 15,5%-ի և 2018 թվականի միջին տարեկան 19%-ի համեմատ: 2022 թվականի 3-րդ եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 11,6%, որը վերջին 14 տարվա ընթացքում ամենացածր ցուցանիշն է:

Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկների համաձայն՝ 2022 թվականին մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 235 576 ՀՀ դրամ, որը 2018 թվականի 172 727 չափը գերազանցել է 62 849 ՀՀ դրամով կամ 36,4%-ով, իսկ 2021 թվականի 204 048 չափը՝ 31 528 ՀՀ դրամով կամ 15,5%-ով: Սա կարևոր ցուցանիշ է, որն ի ցույց է դնում 8,6% գնաճը հակակշռելու քաղաքականության արդյունավետությունը՝ հաշվի առնելով, որ 1 աշխատատեղին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի աճը գնաճից ավելի է շուրջ 80,2%-ով:

Գնաճային ռիսկերը կառավարելու իմաստով էական դեր է խաղացել նաև շուրջ 1300 ապրանքային անվանումների ապրանքների մասով ներմուծման

մաքսատուրքերի ժամանակավոր զրոյացման՝ ԵԱՏՄ շրջանակներում ընդունված մեխանիզմը:

Տնտեսական հաջողությունների համար էական դեր են խաղացել եկամտային հարկի և ավելացված արժեքի հարկի վերադարձի լավարկված համակարգերը:

2022 թվականի ընթացքում ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկի տոկոսների գծով վերադարձվել է 36,5 մլրդ ՀՀ դրամ եկամտային հարկ, որը 2018 թվականի ցուցանիշը գերազանցում է 31,8 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 680%-ով, իսկ 2021 թվականի ցուցանիշը՝ 13,8 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 61%-ով:

Ծրագրի շահառուների թիվը 2022 թվականին կազմել է 29 197 անձ, որը 2021 թվականի ցուցանիշը գերազանցել է՝ 8277 անձով կամ 39,5 %-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ 25 176 անձով կամ 626 %-ով:

Կարևոր է ընդգծել, որ 2022 թվականի հունվարի 1-ից ներդրվել է հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակը, որի գործարկումից հետո շահառու քաղաքացիները եկամտային հարկի գումարները հետ են ստանում հաշված ժամերի ընթացքում՝ առանց բանկ և (կամ) հարկային մարմին այցելելու:

2022 թվականի արդյունքներով հիփոթեքային վարկի տոկոսների վերադարձի ծրագրի շահառուների կողմից սկսած 2015 թվականից ձեռք բերված բնակարանների թիվը կազմել է 21 642, իսկ անհատական բնակելի տների թիվը՝ 2216: Ծրագրով ֆինանսավորվում է միայն նորակառույց բնակֆոնդից ձեռքբերումը, ինչը կարևոր նշանակություն ունի երկրում արդիական քաղաքաշինական, էներգախնայողական և բնապահպանական ստանդարտների պահպանման տեսանկյունից:

Հատկանշական է, որ չնայած եկամտային հարկի դրույքաչափի շարունակական նվազմանը (2021 թվականին՝ մինչև 22%, 2022 թվականին՝ մինչև 21%) 2022 թվականին նախորդ տարվա համեմատ հավաքագրվել է 63,5 մլրդ ՀՀ դրամով ավելի եկամտային հարկ (522,1 մլրդ ՀՀ դրամ) իսկ 2018 թվականի համեմատ, երբ գործել է եռաստիճան հարկային դրույքաչափ 23%-ից 36%, 181,2 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 53%-ով ավելի եկամտային հարկ:

Տնտեսական ակտիվության վրա դրական ազդեցության կարևոր գործոններից է ԱԱՀ-ի վերադարձի համակարգի պարզեցումը: 2021 թվականի հուլիսի 1-ից ԱԱՀ-ի դեբետները տնտեսավարողներին վերադարձվում են մեկ ամսվա ընթացքում: 2022 թվականի ընթացքում հարկ վճարողներին վերադարձվել է շուրջ 213 մլրդ ՀՀ դրամ ԱԱՀ, որը 2021 թվականի ցուցանիշը գերազանցում է շուրջ 66,1 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 45%-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ շուրջ 125,4 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 143%-ով:

Հայաստանի միջազգային տնտեսական ընկալումը շարունակել է մնալ դրական: 2022 թվականին Fraser Institute-ի հրապարակած տնտեսական ազատության ինդեքսում Հայաստանը 6 դիրքով բարելավել է իր տեղը՝ զբաղեցնելով աշխարհում 11-րդ տեղը: Հարկ է նշել, որ 2023 թվականի սկզբին միջազգային վարկանշային «Ֆիթչ» գործակալությունը վերանայել է Հայաստանի արտարժույթով թողարկողի

դեֆոլտի երկարաժամկետ վարկանիշի (IDR) կանխատեսումը «կայունից» «դրական» և հաստատել է այն «B+» մակարդակում: 2023 թվականին կանխատեսումը «կայունից» «դրական» է դարձրել նաև վարկանշային «Ստանդարտ ընդ Փուրս» գործակալությունը: Ըստ այդմ՝

- «Ֆիթչը» Հայաստանին շնորհել է B+ սուվերեն վարկանիշ,
- «Մուդիսը» Հայաստանին շնորհել է Ba3 սուվերեն վարկանիշ,
- «Ստանդարտ ընդ Փուրսը» Հայաստանին շնորհել է B+ սուվերեն վարկանիշ:

2022 թվականի ընթացքում՝

- ՀՀ կառավարությունը 2022 թվականի մայիսին փոխել է գերակա ոլորտներում ներդրումային ծրագրերի համար սարքավորումների և հումքերի մաքսային արտոնությունների տրամադրման կարգը՝ էապես ընդլայնելով շահառուների շրջանակը: Այս գործողությունը բխում է մշակող արդյունաբերության զարգացման քաղաքականությունից և նպատակ ունի օժանդակելու տարածաշրջանում հայաստանյան մշակող արդյունաբերության ընկերությունների առջև բացված նոր հնարավորություններից օգտվելուն: Այս փոփոխությունների արդյունքում 46 ներդրումային ծրագրի ներքո տրվել է 224 մլրդ ՀՀ դրամի սարքավորումների և հումքերի ներմուծման արտոնություն, որի արդյունքում ստեղծվելու է 4400-ից ավելի աշխատատեղ՝ շուրջ 3 անգամ գերազանցելով 2021 թվականի նկատմամբ արտոնության ընդհանուր ծավալը (2021 թվականի 27 ծրագրի ներքո տրվել է 81 մլրդ ՀՀ դրամի արտոնություն):
- ՀՀ կառավարությունը 2022 թվականին էապես հեշտացրել է օտարերկրյա կազմակերպությունների մուտքը լիցենզավորման ենթակա 13 ոլորտ: Եթե նախկինում շինարարության, ինկասացիայի, ռադիոակտիվ թափոնների տեղափոխման և որոշ այլ ոլորտներում մի շարք երկրներում գործող ընկերությունները Հայաստան մտնելիս պետք է անցնեին լիցենզավորման ամբողջական ընթացակարգով, այժմ դա արվում է ընդամենը ներկայացնելով իրենց հայրենի երկրում այդ գործունեությամբ զբաղվելու թույլատվական փաստաթղթերը: Դրա շնորհիվ, օրինակ, շինարարության, նախագծման, տեխնիկական վերահսկողության և հարակից այլ ոլորտներում օտարերկրյա ընկերությունների համար Հայաստան մտնելու գրավչությունն էապես մեծացել է:
- 2022 թվականի օգոստոսին ՀՀ կառավարությունը հաստատել է «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ կառավարությունը հայտնել է իր պատրաստակամությունն աջակցելու ներկայացված ներդրումային ծրագրերին անհրաժեշտ ենթակառուցվածքների տրամադրմամբ, օրինակ՝ ճանապարհ, ենթակայան, ջրագիծ և այլն: Այս պահին ներկայացված է 12 նախագիծ՝ ընդհանուր 22 մլրդ ՀՀ դրամ ներդրումներով, որոնց շրջանակներում պահանջվում են 1,8 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ենթակառուցվածքներ:
- Հայաստանում ընկերությունների արտադրողականության խթանման համար ՀՀ կառավարությունը գործարկել է տնտեսական արդիականացման ծրագիրը, որով ՀՀ կառավարությունը սուբսիդավորում է ընկերությունների նոր սարքավորումների ձեռքբերման ֆինանսական տոկոսային ծախսերի մեծ մասը, ինչպես նաև փոխհատուցում օտարերկրյա բարձրակարգ մասնագետների

ներգրավման ընթացքում աշխատավարձի մի մասը: Դրա շնորհիվ ընկերությունները 2022 թվականի ընթացքում կնքել են 900-ից ավելի պայմանագիր ավելի քան 56 մլրդ ՀՀ դրամի սարքավորումների ձեռքբերման համար: Դրանով մենք նպատակ ունենք ընդլայնելու տնտեսական պոտենցիալը՝ ընկերություններին դարձնելով ավելի մրցունակ: Այս ծրագիրը գործում է ոչ միայն մշակող արդյունաբերության ընկերությունների, այլև տրանսպորտային, առողջապահական, հանքարդյունաբերական, շինարարական և այլ ոլորտների համար: Նախատեսվում է, որ մինչև 2023 թվականի վերջ ընդհանուր պորտֆելը կհասնի ավելի քան 200 մլրդ ՀՀ դրամի: Այս ծրագրի մյուս բաղադրիչով հայաստանյան ընկերություններին քաջալերում ենք վարձել բարձրակարգ օտարերկրյա մասնագետների, որոնք ընկերությունները կաքսելերացնեն միջազգային լավագույն պրակտիկայի ներդրմամբ: Այս պահին արդեն դիտարկվում է 15 ընկերության կողմից ստացված մոտ 250 հայտ:

- Օժանդակության նպատակային միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 10 ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթաց, որին մասնակցել է 109 դիմումատու: Միջոցառման շրջանակներում 32 դիմումատուի տրամադրվել է արտոնյալ պայմաններով վարկ՝ շուրջ 296 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարի:
- Արտադրողականության բարձրացման ուղղությամբ կարևոր բարե-փոխում է ամանորյա տոնական օրերի կրճատումը, որը թույլ տվեց 2022 թվականն սկսել բարձր տնտեսական ակտիվությամբ, որն ավելի ցցուն երևում է նաև 2023 թվականին: Ամանորյա կարճ տոները թույլ են տալիս, որ թե՛ պետական մարմինները, թե՛ մասնավոր ընկերությունները պահպանեն աշխատանքային տեմպը, և արդեն երկու տարվա տվյալները թույլ են տալիս ասել, որ դեկտեմբեր և հունվար ամիսների տնտեսական ակտիվության մեծ տարբերությունը կրճատվել է, և դա էապես օգնել է ամբողջ տարվա տնտեսական բարձր ակտիվության պահպանմանը: 2022 թվականի հունվարին տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 14,8%-ով, իսկ 2023 թվականի հունվարին՝ 10,5%: Ընդ որում, 2023 թվականի հունվարին տնտեսական ակտիվության ցուցանիշը աճել է 2021 թվականի հունվարի նկատմամբ 26,9%-ով:
- 2022 թվականին ՀՀ կառավարությունը վերացրել է մինչև մեկ մլն դրամանոց առաքումներ անող փոքր արտահանողների մաքսատուրքերը: Եթե նախկինում նույնիսկ փոքր, օրինակ 10 հազար դրամանոց ապրանք առցանց կամ որևէ այլ ձևով վաճառելիս փոքր և միջին ընկերությունները մի քանի հազար դրամ մաքսատուրք էին վճարում, ինչի հետևանքով էականորեն թանկանում էր ապրանքի ընդհանուր արժեքը, ապա այժմ այդ ապրանքների արտահանման ժամանակ որևէ մաքսավճար չի վճարվում: Դա էապես հեշտացրել է առցանց վաճառքով զբաղվող ընկերությունների աշխատանքը:
- Հիմնվել է 2՝ ջերմային չափումների, զանգվածի և հարակից մեծությունների տրամաչափարկման լաբորատորիա: ՀՀ կառավարությունը շարունակում է կարևորել որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացումը, մասնավորապես միջազգային ստանդարտներին համապատասխան արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորումը:

- 2022 թվականի հունվարից Հայաստանում գործում է «Թրեյդ-ին» համակարգը, որն ստեղծում է ֆիզիկական անձանց համար ավտոմեքենաների նորացման բարենպաստ պայմաններ՝ խթանելով ավտոմեքենաների քաղաքակիրթ առևտուրը և ավտոպարկի թարմացումը:
- «Թանկարժեք մետաղների մասին» օրենքի լավարկման շնորհիվ տնտեսավարողների համար հնարավորություն է ստեղծվել ԵԱՏՄ ամբողջ տարածքում իրենց ոսկերչական և ադամանդագործական արտադրանքն առանց լրացուցիչ վարչարարության շրջանառելու, ինչպես նաև թանկարժեք մետաղները հարգորոշելու և հարգադրոշմելու համար:
- ՀՀ կառավարությունը հետևողականորեն հումքի և սարքավորումների ներմուծման հարկումը սահմանից տեղափոխում է դեպի ներքին տնտեսություն: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը վերջնական նպատակ ունի վերացնելու մաքսային սահմանին ԱԱՀ-ի գանձման գործառույթը:
- Տեղի է ունեցել Վարշավայի ֆոնդային բորսայի (ՎՖԲ) կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի ձեռքբերում: ՎՖԲ-ի՝ որպես ինստիտուցիոնալ ներդրողի մուտքը Հայաստանի ֆինանսական շուկա նոր թափ կհաղորդի Հայաստանի կապիտալի շուկայի զարգացմանը և խթան կդառնա հայկական կապիտալի շուկաների ինտեգրման համար՝ նոր հնարավորություններ բացելով ինչպես հայկական ընկերությունների, այնպես էլ ներդրողների համար:
- Հաստատվել է «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքներից բխող 11 նոր ենթաօրենսդրական ակտ:
- Մշակվել և 2023 թվականին հաստատվել է Տեքստիլ արդյունաբերության զարգացման ծրագիրը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը:
- Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 1 665 658, ինչը շուրջ 90%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Բարձր տեխնոլոգիաներ

- 2022 թվականի մայիսի 25-ին ԱՄՆ Կանավերլ հրվանդանում գտնվող տիեզերակայանից Space-X ընկերության տիեզերանավով Երկիր մոլորակի ուղեծիր է դուրս բերվել Հայաստանի առաջին տիեզերական արբանյակը՝ Արմսաթ-1-ը (ArmSat): Արբանյակի վրա տեղադրված է մուլտիսպեկտրալ օպտիկական նկարահանող սարք, որից ստացված տիեզերալուսանկարները կարող են օգտագործվել քաղաքային պլանավորման, գյուղատնտեսության, բնապահպանական ինչպես նաև պաշտպանական որոշ բնագավառներում: Կառավարման կենտրոնի սարքավորումներն արդեն ՀՀ-ում են և ներկայումս կատարվում են ինստալացման աշխատանքները:
- 2022 թվականի ընթացքում ՏՀՏ ոլորտի շրջանառությունը հասել է շուրջ 570 մլրդ ՀՀ դրամի՝ 2021 թվականի համեմատ աճելով 65%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ 105%-ով: Այդ թվում՝ ՏՏ ծառայությունները 2018-2022 թվականների ընթացքում շուրջ 87 մլրդ ՀՀ դրամից աճել են մինչև շուրջ 295 մլրդ ՀՀ դրամի՝ արձանագրելով 239% աճ:
- ՏՏ ոլորտում 2018 թվականի դրությամբ գործունեություն է իրականացրել 828 ընկերություն, որոնցում աշխատակիցների թիվը կազմել է՝ 9978: 2018-2022

թվականների ընթացքում գրանցվել է ոլորտի ընկերությունների և ոլորտի աշխատակիցների շոշափելի աճ, մասնավորապես 2022 թվականին գործել է 3385 ընկերություն, որոնց աշխատակիցների թիվը կազմել է 20617: Այսպիսով 2018-2022 թվականների ընթացքում ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների քանակն ավելացել է ավելի քան 308%-ով, իսկ դրանցում աշխատակիցների թիվը՝ ավելի քան 106%-ով:

• 2022 թվականին հաստատվել է պետական աջակցության ծրագիր, որով ՏՏ ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվում է աջակցություն՝ նոր աշխատակիցների մասով վճարված եկամտային հարկի հանրագումարի 50%-ի չափով: Ծրագրով աջակցություն է ստացել 30 կազմակերպություն, աջակցության ընդհանուր գումարը 2022 թվականի ընթացքում կազմել է շուրջ 3,6 մլրդ ՀՀ դրամ:

• 2022 թվականին հաստատվել է պետական աջակցության ծրագիր, որով ՏՏ ոլորտի առևտրային կազմակերպություններին հնարավորություն է տրվել վերափոխելու իրենց բիզնես մոդելը, հարմարեցնելու այն նոր պայմաններին և դիմակայելու համաշխարհային ՏՏ ոլորտի մարտահրավերներին: Այս ծրագրով տրամադրվող պետական աջակցության ընդհանուր բյուջեն կկազմի շուրջ 10 մլրդ ՀՀ դրամ:

• 2022 թվականին 5 ուղղությամբ իրականացվել է «Մասնագետների պատրաստման բուհ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը, որի բյուջեն կազմել է շուրջ 227 մլն ՀՀ դրամ:

• 2022 թվականին «Ինժեներական քաղաքի» տարածքի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են. 11 ընկերություն ստացել է ռեզիդենտի կարգավիճակ և հնարավորություն այդ տարածքներում գրասենյակային-արտադրական շինություններ կառուցելու:

• 2022 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություն են ստացել ոլորտի 1430 կազմակերպություն:

• «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի «Ներուժ» բաղադրիչի շրջանակում «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է «Ներուժ 2022» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագիրը:

• «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի առաջին՝ «Գաղափարի փուլում գտնվող պրոդուկտների համար» դրամաշնորհային մրցույթի շրջանակում հաղթող է ճանաչվել 18 կազմակերպություն, որոնցից յուրաքանչյուրին տրամադրվել է մինչև 5 մլն ՀՀ դրամ դրամաշնորհ: Ծրագրի երկրորդ՝ «Շուկա մուտք գործելու փուլում գտնվող պրոդուկտների համար դրամաշնորհներ» բաղադրիչի հայտերի գնահատման արդյունքներով մրցույթում հաղթող է ճանաչվել 13 կազմակերպություն, որոնցից յուրաքանչյուրին տրամադրվել է մինչև 10 մլն ՀՀ դրամ դրամաշնորհ:

• ՀՀ տարածքում ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության ապահովման, ռադիոհաճախականային խանգարումների հայտնաբերման, ռադիոհաճախականությունների և հաճախականային շերտերի փաստացի օգտագործման վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով 2022 թվականին մեկնարկվել են բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրով 2022-2024 թվականների համար նախատեսված

5,57 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքները: 2022 թվականին 770 մլն ՀՀ դրամի շրջանակում կառուցվել է գլխավոր կայանը և 1 ստացիոնար չսպասարկվող կայանը, ինչպես նաև մատակարարվել են 1 շարժական կայանի համար պահանջվող տեխնիկական միջոցները: Արդյունքում հնարավորություն է ընձեռվել ապահովելու Երևանի կենտրոնական մասի շուրջօրյա ռադիոդիտարկում:

• Հեռուստաընկերությունների՝ ՀՀՌՀՑ ՓԲԸ-ին ժամկետանց դեբիտորական պարտքերի խնդիրը շարունակել է արդիական մնալ, մասնավորապես, 2022 թվականի վերջի դրությամբ ժամկետանց պարտքերի հանրագումարը կազմել է շուրջ 458 մլն ՀՀ դրամ: ՀՀ կառավարությունը մտադիր է միջոցներ ձեռնարկել ժամկետանց պարտքերի ամբողջական մարումն ապահովելու ուղղությամբ:

• 2022 թվականի ընթացքում ռազմարդյունաբերական ոլորտին պետությունը հատկացրել է շուրջ 5,2 մլրդ ՀՀ դրամ՝ 2018 թվականի շուրջ 2,2 մլրդ ՀՀ դրամի համեմատ (աճը՝ շուրջ 235%): 2023 թվականի համար պետության հատկացումը կազմելու է շուրջ 6,8 մլրդ ՀՀ դրամ (2018 թվականի համեմատ աճը կազմում է շուրջ 4,6 մլրդ ՀՀ դրամ կամ 306%):

Հեռահաղորդակցություն

2022 թվականի դրությամբ՝

• Հայաստանի բոլոր բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 2G, 3G և 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներով:

• Հայաստանի բնակավայրերում 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը կազմել է 91% (911 բնակավայր):

• Հայաստանի 628 (62,7%) բնակավայրում հասանելի են լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների ծառայությունները, այդ թվում՝ 565 բնակավայրերում հասանելի են FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ օպտիկամանրաթելային ցանցերը, որոնք ընդգրկում են բնակչության շուրջ 96,5%-ը:

Փոստային կապ

• Ըստ Համաշխարհային փոստային միության Փոստային զարգացվածության 2022 թվականի զեկույցի՝ Հայաստանը 80-րդ տեղից բարձրացել է 48-րդ հորիզոնական:

• 2022 թվականի ընթացքում 6 կազմակերպության տրամադրվել է փոստային կապի գործունեության լիցենզիա:

• 2022 թվականի ընթացքում արդիականացվել և վերազինվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի 13 փոստային բաժանմունք, ինչպես նաև վերանորոգվել է մարզային քաղաքներում 7 բաժանմունք, գյուղերում՝ 10 բաժանմունք:

• Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման որակը բարելավելու նպատակով «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ մարզերում ստեղծվել են տեսակավորման նոր կենտրոններ և թարմացվել է ավտոպարկի 30%-ը, ինչի արդյունքում փոստափոխանակման ժամկետները կրճատվել են 3 անգամ:

Թվայնացում

2022 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ թվայնացման ոլորտի ռազմավարական թիրախներին հասնելու նպատակով իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

- Ձևավորվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդը (այսուհետև՝ ՏՀԿԽ)՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գլխավորությամբ, որը հաստատել է Հայաստանի թվային ճարտարապետության սկզբունքները:
- ՏՀԿԽ-ի հաստատած ճանապարհային քարտեզի հիման վրա հիմնադրվել է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությունը, հաստատվել է կազմակերպության բյուջեն, հրապարակվել է առաջին 20 բարձրորակ հաստիքի համալրման մրցույթը:
- Ներգրավվել է աշխարհի լավագույն ընկերություններից մեկը, որը շահառուների հետ մշակել է նոր սերնդի կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի մանրամասն բիզնես մոդելը և դրա հիման վրա միջազգային մրցույթի կազմակերպման ճանապարհային քարտեզը:
- Մշակվել են էլեկտրոնային նույնականացման բոլոր անհրաժեշտ ստանդարտներն ու պահանջները: Որպես սկզբունք ՏՀԿԽ-ի կողմից ընդունվել է, որ մասնավոր հատվածը միավորվում է և ներդրում է անում վստահության (հավաստագրման) և էլեկտրոնային նույնականացման համակարգում: Ստեղծվել է ազգային նույնականացման միասնական պորտալը, որը մի քանի ամսում կգործարկվի: ՀՀ կառավարության որոշմամբ մինչև 2023 թվականի վերջ բոլոր պետական կայքերը կապահովեն դրա հասանելիությունը: Հեռահաղորդակցության բոլոր ընկերությունները միավորել են ջանքերը՝ իրենց հաճախորդների հեռախոսային չիպերն էլեկտրոնային նույնականացում և ստորագրություն ապահովող չիպերով փոխարինելու համար: Ապահովվելու է նաև ՀՀ կառավարության պահանջը, ըստ որի քաղաքացին որևէ վճար չի կատարելու դրա համար:
- Կիբեռ/ինֆորմացիոն անվտանգության մասով նախագծվել են զորավարժությունների, կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության և ուսուցման ու հետազոտությունների համար անհրաժեշտ լուծումները, հաշվարկվել է բյուջեն և 2023 թվականի ընթացքում գործարկման գործողությունների պլանը: Արդեն իսկ ձեռք է բերվել կիբեռ սիմուլյացիաների և կրթման պլատֆորմ: Կիբեռանվտանգության կրթական ծրագիր է իրականացվում մասնավոր ընկերությունների և պետական մարմինների մասնակցությամբ:

Գյուղատնտեսություն

- Չնայած գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 1,6%-ով, այնուամենայնիվ, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ինչպես նախորդ տարիներին, 2022 թվականին ևս գրանցել է տնտեսական անկում -0,7%: Այս երևույթի խորքային պատճառը հողերի մասնատվածությունն է, ոռոգման ջրի հասանելիության սահմանափակումները (Հայաստանում հաշվառված է 2 042 հազար հեկտար գյուղատնտեսական

նշանակության հող, որից՝ վարելահող՝ 443 հազար հեկտար, բազմամյա տնկարկ (այգիներ, հատապտղանոցներ)՝ 39 հազար հեկտար, ոռոգելի է վարելահողերի և բազմամյա տնկարկների ընդամենը 32%-ը, կամ 154 հազար հեկտար), ինտենսիվ գյուղատնտեսության տեխնոլոգիաների և նորարարության դանդաղ մուտքը ոլորտ: Այս բոլոր ուղղություններով ՀՀ կառավարությունը ռազմավարական ծրագրեր է իրականացնում: Մասնավորապես ընթացքի մեջ են Վեդիի ջրամբարի շինարարության աշխատանքները, որոնք կավարտվեն 2023 թվականին, Կապսի ջրամբարի շինարարական աշխատանքները կմեկնարկեն այս տարի, Հայաստանում 15 նոր ջրամբարի կառուցման ուղղությամբ ընթանում են աշխատանքներ: Հողերի խոշորացման խթանման նպատակով ընդունվել է Հողային բարեփոխումների փորձնական ծրագիրը, որի նպատակն է նպաստել հողերի միավորմանը (կոնսոլիդացիային) և արդյունավետ օգտագործմանը: Հաստատվել է ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման աջակցության 2023-2025 թվականների ծրագիրը, որի նպատակն է գյուղատնտեսական ոլորտում խթանել արտադրողականության բարձրացումը, հողերի նպատակային օգտագործումը և արդյունավետ կառավարումը:

Ոլորտում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- Ինտենսիվ այգեգործության աջակցման ծրագրի շրջանակներում 2022 թվականին կնքված պայմանագրերով նախատեսվում է շուրջ 2450 հեկտար այգեհիմնում:
- Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում 2022 թվականի ընթացքում 6444 հեկտար հողատարածք ապահովագրելու համար կնքվել է շուրջ 5100 ապահովագրական պայմանագիր: Ապահովագրական պայմանագրերի թիվը 2021 թվականի համեմատ աճել է 812-ով: Ապահովագրական պատահարների հետևանքով տուժած տնտեսավարողներին ապահովագրական ընկերություններն ավելի քան 2000 ապահովագրական հատուցում են տրամադրել ֆերմերներին՝ շուրջ 1,3 մլրդ ՀՀ դրամի չափով: Ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի ցուցանիշները վկայում են դրական դինամիկայի մասին, մասնավորապես, նույն ծրագրով 2020 թվականին կնքվել է 1546 պայմանագիր կամ 2363 հեկտար: Ընդ որում յուրաքանչյուր տարի ծածկվող ռիսկերի դասում ավելացվել են մշակաբույսերի տեսակները և ապահովագրական ռիսկ համարվող դեպքերը: Ծրագրի մեկնարկի ժամանակ ծրագիրը գործել է միայն 2, իսկ ներկայումս՝ արդեն 13 մշակաբույսի համար:
- Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում 2020 թվականին լիզինգային հայտերի շրջանակում տրամադրվել է շուրջ 2,6 մլրդ ՀՀ դրամ՝ 573 միավոր գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար, 2021 թվականին՝ շուրջ 3,2 մլրդ ՀՀ դրամ՝ 538 և 2022 թվականին՝ շուրջ 2,8 մլրդ ՀՀ դրամ՝ 573 միավոր գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: ՀՀ կառավարությունն այս ծրագրով թիրախավորել է տարեկան 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի գնման աջակցություն:
- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության 2-րդ ծրագրի շրջանակում ՀՀ կառավարությունը համաֆինանսավորել է 52 միավոր գյուղատնտեսական տեխնիկայի գնում:

- Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2022 թվականին հաստատված 275 լիզինգային հայտի շրջանակում ձեռք է բերվել 710 միավոր սարքավորում՝ 16,4 մլրդ ՀՀ դրամ ծավալով, որը շուրջ 55%-ով ավելի է 2021 թվականի և շուրջ 165%-ով՝ 2020 թվականի ծավալներից: ՀՀ կառավարությունն այս ծրագրով թիրախավորել է տարեկան 250 միավոր ագրոպարենային ոլորտի սարքավորման գնման աջակցություն, որը մշտապես գերազանցվում է:
- Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագրի շրջանակում 2022 թվականին կնքվել է 20 պայմանագիր, կառուցվել է 12 ջերմատուն:
- Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել 13 անասնաշենք:
- Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտի մասնավոր ընկերություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում 2022 թվականին հաստատվել է 255 հայտ, գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է 11368 գնման պայմանագիր: Ծրագրի շրջանակներում 9 շահառուի տրամադրվել է բյուջետային երաշխիք՝ 5,3 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի, իսկ մթերման նպատակով 2022 թվականի ընթացքում այս ծրագրով տրամադրված վարկերի հանրագումարը կազմել է շուրջ 23,6 մլրդ ՀՀ դրամ: Մթերվել է շուրջ 277 հազար տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող: Կոնյակի սպիրտի արտահանման խթանման նպատակով մասնավոր ձեռնարկություններին շուրջ 598,6 մլն ՀՀ դրամի նպատակային օժանդակություն է տրամադրվել:
- 2022 թվականին խաղողի հումքով գինու արտահանման ծավալը կազմել է շուրջ 4,7 մլն լիտր՝ 2021 թվականի արտահանման ծավալից շուրջ 50,5%-ով ավելի: 2019 թվականի համեմատ արտահանման ծավալներն աճել են շուրջ 69,8%-ով, իսկ 2020 թվականի համեմատ՝ շուրջ 80,7%-ով: Հարկ է նշել, որ գինեգործական ընկերությունների թիվը 2020 թվականի համեմատ աճել է շուրջ 65%-ով՝ հասնելով 111-ի:
- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2022 թվականին տրամադրվել է 11838 վարկ՝ շուրջ 43,2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:
- Աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 68000 հեկտար աշնանացան ցորենի ցանք:
- Հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագրի շրջանակում 2022 թվականին համայնքների միջոցով ֆերմերներին մատակարարվել է շուրջ 20500 տոննա պարարտանյութ:
- Բեռլինում ստեղծված Եվրոպայում հայկական գինիների առցանց վաճառքի հարթակում ներկայացված ընկերությունների թիվն ավելացել է 8-ով՝ կազմելով 29, իսկ գինու տեսականին հասել է 93-ի:
- Առաջին անգամ Հայաստանում մեկնարկել է խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը, որի շրջանակներում

2022 թվականին արդեն իրականացվել է շուրջ 200 հազար խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում:

- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել է շուրջ 5,3 մլն հատ միջոցառում:
- Ավելի քան 43 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության առավել վարակված հողատեսքերում իրականացվել են վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ:
- Առաջնային սերմնաբուծության ոլորտում 2022 թվականին 2021 թվականի համեմատ արտադրվել են երկու անգամ ավելի բանջարային մշակաբույսերի սերմեր:

Քաղաքաշինություն

- ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ 2022 թվականից Նաիրի, Էջմիածին, Մասիս և Վանաձոր խոշորացված համայնքներում քաղաքաշինական թույլտվությունները տրամադրվում են բացառապես առցանց համակարգով: 2022 թվականի ընթացքում միայն այս համայնքներում ստացվել է 5280 դիմում և տրամադրվել 4130 թույլտվություն (հարկ է նշել, որ 2021 թվականին առցանց համակարգի միջոցով ստացվել է ընդամենը 73 դիմում և տրամադրվել է ընդամենը 26 թույլտվություն): 2023 թվականի ընթացքում առցանց համակարգ կներդրվի նաև Շիրակի և Սյունիքի մարզերում:
- ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ 2022 թվականին քաղաքաշինության գործունեության և նորմատիվային դաշտի բարելավման նպատակով «Լիցենզավորման մասին» օրենքում կատարվել են ծավալուն փոփոխություններ, ինչպես նաև հաստատվել են քաղպաշտպանական կառույցների, կրթական հաստատությունների, հիդրոտեխնիկական և ավտոճանապարհային կառուցվածքների նախագծմանը և կառուցմանը, շինարարությունում անվտանգության տեխնիկայի և շինհրապարակների կազմակերպմանը, շինանյութերի ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումներին առնչվող փաստաթղթեր:
- «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանվել է, որ 2024 թվականին հանրապետության բոլոր համայնքները պետք է ապահովված լինեն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով: Ներկա դրությամբ այդ պահանջը կատարված է շուրջ 70%-ի չափով:
- ՀՀ կառավարությունը հաստատել է աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային հողամասերը տնակներից ազատելու կարգը և ժամկետները, սահմանվել են դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցմանն առնչվող մոտեցումները և առաջնահերթությունները:
- Մեկնարկել են և 2023 թվականին կավարտվեն վթարային բնակֆոնդի հիմնախնդրին առնչվող օրենսդրական դաշտի մշակման աշխատանքները:
- Կատարվել են նաև հետևյալ աշխատանքները՝
  - ✓ Ապարան քաղաքի 2 վթարային շենքի փոխարեն կառուցվել և շահագործման է հանձնվել մեկ բազմաբնակարան շենք,

- ✓ Սպիտակ քաղաքում փայտաշեն վթարային 2 հանրակացարանի տեղում իրականացվում է նոր շենքի կառուցում (շինարարությունը կավարտվի 2023 թվականին),
- ✓ մշակվել է Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի (24 վթարային փայտյա շենքեր) տեղում նոր թաղամասի կառուցման և հնի քանդման նախագիծը, որի հիման վրա 2023 թվականին կսկսվեն շինարարական աշխատանքները,
- ✓ մեկնարկել են Աշոցք համայնքի Կոճոռ թաղամասի (20 վթարային փայտյա շենքեր) փոխարեն նոր թաղամասի նախագծման աշխատանքները:

- ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի «Ինքնակամ կառույցների հաշվառման կարգը սահմանելու մասին» որոշման հիման վրա Կադաստրի կոմիտեի կայքէջում ներդրված առցանց չափագրման գրասենյակի միջոցով սկսվել է ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացը: 2022 թվականի ընթացքում առցանց հաշվառվել է շուրջ 27 000 ինքնակամ կառույց, որոնց վերաբերյալ տվյալները պարբերաբար փոխանցվում են համայնքներին՝ ինքնակամ կառույցների օրինականացման կամ օրինականացնելը մերժելու, ապամոնտաժելու հարցերը քննարկելիս օգտագործելու համար: Արդեն ավարտվել է Երևան քաղաքի ինքնակամների հաշվառման համար սահմանված ժամկետը, և մինչև 2023 թվականի վերջ կավարտվի քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքներում ինքնակամ կառույցների հաշվառման ժամկետը: Այս գործընթացի միջոցով անշարժ գույքի շուկայի ընդհանուր կանոնակարգումից բացի կլուծվի նաև գույքահարկի բազայի ստվերային հատվածի լիարժեք բացահայտման և համայնքային բյուջեների հարկային մուտքերի ավելացման հիմնախնդիրներից կարևորագույնը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ջրային տնտեսություն

Ջրային ոլորտի առանցքային խնդիրը շարունակում է մնալ ոռոգման համակարգի վնասաբերությունը: Ամեն տարի ոլորտում գեներացվում է շուրջ 8-9 մլրդ ՀՀ դրամի վնաս: Նման վիճակի առանցքային պատճառներն են՝ ոռոգման ջրի ոչ շուկայական սակագինը, մատակարարվող ոռոգման ջրի հաշվառման բարդությունները, կլիմայի փոփոխությունների պատճառով ոռոգման ջրի պահանջարկի շարունակական աճը: Անհրաժեշտ է արձանագրել, որ ոռոգման մասին մեզանում առկա պատկերացումները խոր վերանայման կարիք ունեն. ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրումը, ոռոգման ջրի շուկայի փուլային ազատականացումն է խնդրի հիմնավոր լուծման բանալին՝ ջրամբարների կառուցմանը զուգընթաց:

Ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 2022 թվականին ոռոգման ոլորտում նախորդ տարվա վճարների գանձման ցուցանիշը գերազանցվել է շուրջ 377 մլն ՀՀ դրամով՝ կազմելով շուրջ 4,7 մլրդ ՀՀ դրամ:

- 2022 թվականին ոռոգման համակարգերում տեղադրվել է շուրջ 771 հատ ջրաչափական սարքավորում՝ հագեցած SCADA համակարգով:
- 2022 թվականի ընթացքում ավարտվել են Կոտայքի մարզի Մարմարիկի ջրամբարի ջրծեծ-ջրմարիչ հանգույցի վերակառուցման աշխատանքները:
- 2022 թվականին կառուցվել են 2877 գծմ ջրանցք և 1352 գծմ երկարությամբ խողովակաշար:
- Հաշվետու ժամանակահատվածում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը Երևան քաղաքում եղել է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20,6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20,2 ժամ/օր: Ջրի որակը 2022 թվականին 98,4% է, ջրաչափությունը կազմում է 99,7%:
- Իրականացվել են շուրջ 198 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ:
- Շիրակի մարզում իրականացվել են բաշխիչ ցանցի վերակառուցման (72,8 կմ), տնային մուտքագծի կառուցման (29,6 կմ), անհատական ջրաչափական հորերի տեղադրման (1543 հատ), կոյուղու ցանցի վերակառուցման (7,3 կմ) աշխատանքները:
- Լոռու և Արմավիրի մարզերում իրականացվել են ջրատարի կառուցման (6,1 կմ), բաշխիչ ցանցի վերակառուցման (63,7 կմ), անհատական ջրաչափական հորերի տեղադրման (2864 հատ) աշխատանքները:
- Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում իրականացվել են ջրատարի կառուցման (16,4 կմ), բաշխիչ ցանցի վերակառուցման (32 կմ), տնային մուտքագծի կառուցման (17,2 կմ), անհատական ջրաչափական հորերի տեղադրման (1291 հատ), կոյուղու ցանցի վերակառուցման (4,8 կմ) աշխատանքները:
- 2022 թվականին վերականգնվել են երկրորդ կարգի ջրանցքների 27,17 կմ հատվածներ և 33,7 կմ ներտնտեսային ոռոգման ցանց:
- «Արփա-Սևան» թունելի վթարային առանձին հատվածների հիմնանորոգման նախագծով նախատեսված շուրջ 220 մ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներից 2022 թվականի ընթացքում վերանորոգվել են շուրջ 114 մ ընդհանուր երկարությամբ հատվածներ:

Ճանապարհաշինություն

- 2022 թվականի ընթացքում իրականացվել են շուրջ 530 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական, հանրապետական, տեղական և այլ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, միջին նորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ: Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել, վերանորոգվել ու կառուցվել են ևս շուրջ 162 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհներ:
- «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի» Տրանշ 3-ի (Թալին-Լանջիկ՝ 18,7 կմ, Լանջիկ-Գյումրի՝ 27,5 կմ) շրջանակներում Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները 2022 թվականին ավարտվել են, երկկողմանի երթևեկությունը բացվել է: Զուգահեռ ընթացել են նաև

Լանջիկ-Գյումրի շուրջ 27,5 կմ հատվածի շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2023 թվականի ընթացքում:

- «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի» Տրանշ 2-ի (Աշտարակ–Թալին, ընդհանուր երկարությունը՝ շուրջ 42 կմ) շրջանակներում աշխատանքների վերսկսման նպատակով անցկացվել է ճանապարհի Ագարակ բնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատվածի շինաշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը, և կապալառուի հետ կնքվել է պայմանագիր: Ծրագրի 34 կմ հատվածի նախագծի մրցութային գործընթացը մեկնարկել է, շինաշխատանքներն ամբողջ ծավալով կսկսվեն 2023 թվականին:
- «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում կատարվել են 5 կամրջի և 1 հենապատի հիմնանորոգման աշխատանքներ (Գարգառի կամուրջ, Երևան-Սևան ճանապարհի Արզնի-Աբովյան հատվածի կամուրջ, Ճամբարակ-Դրախտիկ հատվածի Թթուջրի կամուրջ, Արգավանդ–Հայանիստ–Հովտաշատ-Արմավիրի մարզի սահման մարզային նշանակության ավտոճանապարհի կամուրջ, Երևան-Սևան-Իջևան ավտոճանա-պարհին գտնվող կամուրջ, Թեղուտ բնակավայրի մոտակայքում հանրապետական նշանակության ավտոճանապարհի հենապատի կառուցում Դիլիջանից դեպի Սեմյոնովկա հատվածում):
- Ավարտվել է Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն միջպետական նշանակության 51,13 կմ ճանապարհի վերակառուցումը (որից 9,8 կմ-ը հիմնանորոգվել է 2022 թվականին), ընթացքի մեջ է ճանապարհի կահավորումը:
- 2022 թվականին իրականացվել է 35 սև կետի (վթարավտանգ տեղամասեր) վերացում:

Էներգետիկա

- 2022 թվականին Հայաստանն առաջընթաց է գրանցել Համաշխարհային էներգետիկ խորհրդի (WEC) կողմից անցկացվող «Էներգետիկ տրիլեմայի ինդեքս» միջազգային էներգետիկ վարկանիշում՝ 127 երկրի շարքում զբաղեցնելով 48-րդ տեղը՝ 2021 թվականի 53-րդ տեղի համեմատ:
- 2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական համակարգում անցում է կատարվել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (ԷՄՇ) նոր մոդելին, որի հիմնական նպատակն արդարացի գնագոյացման մեխանիզմի կիրառումն է: 2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ օրական սպառվող էլեկտրաէներգիայի 13,8%-ը վաճառվել է ազատ շուկայում՝ չկարգավորվող գներով:
- ԷՄՇ-ն խթան է հանդիսացել էլեկտրաէներգիայի միջպետական առևտրի համար: 2022 թվականի ընթացքում Հայաստանից Վրաստան արտահանվել է 365 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, որն ավելի է, քան նախորդ 10 տարվա հանրագումարը (242 մլն կՎտ/ժ):
- Զգալիորեն աճել է ինքնավար էներգաարտադրողների (սեփական կարիքների համար էլեկտրաէներգիա արտադրող արևային կայաններ) թիվը: 2022 թվականի վերջին ինքնավար էներգաարտադրողների թիվը կազմել է 10282՝ գումարային 196,87 ՄՎտ հզորությամբ:

- 2022 թվականի տարեվերջի դրությամբ էլեկտրաէներգիա է արտադրում մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ 60 արևային էլեկտրական՝ գումարային շուրջ 204,79 ՄՎտ դրվածքային հզորությամբ:
- 2022 թվականի տարեվերջի դրությամբ էլեկտրաէներգիա է արտադրում 4 հողմային էլեկտրական՝գումարային շուրջ 4,23 ՄՎտ դրվածքային հզորությամբ:
- Իրականացված արդիականացման աշխատանքների շնորհիվ 2022 թվականին Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը երկարաձգվել է մինչև 2031 թվականը, կայանը ստացել է շահագործման նոր լիցենզիա: 1995 թվականից ի վեր ատոմակայանը 2022 թվականին առաջին անգամ աշխատել է 100% ջերմային հզորությամբ (92%-ի փոխարեն):
- Ավարտվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) «Լիճք» 220 կՎ և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցման աշխատանքները, և ենթակայաններն ամբողջությամբ դրվել են լարման տակ:
- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման աշխատանքների գրեթե 80%-ն ավարտվել է: Աշխատանքներն ամբողջությամբ նախատեսվում է ավարտել 2023 թվականի դեկտեմբերին:
- Հաստատվել և իրականացվել է բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում ֆինանսական կառույցների կողմից ծրագրի 1265 շահառուի տրամադրվել են շուրջ 2,6 մլրդ ՀՀ դրամ հանրագումարի վարկեր:

Ավտոմոբիլային տրանսպորտ

- Մարզային միասնական երթուղային ցանցի ներդրման աշխատանքները սկսվել են Կոտայքից: Սպասարկող օպերատորի ընտրության մրցույթում հաղթած ընկերությունը 2022 թվականի ընթացքում ձեռք է բերել 212 նոր ավտոբուս, վերջինիս ներդրումների ծավալը կազմել է շուրջ 4,7 մլրդ ՀՀ դրամ: Տրանսպորտային պարկի թարմացումներ իրականացվել են նաև Արարատի և Արմավիրի մարզերում՝ 133 ավտոբուսով:
- Մրցույթներ են անցկացվել նաև Արարատի և Արմավիրի մարզերում: Արարատի մարզի մրցույթը հաղթած օպերատորը մինչև 2023 թվականի մայիսը պետք է ներմուծի և շահագործի 87 նոր ավտոբուս՝ մոտ 2,5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
- ԵԱՏՄ կարգավորումներով հնարավորություն է ստեղծվել առանց ներմուծման մաքսատուրքի ՀՀ տարածք ներմուծելու էլեկտրական շարժիչներով մեքենաներ. 2022 թվականի համար՝ 7000 մեքենա, իսկ 2023 թվականի համար՝ 8000:
- 2022 թվականի փետրվարի 16-ից ուժի մեջ է մտել ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների պարտադիր վկայագրման պահանջը:

Օդային տրանսպորտ

- 2022 թվականին ՀՀ օդանավակայանների կողմից սպասարկվել է 3 698 256 ուղևոր, որը 54%-ով ավելի է 2021 թվականի նույն ցուցանիշից և 29%-ով ավելի՝

2018 թվականի ցուցանիշից: Նշված ուղևորահոսքից 951 100 ուղևոր օգտվել է հայկական ավիաընկերություններից, որը 3,1 անգամ կամ 313,2%-ով ավելի է 2021 թվականի ցուցանիշից (303 700 ուղևոր) և 12,4 անգամ կամ 1241,6%-ով ավելի՝ 2018 թվականի ցուցանիշից (76 600 ուղևոր):

• 2022 թվականին օդային ճանապարհով փոխադրվել է 23 341 տոննա բեռ, որը 35%-ով ավելի է 2021 թվականի ցուցանիշից (17 321 տոննա) և 29%-ով ավելի՝ 2018 թվականի ցուցանիշից (18 100 տոննա):

• Հայկական ավիաընկերությունների կողմից փոխադրված ուղևորների տեսակարար կշիռն ընդհանուր ուղևորահոսքի մեջ 2022 թվականին կազմել է 25%, 2021 թվականին՝ 11%, իսկ 2018 թվականին՝ 2,5%:

• 2022 թվականին Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից Հայաստանի ազգային հետաքրքրությունների ֆոնդի համահիմնադրմամբ ստեղծված «Ֆլայ Արնա հայկական ազգային ավիաուղիներ» ավիաընկերությանը տրամադրվել է օդանավ շահագործողի վկայական և կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիր: 2022 թվականի հուլիսից թռիչքներ իրականացնող ավիաընկերությունը նույն տարվա ընթացքում տեղափոխել է ավելի քան 80 հազար ուղևոր:

• 2022 թվականի ընթացքում իրականացվել են կանոնավոր չվերթեր շուրջ 45 ուղղություններով, որոնցից 9-ը մեկնարկել է 2022 թվականին (դեպի Լառնակա, Թել Ավիվ, Ստամբուլ, Անթալիա, Աբու Դաբի, Հռոմ, Վիլնյուս, Միլան, Քիշնև):

• 2022 թվականի ընթացքում Հայաստանում ներդրվել են «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի (Չիկագոյի կոնվենցիա) թիվ 17 հավելվածով և Քաղաքացիական ավիացիայի եվրոպական կոնֆերանսի դոկ 30 փաստաթղթով ավիացիոն անվտանգության միջոցառումների մասով սահմանված ստանդարտները և առաջարկվող գործելաձևերը:

• Սահմանվել են ընդհանուր նշանակության ավիացիայի կամ ներքին ոչ կանոնավոր առևտրային փոխադրումների համար նախատեսված թռիչք-վայրէջքի հարթակների շահագործման թույլտվության տրման կարգը և շահագործման պայմանները:

• Մեկնարկել են «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի կողմից ներդրումային նոր խոշոր ծրագրի համապարփակ քննարկման աշխատանքները, այդ նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է համապատասխան հանձնաժողով:

• Հետևողական և ինտենսիվ աշխատանքներ են կատարվել ՀՀ օդանավ շահագործող ընկերություններին Եվրահանձնաժողովի 2020 թվականի հունիսի 2-ի որոշմամբ հաստատված՝ ԵՄ թռիչքների անվտանգության ցուցակից դուրս բերելու և ԵՄ օդային տարածքում թռիչքներ իրականացնելուն ուղղված հայկական ավիափոխադրողների իրավունքները վերականգնելու ուղղությամբ: Մշակվել և լրամշակվել են մի շարք իրավական ակտեր, ձեռնարկներ, ընթացակարգեր և այլ նորմատիվ փաստաթղթեր: ԵՄ-ի կողմից 2020 թվականին գնահատողական այցի շրջանակներում արձանագրված որակի (համապատասխանության) վերահսկողության և թռիչքների անվտանգության վերահսկողության 41 թերությունից 22-ը վերացված է, իսկ 19-ը գտնվում է ընթացքի մեջ:

• 2021 թվականի նոյեմբերի 15-ին Եվրոպական միությունը և ՀՀ-ն ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և

Եվրոպական միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիր, որը վավերացվել է 2022 դեկտեմբերի 20-ին:

Երկաթուղային տրանսպորտ

• 2022 թվականի ընթացքում իրականացվել է 8 կմ երկաթուղային գծի հիմնանորոգում, նորոգվել է 8 միավոր գծային տեխնիկա, կապիտալ վերանորոգվել է 3 միավոր շոգեքարշ, արդիականացվել է 11 լոկոմոտիվ, վերանորոգվել է 2 կմ հպակային ցանց:

• 2022 թվականի արդյունքներով գրանցվել է ուղևորափոխադրումների 15,2%, ուղևորաշրջանառության 43,4%, տեղափոխված բեռների 12,3% և բեռնաշրջանառության 11,8% աճ:

Բնական ռեսուրսների կառավարում

• Պետական բյուջեի ծախսերում նախատեսվել են համայնքների բյուջեներին անվերադարձ տրվող մասհանումներ (համայնքային մասհանումներ)՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից պետական բյուջե վճարված ռոյալթիի չափի 2%-ով: Այս բանաձևով 2024 թվականին համայնքներին անհատույց կհատկացվի առնվազն 1 մլրդ ՀՀ դրամ:

• 2022 թվականի ընթացքում տրամադրվել է արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ ավելի քան 60 ընդերքօգտագործման իրավունք:

• 2022 թվականի ընթացում մշակվել է Ընդերքի ոլորտի կայուն զարգացման 2022-2035 թթ. ռազմավարությունը, որը 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կներկայացվի հանրային քննարկման:

• Վերանայվել և նոր ստանդարտներ են սահմանվել օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ հաշվետվողականության համակարգում՝ օգտակար հանածոների հաշվեկշռի վարման և պահպանման, ինչպես նաև արդյունավետ և թափանցիկ պաշտոնական տեղեկատվություն ապահովելու նպատակով:

• 2021 թվականի հոկտեմբերից ՀՀ կառավարությունը դարձել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետեր, 2022 թվականի մարտի 31-ից ՀՀ կառավարության փայամասնակցությունն ընկերությունում կազմել է 21,875%: Ըստ այդմ՝ ՀՀ կառավարությունն իր փայատիրական չափի շրջանակներում և լիազորություններով մասնակցում է ընկերության կառավարմանը:

Հարկ է նշել, որ 2021 թվականի արդյունքներով ընկերության զուտ շահույթը կազմել է շուրջ 189 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2018 թվականի շուրջ 32 մլն ԱՄՆ դոլարի, 2019 թվականի շուրջ 30 մլն ԱՄՆ դոլարի վնասի, 2020 թվականի շուրջ 2,5 մլն դոլարի համեմատ:

2022 թվականի արդյունքներով ընկերության հաշվարկված հարկերի և տուրքերի հանրագումարը կազմել է շուրջ 330 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ 2018 թվականի շուրջ 105 մլն ԱՄՆ դոլարի, 2019 թվականի շուրջ 107 մլն

ԱՄՆ դոլարի, 2020 թվականի շուրջ 88 մլն ԱՄՆ դոլարի և 2021 թվականի շուրջ 97 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

Կարևոր է նշել, որ ՀՀ կառավարությունը նաև որպես համասեփականատեր շարունակում է իր լիազորությունների շրջանակներում խթանել և նպաստել ընկերությունում բնապահպանական, կորպորատիվ կառավարման, գործունեության և, մասնավորապես, գնումների համակարգի թափանցիկության միջազգային ստանդարտների և միջազգային լավագույն փորձի ներդրմանը:

- 2022 թվականի ընթացքում համապարփակ բանակցություններ են ընթացել, և 2023 թվականի փետրվարի 22-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ՀՀ կառավարության, Լիդիան Արմենիայի և Եվրասիական զարգացման բանկի միջև: Հուշագրով ընկերությունը պարտավորվել է Ամուլսարի հանքավայրի շինարարությունն ու շահագործումը շարունակել իրականացնել հանքարդյունաբերության ոլորտում առկա լավագույն միջազգային չափանիշներին և ստանդարտներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ժողովրդագրություն

Բնակչության աճ ապահովելու համար (0-ական միգրացիայի պայմաններում) անհրաժեշտ է, որ ծնելիության գումարային գործակիցը ՀՀ–ում կազմի առնվազն 2,11 (վերջին տարիներին այդ ցուցանիշը 1,65-1,70 է):

2022 թվականի ՀՀ ժողովրդագրական իրավիճակը նկարագրող ցուցանիշների պայմաններում անհրաժեշտ է, որ երկրում տարեկան ծնվի ավելի քան 44 000 երեխա՝ ապահովելու համար երկրի բնակչության թվի աճ (2022 թվականին ծնվել է շուրջ 36 300 երեխա):

Ժողովրդագրության իրավիճակի բարելավման նպատակով վերջին տարիներին ՀՀ կառավարությունը նախաձեռնել է բազմաթիվ ծրագրեր, և 2022 թվականին ապահովվել է դրանց շարունակականությունը, տարվա ընթացքում գործարկվել են նոր նախաձեռնություններ, կատարվել են օրենսդրական մի շարք բարեփոխումներ՝ հատուկ շեշտադրում կատարելով ընտանիքում 3-րդ և հաջորդ երեխայի ծնունդներին աջակցելու և խրախուսելու համար: Մասնավորապես՝

- 2022 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է «Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ մինչև երեխայի 6 տարեկանը ամսական դրամական աջակցություն տրամադրելու ծրագիրը: 2022 թվականին դրամական աջակցություն է նշանակվել և վճարվել 10 083 երեխայի, իսկ բյուջեից ծրագրին հատկացվել է շուրջ 3 մլրդ ՀՀ դրամ.
- 2022 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությամբ 2023 թվականի հունվարի 1-ից ներդրվել է մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նոր համակարգ, որի շրջանակում նպաստի իրավունք ունեն բոլոր ծնողները՝ անկախ բնակության վայրից և աշխատելու հանգամանքից: Ընդ որում կրկնակի

չափով նպաստ կարող է ստանալ գյուղական բնակավայրում հաշվառված և միաժամանակ խնամքի արձակուրդում գտնվող ծնողը:

Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը ծնված երեխային խնամելու կապակցությամբ՝

- ✓ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանվել է 31 600 ՀՀ դրամ (28 600 ՀՀ դրամի փոխարեն),
- ✓ գյուղաբնակ չաշխատող ծնողի համար սահմանվել է 31 600 ՀՀ դրամ (28 600 ՀՀ դրամի փոխարեն),
- ✓ խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողի համար սահմանվել է 63 200 ՀՀ դրամ (57 200 ՀՀ դրամի փոխարեն):

2023 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխային խնամելու կապակցությամբ՝

- ✓ խնամքի արձակուրդում չգտնվող ծնողի համար սահմանվել է 31 600 ՀՀ դրամ (28 600 ՀՀ դրամի փոխարեն),
- ✓ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանվել է 37 500 ՀՀ դրամ (28 600 ՀՀ դրամի փոխարեն),
- ✓ խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողի համար սահմանվել է 69 100 ՀՀ դրամ (57 200 ՀՀ դրամի փոխարեն):

- Շարունակվել է 2020 թվականին մեկնարկած «Երեխա ունեցող ընտանիքներին բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագիրը», որի շրջանակում 2022 թվականին աջակցություն է ստացել 3 088 շահառու, որն ավելի է, քան 2020 և 2021 թվականներին շահառուների թիվը միասին վերցված. միայն 2022 թվականին պետական բյուջեից ծրագրի համար հատկացվել է 2,1 մլրդ ՀՀ դրամ:
- 2022 թվականի ընթացքում իրականացվել են «Ժողովրդագրության ռազմավարության» մշակման աշխատանքները: Այն նախատեսվում է հաստատել 2023 թվականի գարնանը: Ռազմավարությամբ նկարագրվելու են Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական հիմնախնդիրները ծնելիության, բնակչության սեռատարիքային կազմի և ծերացման գործընթացի համատեքստում, նախատեսվելու են հիմնախնդիրների հաղթահարման և մեղմման ռազմավարական ուղիները, քայլերը, ծրագրերը, ռեսուրսներն ու ժամկետները:
- Ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացման շնորհիվ հնարավոր կլինի կասեցնել 2014 թվականից ծնունդների ամենամյա անկումը, իսկ 3-րդ և հաջորդ երեխաների ծնունդներին ուղղված պետական բազմազան աջակցությամբ էականորեն մեծացել է ընտանիքում ծնված 3-րդ և հաջորդ երեխաների թիվը. 2018 թվականին ծնված 3-րդ և հաջորդ ծնված երեխաների թիվը կազմել է 8270, իսկ 2021-ին հասել է շուրջ 11440-ի:

Միգրացիա

- 2022 թվականին միգրացիայի ոլորտում տեղի է ունեցել ամենամասշտաբային կառուցվածքային բարեփոխումը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում ձևավորվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության և Ոստիկանության անձնագրային և

վիզաների վարչության միավորմամբ: Կառուցվածքային փոփոխությունը հնարավորություն է ստեղծում միգրացիոն գործառույթների մեկտեղմամբ բարձրացնելու քաղաքացիներին և օտարերկրացիներին մատուցվող ծառայությունների որակը՝ կրճատելով վարչարարության վրա ծախսվող ժամանակը:

- 2022 թվականին գործարկվել է Օտարերկրյա աշխատողների ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակը՝ workpermit.am-ը: Հարթակի միջոցով Հայաստանում աշխատանքի հիմքով կացության կարգավիճակների տրամադրման գործընթացն ամբողջությամբ թվայնացվել է՝ կրկնակի կրճատելով այդ գործընթացի վրա նախկինում ծախսվող 2 ամիս ժամանակահատվածը: Հայաստանում աշխատող ԵԱՏՄ քաղաքացիներն իրենց օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը ևս հնարավորություն ունեն ստանալու նշված հարթակի միջոցով: 2022 թվականին հարթակի միջոցով ստացվել է 10647 դիմում: Օգտվողների շրջանում անցկացված հարցման արդյունքում գոհունակության մակարդակը կազմել է 71%: Նախատեսվում է նման ճանապարհով թվայնացնել մնացած հիմքերով կացության կարգավիճակների տրամադրման գործընթացները:
- 2022 թվականի ընթացքում Երևան քաղաքում ավարտին է հասցվել Ադրբեջանից բռնագաղթած և ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների բնակարանային ապահովության ծրագիրը: Ծրագրի շրջանակներում հատկացվել է 272 բնակարանի գնման վկայագիր՝ շուրջ 3 մլրդ ՀՀ դրամի, որոնցից արդեն իրացվել է 220-ը, մնացածը գտնվում է գնման գործընթացում: 2023 թվականին նախատեսվում է հավակնորդ շահառու 194 ընտանիքի համար ծրագիրն իրականացնել մարզերում ևս:
- 2022 թվականին ՀՀ սահմանային անցակետերով մուտքերը կազմել են 3 394 371 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերը՝ 1 479 798), ելքերը՝ 3 355 639 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների ելքերը՝ 1 507 739), տաբերությունը կազմել է **+38 732** (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տարբերությունը՝ - 27 941):

Ընդ որում՝

- 2018 թվականին մուտքերը կազմել են 3 757 187 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերը՝ 2 146 738), ելքերը՝ 3 741 869 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների ելքերը՝ 2 151 323), տաբերությունը կազմել է **+15 318** (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տարբերությունը՝ -4 585).
- 2019 թվականին մուտքերը կազմել են 4 319 618 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերը՝ 2 392 893), ելքերը՝ 4 309 112 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների ելքերը՝ 2 399 422), տաբերությունը կազմել է **+10 506** (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տարբերությունը՝ -6 529).
- 2020 թվականին ՀՀ սահմանային անցակետերով մուտքերը կազմել են 913 211 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերը՝ 497 340), ելքերը՝ 901 119 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների ելքերը՝ 454 554), տաբերությունը կազմել է **+12 092** (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տարբերությունը՝ 42 786).
- 2021 թվականին մուտքերը կազմել են 1 629 891 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերը՝ 689 221), ելքերը՝ 1 673 765 (այդ թվում՝ ՀՀ

քաղաքացիների ելքերը՝ 762 792), տաբերությունը կազմել է **-43 874** (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տարբերությունը՝ -73 571):

Կրթություն

• Ավելի քան վեցամյա դադարից հետո 2022 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»:

• 300 դպրոցի և 500 մանկապարտեզի վերակառուցման, կառուցման և հիմնանորոգման և նոր գույքով ամբողջական հագեցման ծրագրի շրջանակներում կազմվել է ճանապարհային քարտեզ, որով մինչև 2026 թվականը նախատեսվում է այդ աշխատանքներն իրականացնել 337 դպրոցում և 521 մանկապարտեզում: 2022 թվականին նշված ծրագրով վերակառուցման, կառուցման և հիմնանորոգման աշխատանքներն ավարտին են հասցվել 24 դպրոցում և 46 մանկապարտեզում, ընթացքում է նաև գույքային հագեցվածության ապահովումը: Կառուցվել է 7 դպրոց (1-ի դեպքում՝ մարզադահլիճ) և 8 մանկապարտեզ, վերակառուցվել է ևս 8 մանկապարտեզ, հիմնանորոգվել է 17 դպրոց (8-ի դեպքում՝ մարզադահլիճ) և 30 մանկապարտեզ: Միաժամանակ ընթացքում են եղել 72 դպրոցի և 37 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքները: Նախագծման փուլում են գտնվել 26 դպրոցի և 39 մանկապարտեզի կառուցման, 17 դպրոցի և 1 մանկապարտեզի վերակառուցման, 1 դպրոցի և 32 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

• Մինչև 2026 թվականը հանրապետության բոլոր 1400 դպրոցում բնագիտական և ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի շրջանակում 2022 թվականի դրությամբ հանրապետության բոլոր 107 ավագ դպրոցում և Տավուշի մարզի բոլոր 80 դպրոցում ներդրվել են ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն և ինֆորմատիկա առարկաների լաբորատորիաներ:

• 2022 թվականին շարունակվել է հանրակրթության նոր չափորոշչի փորձարկումը Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում: 2023-2024 ուսումնական տարում նախատեսվում է հանրակրթության նոր չափորոշչի փուլային ներդրումը հանրապետության բոլոր դպրոցներում, որին ընդառաջ իրականացվում են ուսուցիչների վերապատարաստումներ, նոր դասագրքերի մշակման և հրատարակման գործընթաց:

• 2022 թվականին դպրոցներում ներդրվել է տարածաշրջանի լեզուների՝ պարսկերենի, վրացերենի, թուրքերենի, ադրբեջաներենի ուսուցում. 25 դպրոց սեպտեմբերից սկսել է այս լեզուների ուսուցումը որպես 3-րդ օտար լեզու կամ խմբակ ձևաչափերով:

• 2022 թվականի ընթացքում շարունակվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը: Դրան մասնակցել է 5-12-րդ դասարաններում դասավանդող 2329 ուսուցիչ, որոնցից հավելավճար ստացող ուսուցիչների թիվը 1090 է: Ներկայումս կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար է ստանում շահառու 28 713 ուսուցչից 1565-ը, կամ 5,5%-ը: Ատեստավորման

արդյունքում բազային դրույքաչափը միջին 125 հազար ՀՀ դրամից դառնում է 200 հազար ՀՀ դրամ, որին ավելանում է ատեստավորման արդյունքներին համապատասխան 30-50% հավելավճարը: Ընդհանուր առմամբ կամավոր ատեստավորումից հետո ուսուցչի միջին ամսական եկամուտը կազմում է շուրջ 250 հազար ՀՀ դրամ՝ կրկնապատկելով մինչ այդ եղած միջին աշխատավարձը, իսկ առավելագույնը դառնալով շուրջ 450 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը (1,5 դրույք ծանրաբեռնվածության և 50% հավելավճարի դեպքում):

- 2022 թվականին հաստատվել են ուսուցիչների վարձատրության նոր ծրագրեր, որոնք կգործեն 2023 թվականից, մասնավորապես՝
  - ✓ հավելավճարներ կտրամադրվեն գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների 4418 ուսուցչի՝ նրանց վարձատրությունը հասցնելով մեկ դրույքաչափի, որի համար պետական բյուջեում նախատեսվել է շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ.
  - ✓ շուրջ 3 մլրդ ՀՀ դրամ է հատկացվել հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական առարկաների 8135 ուսուցչին լրացուցիչ հավելավճար տրամադրելու նպատակով.
  - ✓ վերանայվել է բազմահամակազմ դասարանների ձևավորման սկզբունքը, ըստ որի՝ բազմահամակազմ դասարան կձևավորվի միայն արվեստի և ֆիզկուլտուրայի ժամերին՝ մեկ ժամի համար ուսուցիչներին հավելյալ 50-75%-ի չափով վճարման սկզբունքով: Ծրագիրը կմեկնարկի Սյունիքի մարզի դպրոցներում, որի համար նախատեսված է շուրջ 27 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականին առաջին անգամ իրականացվել է նախադպրոցական հաստատությունների մանկավարժների պարտադիր վերապատրաստման գործընթացը, որին մասնակցել է շուրջ 1100 մանկավարժ, ինչպես նաև առաջին անգամ իրականացվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման գործընթացը, որին մասնակցել է 431 անձ:
- Ներդրվել է նախադպրոցական հաստատությունների մանկավարժների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված մեխանիզմ՝ տարակարգի շնորհման միջոցով 20-50% հավելավճարի հնարավորությամբ, որը կգործի 2023 թվականի ապրիլից: Հավելավճարն ամբողջությամբ կտրամադրվի պետական բյուջեի միջոցներից՝ հավելյալ աջակցելով համայնքային հաստատություններին:
- 2022 թվականին Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության, մեկնարկել է նախադպրոցական կրթություն ստացող և կրթության ու զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ֆինանսավորումը պետական բյուջեից:
- 2022 թվականին 4 քոլեջում և ուսումնարանում կատարվել են հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ, որոնցից 2-ի աշխատանքներն ավարտվել են 2022 թվականին:
- Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում, Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի հետ համատեղ, Տավուշի մարզում ստեղծվել է գյուղատնտեսական կրթահամալիր, որտեղ գրանցվել է ոլորտի համար աննախադեպ՝ մրցակցային ընդունելություն՝ ստանալով սահմանված տեղերից

ավելի շատ դիմումներ ֆերմերային տնտեսության կազմակերպման մասնագիտությամբ սովորելու համար:

• 2022 թվականին ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների շնորհիվ 2023 թվականից քոլեջներում և ուսումնարաններում դասախոսները կունենան ատեստավորման և տարակարգերի միջոցով վարձատրության բարձրացման հնարավորություն:

• 2022 թվականի ընթացքում ավարտվել են 3 բուհում գերազանցության և գիտահետազոտական կենտրոնների ստեղծման աշխատանքները՝ «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ («Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի ստեղծում» դրամաշնորհային ծրագիր), «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ («Ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոն» դրամաշնորհային ծրագիր) և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ («Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի ստեղծում» դրամաշնորհային ծրագիր):

• 2022 թվականին պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում է տրամադրվել 11 766 սովորողի՝ ընդհանուր շուրջ 8 մլրդ ՀՀ դրամի չափով, ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 6500 սովորողի՝ ընդհանուր շուրջ 1,9 մլրդ ՀՀ դրամի չափով, այդ թվում՝ մարտական գործողությունների շուրջ 2600 մասնակցի վարձերի փոխհատուցման համար տրամադրվել է 983 մլն ՀՀ դրամ: Ուսման վարձի փոխհատուցման համար եկամտային հարկի գումարների վերադարձի շրջանակներում տրամադրվել է 202,1 մլն ՀՀ դրամ՝ 565 սովորողի:

• 2021-2022 թվականների ուսումնական տարում ՀՀ բուհեր դիմած 2100 օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ 1121 սփյուռահայ, համեմատությամբ 2022-2023 թվականներին ՀՀ բուհեր է դիմել 2200 օտարերկրյա քաղաքացի, որոնցից 1170-ը՝ սփյուռքահայ: 2022 թվականի ընթացքում ՀՀ բուհերում սովորել է 7690 օտարերկրյա քաղաքացի, որոնցից 3921-ը՝ սփյուռքահայ. սա 8%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ:

Գիտություն

• 2022 թվականի հունվարից բարձրացել է գիտական աշխատողների աշխատավարձը՝ 2021 թվականի վերջում անցկացված ատեստավորման արդյունքների հիման վրա՝ ըստ համապատասխան 5 տարակարգի և գիտատեխնիկական աջակցող անձնակազմի 2 պաշտոնի: Ատեստավորումը չի հաղթահարել գիտաշխատողների շուրջ 18,4% -ը:

• Աշխատավարձի բարձրացման շնորհիվ առավել մեծաքանակ տարակարգի՝ գիտական աշխատողների բազային աշխատավարձը նախկին 90 հազար ՀՀ դրամի փոխարեն կազմել է 150 հազար ՀՀ դրամ, որը 2025 թվականին աճելու է մինչև 276 հազար ՀՀ դրամ: Առաջատար գիտաշխատողների դեպքում այն 114 հազար ՀՀ դրամից 2022 թվականին դարձել է 250 հազար ՀՀ դրամ, որը 2025 թվականին կկազմի 443 հազար ՀՀ դրամ:

• Գիտության ոլորտի երիտասարդացման և միջազգային լավագույն փորձի փոխառման նպատակով 2022 թվականին ամփոփվել է 4 մրցույթ՝

- ✓ ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության մրցույթը,
- ✓ երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթը,
- ✓ «Հայաստանի հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» միջազգային մրցույթը,
- ✓ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթը:

Մրցույթների արդյունքներով ֆինանսավորվել է 86 ծրագիր՝ որոնցում ներգրավված է 286 անդամ, որից՝ 211 երիտասարդ (73,8%, մինչև 35 տարեկան): Ծրագրերից 69-ի (80,2%) ղեկավարները երիտասարդ գիտնականներ են:

• 2022 թվականին գիտական կազմակերպությունների հետազոտական հզորությունների համալրման և թարմացման նպատակով հատկացվել է 2,97 մլրդ ՀՀ դրամ դրամաշնորհային միջոց (15 կազմակերպության), որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 28 հետազոտական սարքավորում, այդ թվում՝ թանկարժեք:

• Գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերությունը) ֆինանսավորումը նշված ծրագրերի արդյունքում 2022 թվականին բացարձակ արժեքով կազմել է 29,78 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ՝ 2021 թվականի ոլորտի ճշտված բյուջեի (19,80 մլրդ ՀՀ դրամ) նկատմամբ ավելի է շուրջ 10 մլրդ ՀՀ դրամով կամ 50,5%-ով: Շարունակական քաղաքականության շնորհիվ 2023 թվականին այն կկազմի շուրջ 36 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվանից ավելի է 6,24 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2018 թվականի համեմատ (14,28 մլրդ ՀՀ դրամ) 2023 թվականին ոլորտի ֆինանսավորումն ավելացել է 21,74 մլրդ ՀՀ դրամով կամ շուրջ 2,5 անգամ:

• 2022 թվականի սեպտեմբերի 5-11-ը Հայաստանում կայացել է գիտության և արվեստի «Սթարմուս» միջազգային 6-րդ փառատոնը՝ շուրջ 200 գիտական, կրթական, մշակութային միջոցառում՝ հանրաճանաչ գիտնականների, այդ թվում՝ Նոբելյան 7 մրցանակակիրների մասնակցությամբ, ավելի քան 100 հազար մասնակցով:

Առողջապահություն

2022 թվականին պետական պատվերի շրջանակներում փոխհատուցված՝ հիվանդանոցային և դժվարամատչելի հետազոտությունների, բժշկական օգնության ու սպասարկման դեպքերի թիվը կազմել է 786 864: 2018 թվականի համեմատ՝ սպասարկված դեպքերի թիվն աճել է 287 925–ով կամ 125%-ով:

• 2022 թվականի ընթացքում մշակվել է և 2023 թվականի փետրվարի 2-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը: Հաշվի առնելով համապարփակ ապահովագրության և Առողջապահական համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությամբ սահմանված համակարգային բարեփոխումները համահունչ իրականացնելու կարևորությունը՝ սահմանվել է ապահովագրության ներդրման փուլային տարբերակ: Հայեցակարգով 2024 թվականին

կապահովագրվեն պետական պատվերի շահառու բնակչության խմբերը և կամավոր հիմունքներով համակարգին միացողները, 2025 թվականին՝ կենսաթոշակառուները, իսկ չորրորդ տարվանից՝ 2027 թվականից՝ պարտադիր բոլորը: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացու ժամանակին կտրամադրվի որակյալ և հասանելի բժշկական օգնություն՝ անկախ վճարունակությունից, սեռից, տարիքից և բնակության վայրից: Բարեփոխումն էականորեն կբարելավի հանրային առողջությունը և զերծ կպահի քաղաքացիներին աղետալի ծախսերի արդյունքում աղքատացումից:

- 2022 թվականին հաստատվել է առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխումների միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև՝ առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարությունը և դրանից բխող՝ 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը:
- Հաստատվել են նաև շաքարային դիաբետի և դրա բարդությունների կանխարգելման ազգային ռազմավարությունը և դրա իրականացման 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը:
- 2022 թվականին հաստատվել է մայրական և վերարտադրողական առողջության պահպանման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների 2022-2026 թվականների ծրագիրը:
- 2022 թվականից ուժի մեջ է մտել «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակների հրապարակային ցուցադրման արգելքը:
- Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման) բժշկական օգնության ծառայությունների տրամադրման շրջանակներում 2022 թվականին մատուցվել է վիրահատական 8826 և ոչ վիրահատական 43 193 ծառայություն:
- Ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝
  - ✓ գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիայի ծառայությունների տրամադրման շրջանակներում 2022 թվականին մատուցվել է 714 ծառայություն. վերջին 3 տարիների ընթացքում այս թիվը գրեթե կրկնապատկվել է, մասնավորապես 2019 թվականին այն եղել է 368.
  - ✓ սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունների տրամադրման շրջանակներում մատուցվել է 2443 ծառայություն՝ 2019 թվականի 2288-ի, 2020 թվականի 2266-ի, 2021 թվականին 2246-ի համեմատ:
- 2022 թվականի ընթացքում 1 տարեկան երեխաների ընդգրկվածությունը պատվաստումներում կազմել է 90%:
- 2022 թվականին հաստատվել է «Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային փորձարարական ծրագիրը», որի ամփոփ արդյունքներով՝ իրականացվել է 2096 հետազոտություն:

- Հաշվետու տարվա ընթացքում հաստատվել են հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը:
- ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի 8 քաղաքում 2022 թվականին 50-69 տարեկան կանանց շրջանում անցկացվել է 10 337 մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություն:
- 2022 թվականի ընթացքում անվճար կատարվել է արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային անվճար շուրջ 32 000 հետազոտություն՝ 30-60 տարեկան կանանց շրջանում:
- 2022 թվականին հոգեկան հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, հեմոֆիլիայի, կրծքագեղձի քաղցկեղի, շաքարային և ոչ շաքարային դիաբետի, էպիլեպսիայի, պարբերական հիվանդության, քրոնիկ երիկամային անբավարարության, ֆենիլկետոնուրիայի, անհաս նորածինների շնչառական խանգարման, վիրուսային հեպատիտ Ց-ի, հիպոֆիզային գաճաճության, տուբերկուլոզի, մարդու իմունային անբավարարության (ՄԻԱՎ) դեպքերում դեղապահովումը կազմել է 100%:
- Հաշվետու տարում իրականացվել է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների դեղապահովման ծրագիր: 2021-2022 թվականներին ցանկը լրամշակվել և համալրվել է՝ նախկին 435-ի փոխարեն ցանկում ներկայումս ներառված է 543 անվանում դեղ:
- 2022 թվականին պետական բյուջեից դեղերի ձեռքբերման հատկացումները կազմել են շուրջ 1,2 մլրդ ՀՀ դրամ, շահառուների թիվը շուրջ 861 500 է:
- 2022 թվականին ընդլայնվել է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկը, որում ներառվել են նաև 44-օրյա պատերազմից հետո մարտական գործողություններին մասնակցած կամ հակառակորդի հետ շփման գծում զոհված, ինչպես նաև դատական կարգով անհայտ կորած զավակի ծնողները:
- Մինչև 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 0,2 պրոմիլային կետով, իսկ մինչև 5 տարեկան երեխաներինը՝ 0,6 պրոմիլային կետով:
- 2022 թվականից սկսած՝ պետպատվերով հատկացվող ուղեգրերը տրամադրվում են բացառապես էլեկտրոնային ձևով: Էլեկտրոնային ձևով են տրամադրվում նաև կենտրոնացված գնումներով ձեռք բերվող դեղերի դեղատոմսերը:
- 2022 թվականին ԱՆ Վ. Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնում վերաբացվել է ճառագայթային ուռուցքաբանության վերանորոգված բաժանմունքը: Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկան վերազինվել է ժամանակակից ռենտգեն սարքավորումով: Վանաձորի բժշկական կենտրոնում բացվել է պատերազմից տուժած զինծառայողներին և վերականգնողական բուժման կարիք ունեցող բուժառուներին սպասարկող վերականգնողական բաժանմունք: Բացվել է նոր պալիատիվ ծառայության կլինիկա, որն ունի միջազգային չափանիշներին համապատասխան շինություն, 26 հիվանդասենյակ՝ 30 մահճակալով:
- Հայաստանի և Ճապոնիայի կառավարությունների միջև 2020 թվականի հունիսին կնքված «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի

համաձայնագրով Հայաստանին հատկացվել է նոր սերնդի բժշկական տեխնիկայով հագեցած շտապ օգնության բարձրակարգ 39 մեքենա, որոնցից 4-ը ռեանիմոբիլ: Երևան քաղաքում արդեն գործում է ամբողջությամբ համալրված լրակազմով շտապ օգնության ծառայություն, և հավելյալ կարողություններ են ստեղծվել լրացնելու մարզերի շտապ օգնության կայանները:

- 2020 թվականից քրեակատարողական բժշկության ՊՈԱԿ-ն ինտեգրվել է առողջապահական համակարգ:
- Ընթանում են 13 բժշկական հաստատության կառուցման (7 հաստատություն) և վերակառուցման (6 հաստատություն) շինարարական աշխատանքները: Մասնավորապես՝
- ✓ Գեղարքունիքի մարզի Մարտունու ԲԿ-ի կառուցում (ավարտ՝ 2023 թ.),
- ✓ Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցում (ավարտ՝ 2023 թ.),
- ✓ ԱՆ Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի վերակառուցում, նոր մասնաշենքերի և կցակառույցների կառուցում (ավարտ՝ 2025 թ.),
- ✓ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի կառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցում (ավարտ՝ 2023 թ.),
- ✓ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցում, դիարանի և կաթսայատան կառուցում (ավարտ՝ 2023 թ.),
- ✓ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի վերակառուցում (ավարտ՝ 2023 թ.),
- ✓ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցում (ավարտ՝ 2024 թ.),
- ✓ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի վերակառուցում (ավարտ՝ 2025 թ.):

- 2022 թվականին մշակվել են կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները, 2023 թվականին շինարարական աշխատանքները մեկնարկել են ևս 3 կենտրոնում՝
- ✓ Արմավիր և Արարատ մարզերի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերը,
- ✓ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի մասնաշենքը:

- 2023 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ կենտրոնների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման նախագծանախահաշվային աշխատանքները.

- ✓ 20 գյուղական առողջության առաջնային պահպանման կենտրոն,
- ✓ «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ,
- ✓ «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ,
- ✓ «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ,
- ✓ «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ,
- ✓ «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ,
- ✓ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ,
- ✓ «Վայքի ԲՄ» ՓԲԸ,
- ✓ «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՓԲԸ,
- ✓ «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա,
- ✓ «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա,
- ✓ «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա,
- ✓ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա,
- ✓ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա,
- ✓ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա:

- «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և պետության համագործակցությամբ մեկնարկել է ԱՆ «Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի արյան բանկի շինարարությունը: «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի և պետության համագործակցությամբ կառուցվում է Դսեղի ամբուլատորիան (ավարտ՝ 2023 թ.):
- «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցներով կառուցվում է 4 ամբուլատորիա Տավուշում, Սյունիքում, Գեղարքունիքում:

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն

Սոցիալական ապահովության ոլորտում 2022 թվականին իրականացվել են մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես՝

- 2022 թվականի հունվարի 1-ից հանրապետության բոլոր քաղաքներում մինչև 75 տարեկան և 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն չունեցող կենսաթոշակառուներն իրենց կենսաթոշակը պարտադիր ստանում են անկախիկ. այսպիսով՝ 2022 թվականի դեկտեմբերի դրությամբ շուրջ 420 000 շահառու կամ կենսաթոշակառուների շուրջ 72%-ն իրենց կենսաթոշակը ստանում են անկանխիկ եղանակով,
- աշխատող կենսաթոշակառուները կենսաթոշակի վերահաշվարկի համար այլևս կարող են առձեռն դիմում չներկայացնել. կենսաթոշակի վերահաշվարկը, ինչպես նաև վճարող բանկի փոփոխությունը կատարվում է առցանց,
- տարվա ընթացքում կատարված բարձրացումների շնորհիվ միջին կենսաթոշակը դարձել է 46 200 ՀՀ դրամ՝ 43 500 ՀՀ դրամի փոխարեն, իսկ նվազագույն կենսաթոշակը՝ 31 600 ՀՀ դրամ՝ 26 500 ՀՀ դրամի փոխարեն,
- ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափը դարձել է 31 600 ՀՀ դրամ՝ 26 500 ՀՀ դրամի փոխարեն,

- բարձրացումների շնորհիվ աճել է նվազագույն կենսաթոշակի և պարենային զամբյուղի արժեքի հարաբերակցությունը՝ կազմելով 76%, 2018 թվականի 66%-ի փոխարեն,
- սեպտեմբերի 1-ից բարձրացել են նաև զինվորական կենսաթոշակները, որից հետո զինվորական կենսաթոշակի միջին չափը 2022 թվականի դեկտեմբերի դրությամբ կազմել է 83 300 ՀՀ դրամ՝ 77 500 ՀՀ դրամի փոխարեն,
- 2022 թվականի հուլիսի 1-ից գործողության մեջ է դրվել «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառումը»: Միայն 2022 թվականի 6 ամիսների ընթացքում այս ծրագրի շահառու է դարձել շուրջ 67 000 թոշակառու, որոնց ընդհանուր առմամբ վերադարձվել է շուրջ 800 մլն ՀՀ դրամ հետվճար: Միջոցառման մեկնարկից մինչև տարվա ավարտը շահառուների կողմից կատարվել են շուրջ 9,6 մլրդ ՀՀ դրամի անկանխիկ գործարքներ: Շահառու դարձած կենսաթոշակառուին տրված միջին հետվճարի չափը դեկտեմբերին կազմել է շուրջ 3400 ՀՀ դրամ: Հետվճարի միջոցառման շահառու դարձած կենսաթոշակառուները միջինում իրենց կենսաթոշակի ավելի քան 70%-ն օգտագործել են անկանխիկ եղանակով:
- 2022 թվականի փոփոխությունների շնորհիվ 2023 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը բարձրացել է 10,3%-ով՝ 68 000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվելով 75 000 ՀՀ դրամ: Նվազագույն ամսական աշխատավարձի չափը 75 000 ՀՀ դրամ սահմանելու արդյունքում աշխատաշուկայում պետական հատվածի աշխատողների 28,7%-ի (77 483 աշխատողի) և մասնավոր հատվածի աշխատողների 31,5%-ի (209 723 աշխատողի) աշխատանքի վարձատրությունը կավելանա:
- 2022 թվականի ընթացքում կառուցվել, վերանորոգվել, կահավորվել և տեխնիկապես վերազինվել է միասնական սոցիալական ծառայությունների 23 տարածքային կենտրոն, ևս 8 կենտրոնի կառուցման աշխատանքներն ընթանում են: Բացվել է Տավուշի մարզի Իջևանի ԱՍՀՆ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնը:
- Վերապատրաստվել է ԱՍՀՆ միասնական սոցիալական ծառայության բոլոր տարածքային կենտրոնների 248 սոցիալական աշխատող:
- Փոփոխություններից հետո 2023 թվականի հունվարի 1-ից սոցփաթեթի շահառուների թիվն ավելացել է 538-ով, մասնավորապես՝

  - ✓ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի, Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոցի, Ծաղկունք բաց դպրոցի, Հայ-չինական բարեկամության դպրոցի աշխատողները,
  - ✓ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Աբեղյանի անվան N 3, Երևանի պետական մանկավարժական համալսարանի N 57, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ավագ դպրոցների աշխատողները:
- 2022 թվականին հաստատվել և մեկնարկել է գործազուրկների և նպաստառուների զբաղվածության ապահովման ծրագիրը, որով միանվագ փոխհատուցում է տրամադրվում այն գործատուին, որն առնվազն 1 տարի

ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքում գործազուրկի հետ (սեզոնային աշխատանքով ապահովելու դեպքում կարող է կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 8 ամիս տևողությամբ): Ծրագրով միանվագ փոխհատուցում տրվում է՝

- ✓ միասնական սոցիալական ծառայությունում հաշվառված և վերջին 3 ամսվա ընթացքում անընդմեջ գործազուրկի կարգավիճակ ունեցող՝ 35 տարեկանից բարձր տարիքի յուրաքանչյուր գործազուրկի աշխատանքի տեղավորման դեպքում՝ 250 հազար ՀՀ դրամի չափով,
- ✓ յուրաքանչյուր նպաստառու գործազուրկի աշխատանքի տեղավորման դեպքում՝ 350 հազար ՀՀ դրամի չափով:

- «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի շրջանակներում աղքատության փուլային հաղթահարման նպատակով թվով 298 շահառու ստացել է բիզնես դրամաշնորհներ՝ ընդհանուր ավելի քան 470 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականին ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ են գործել բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ծրագրի ավարտին պրոֆիլային ծառայություններ է ստացել շուրջ 1700 անձ:
- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար պետական և մասնավոր գործակցությամբ գործել է 2 ապաստարան:
- Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված քաղաքականության շնորհիվ շարունակել են իրականացվել շուրջօրյա խնամքի հաստատություններից երեխաների դուրսբերումը և ընտանիքների հետ վերամիավորումը կամ ընտանեկանին մոտ միջավայրում երեխայի խնամքի կազմակերպումը: Մասնավորապես 2022 թվականին՝
- ✓ շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիքների հետ վերամիավորվել է շուրջ 80 երեխա,
- ✓ ճգնաժամային կենտրոններից՝ 69 երեխա,
- ✓ խնամատար 68 ընտանիքներում խնամք է ստացել շուրջ 105 երեխա, 2018 թվականի 18 հոգեզավակի փոխարեն, որոնք խնամվել են 17 ընտանիքում:

- Պետության կողմից որակավորված 16 մասնավոր սեգմենտի կազմակերպությունների կողմից պետական բյուջեի միջոցներով տարվա ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել է 21 227 աջակցող միջոց, այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի, օրթոպեդիկ և օրթեզի կոշիկներ, լսողական սարքեր, անվասայլակներ, ձայնաստեղծ սարքեր և այլն:
- 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին հավաստագրված ոլորտային հասարակական կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու նպատակով հայտարարված 124 մրցութային լոտեր հաղթած 44 հասարակական կազմակերպությունների սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայություններ է ստացել շուրջ 6700 քաղաքացի, այդ թվում՝
- ✓ թրաֆիքինգի ենթարկված անձ՝ 13,
- ✓ ընտանիքում բռնության ենթարկված անձ՝ շուրջ 1700,
- ✓ տարեցներ՝ շուրջ 3300,
- ✓ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ՝ շուրջ 1300,

- ✓ հաշմանդամություն ունեցող անձինք՝ շուրջ 400:

Այս ծառայությունները դրամաշնորհային կարգով արտապատվիրակվում են հասարակական սեգմենտին՝ սկսած 2019 թվականից:

Երիտասարդություն

• 2022 թվականին «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրով բնակարանային պայմանների բարելավման համար սուբսիդավորում է ստացել 838 երիտասարդ ընտանիք, որից շուրջ 600-ը՝ ՀՀ մարզերից: 2010 թվականից ի վեր մինչ այժմ բնակարանի ձեռքբերման համար սուբսիդավորման (երկրորդային շուկա) հնարավորությունից օգտվել է 7407 երիտասարդ ընտանիք, 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 6087 ընտանիք շարունակում է ստանալ պետական աջակցություն սուբսիդավորման տեսքով՝ շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր չափով:

• Իրականացվել է «Երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը: Հրազդան քաղաքում իրականացվել են երիտասարդների ներուժի զարգացմանը, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

• Դրամաշնորհային մրցույթով որոշվել է ստեղծել երիտասարդական երկու կենտրոն՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքներում: 2022-ին նման կենտրոն է բացվել Վանաձորում (Լոֆտ):

• «100 գաղափար Հայաստանի Հանրապետության համար» երիտասարդական նորարարական գաղափարների համահայկական մրցույթի ընթացքում երիտասարդները ներկայացրել են շուրջ 134 նորարարական գաղափար:

Սպորտ

- Եվրոպայի և աշխարհի մեծահասակների, երիտասարդների, պատանիների առաջնություններում 19 մարզաձևերի հավաքականների մարզիկներ նվաճել են 307 մեդալ, այդ թվում՝ 104 ոսկե, 70 արծաթե և 133 բրոնզե, որն ավելի քան 30%-ով գերազանցում է մինչ այս գրանցված լավագույն արդյունքը՝ 222 մեդալ 2019 թվականին:
- 2022 թվականին կրկնապատկվել են տարեվերջյան միանվագ պարգևատրման գումարները մեծահասակների աշխարհի և Եվրոպայի չեմպիոնների ու մրցանակակիրների, ինչպես նաև նրանց մարզիչների համար. աշխարհի չեմպիոնների 5 մլն ՀՀ դրամը դարձել է 10 մլն ՀՀ դրամ, նրանց հավաքականի գլխավոր մարզչի և անձնական մարզչի 2,5 մլն ՀՀ դրամը դարձել է 5 մլն ՀՀ դրամ, երկրորդ մարզչի 1 մլն ՀՀ դրամը դարձել է 2 մլն ՀՀ դրամ, աշխարհի առաջնության 2-րդ մրցանակակրի 3,5 մլն ՀՀ դրամը դարձել է 7 մլն ՀՀ դրամ, նրա գլխավոր և անձնական մարզիչների 1,75 մլն ՀՀ դրամը դարձել է 3,5 մլն ՀՀ դրամ, նրա երկրորդ մարզչի 700 հազար ՀՀ դրամը դարձել է 1,4 մլն ՀՀ դրամ, աշխարհի առաջնության 3-րդ մրցանակակրի 2 մլն ՀՀ դրամը դարձել է 4 մլն ՀՀ դրամ, նրա գլխավոր և անձնական մարզիչների 1 մլն ՀՀ դրամը դարձել է 2 մլն ՀՀ դրամ, նրա երկրորդ մարզչի 400 հազար ՀՀ դրամը դարձել է 800 հազար

ՀՀ դրամ: Եվրոպայի չեմպիոնների 3 մլն ՀՀ դրամը դարձել է 6 մլն ՀՀ դրամ, նրանց հավաքականի գլխավոր մարզչի և անձնական մարզչի 1,5 մլն ՀՀ դրամը դարձել է 3 մլն ՀՀ դրամ, երկրորդ մարզչի 600 հազար ՀՀ դրամը դարձել է 1,2 մլն ՀՀ դրամ, Եվրոպայի առաջնության 2-րդ մրցանակակրի 1,8 մլն ՀՀ դրամը դարձել է 3,6 մլն ՀՀ դրամ, նրա գլխավոր և անձնական մարզիչների 900 հազար ՀՀ դրամը դարձել է 1,8 մլն ՀՀ դրամ, նրա երկրորդ մարզչի 360 հազար ՀՀ դրամը դարձել է 720 հազար ՀՀ դրամ, Եվրոպայի առաջնության 3-րդ մրցանակակրի 1,2 մլն ՀՀ դրամը դարձել է 2,4 մլն ՀՀ դրամ, նրա գլխավոր և անձնական մարզիչների 600 հազար ՀՀ դրամը դարձել է 1,2 մլն ՀՀ դրամ, նրա երկրորդ մարզչի 240 հազար ՀՀ դրամը դարձել է 480 հազար ՀՀ դրամ, տարեվերջյան միանվագ պարգևատրումը կազմել է շուրջ 669 մլն ՀՀ դրամ:

- Տարվա ընթացքում պատվովճար են ստացել մի շարք բարձր նվաճումներ ունեցող մարզիկներ, այդ թվում՝
  - ✓ Օլիմպիական խաղերի չեմպիոններ (8 մարզիկ ստանում է ամսական 300 հազար ՀՀ դրամ),
  - ✓ Օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիրներ (6 մարզիկ ստանում է ամսական 200 հազար ՀՀ դրամ),
  - ✓ Օլիմպիական խաղերի 3-րդ մրցանակակիրներ (10 մարզիկ ստանում է ամսական 150 հազար ՀՀ դրամ),
  - ✓ Շախմատի համաշխարհային օլիմպիադայի հաղթողներ (7 մարզիկ ամսական ստանում է 200 հազար ՀՀ դրամ),
  - ✓ Շախմատի համաշխարհային օլիմպիադայի 3-րդ մրցանակակիր (1 մարզիկ ստանում է 100 հազար ՀՀ դրամ),
  - ✓ Աշխարհի չեմպիոն (40 մարզիկ ստանում է ամսական 100 հազար ՀՀ դրամ):

Տարվա ընթացքում այս նպատակով հատկացվել է շուրջ 158 մլն ՀՀ դրամ:

- ՀՀ հավաքական թիմերի կազմում օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում 2021 թվականին բարձր արդյունքներ ցուցաբերած 100 մարզիկի և 112 մարզչի 2022 թվականին հատկացվել է անվանական թոշակ: 2021 թվականի համեմատ շահառուների թիվն աճել է՝ 75-ից հասնելով 212-ի: Անվանական թոշակի փաստացի գումարը կազմել է տարեկան շուրջ 551 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականի ավարտին տարվա «10 լավագույն մարզիկներ» մրցույթում հաղթող ճանաչված մարզիկները պարգևատրվել են՝ յուրաքանչյուրը 5 մլն ՀՀ դրամ, միջոցառման ընդհանուր գումարը կազմել է շուրջ 64 մլն ՀՀ դրամ:
- Փարիզ-2024 օլիմպիական խաղերին լավագույնս նախապատրաստվելու նպատակով բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին և մերսողներին տրամադրվում է սպորտային նպաստ: 2022 թվականին սպորտային նպաստ է ստացել 95 մարզիկ, 65 անձնական մարզիչ, 30 գլխավոր և ավագ մարզիչ, 11 բժիշկ և մերսող: Տրամադրված ընդհանուր գումարը կազմում է շուրջ 324 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված 33 մարզական ֆեդերացիաներին հատկացվել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ, որի շրջանակներում անցկացվել է ՀՀ 99 առաջնություն՝ 9420 մարզիկի

մասնակցությամբ, կազմակերպվել է 138 ուսումնամարզական հավաք՝ 2596 մարզիկի մասնակցությամբ, 152 միջազգային մրցաշարի մասնակցել է 1718 մարդ, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների և միջազգային մրցաշարերի (մեծահասակների, երիտասարդների, պատանիների):

- 68 մարզական կազմակերպության տրամադրվել է ամբողջովին նոր 98 անուն մարզագույք՝ շուրջ 281 մլն ՀՀ դրամ արժողությամբ: Մարզագույքը հատկացվել է հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին՝ անկախ ենթակայությունից, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին:
- 2022 թվականին ոլորտում շարունակվել են կապիտալ աշխատանքները: Արթուր Ալեքսանյանի անվան մարզադպրոցի կառուցմանը 2022 թվականին հատկացվել է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ, իրականացվել է ընդհանուր աշխատանքների 33%-ը: Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցի կառուցման համար 2022 թվականին հատկացվել է շուրջ 175 մլն ՀՀ դրամ, իրականացվել է ընդհանուր աշխատանքների 60%-ը:
- 2022 թվականի տարեվերջին մարզերում և Երևանում ֆուտբոլի չորս դպրոց կառուցելու համար Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային հատկացվել է շուրջ 2,5 մլրդ ՀՀ դրամ:
- 2022 թվականին էական թափ է ստացել խոշոր միջազգային մարզական մրցաշարերը ՀՀ-ում իրականացնելու քաղաքականությունը. մայիսի 21-31-ը Երևանում անցկացվել է բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցել է 39 երկրի 219 մարզիկ: Հոկտեմբերի 13-17-ը Երևանում անցկացվել է սամբոյի դեռահասների, պատանիների և երիտասարդների աշխարհի առաջնությունը, որին մասնակցել է 24 երկրներ ներկայացնող շուրջ 550 մարդ, այդ թվում՝ 450 մարզիկ:
- 2022 թվականին կազմակերպվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական 5 մրցաշար, որից 1-ը դպրոցականների շրջանում՝ ունենալով ընդհանուր 5119 մասնակից, որը գրեթե կրկնակի գերազանցում է 2021 թվականին կազմակերպված 2 մրցաշարերի մասնակիցների թիվը: Մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի տարբեր տարիքային խմբերի քաղաքացիներ: Մասնավորապես.

✓ Խճուղային հեծանվավազք՝ 350 մասնակից (պարգևատրվել է 80-ը), պարգևատրման ֆոնդը կազմել է շուրջ 14,9 մլն ՀՀ դրամ,

✓ Խճուղավազք՝ 1392 մասնակից (պարգևատրվել է 126-ը), պարգևատրման ֆոնդը կազմել է շուրջ 22 մլն ՀՀ դրամ,

✓ Սեղանի թենիս՝ 1620 մասնակից (պարգևատրվել է 80-ը), պարգևատրման ֆոնդը կազմել է 14,9 մլն ՀՀ դրամ,

✓ Լող Սևանա լճում՝ 133 մասնակից (պարգևատրվել է 40 հոգի), պարգևատրման ֆոնդը կազմել է 12,9 մլն ՀՀ դրամ,

✓ Դպրոցականների թիմային խճուղավազք՝ մասնակցել է 246 դպրոց, 1724 աշակերտ (պարգևատրվել է 3 դպրոց), պարգևատրման ֆոնդը կազմել է 14,6 մլն ՀՀ դրամ:

- 2022 թվականին իրականացվել է նաև 3 խոշոր զանգվածային միջոցառում՝ դպրոցականների սպորտլանդիա 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև, 7-12-րդ դասարանների միջև սպարտակիադա և նախազորակոչային ու զորակոչային

տարիքի աշակերտների միջև ռազմամարզական խաղեր, որոնց մասնակցել է շուրջ 61 000 մարդ:

Մշակույթ

• 2022 թվականին ըստ ԿԳՄՍՆ համակարգում ընդգրկված թանգարանների՝ թանգարանային այցելությունների ընդհանուր թիվը կազմել է 1 078 645, որը շուրջ 15%-ով գերազանցում է 2021 թվականի այցելությունների (970 300) թիվը՝ մոտենալով նախահամավարակային 2019 թվականի ցուցանիշին (1 249 884):

• Շուրջ 30 հազար անձ մասնակցել է թանգարանների և գրադարանների կողմից կազմակերպված ավելի քան 2900 կրթական ծրագրերի և միջոցառումների:

• Երեխաներին մշակութային հաստատություններ անվճար այցելելու հնարավորություն տվող բաժանորդային ծրագրի շահառուների թիվը 2021 թվականի համեմատ (207 000 երեխա) աճել է շուրջ 30%-ով՝ կազմելով 265 000 երեխա:

• Գյումրիում կազմակերպվել է «Գյումրի. Վարպետաց քաղաք» արհեստների փառատոնը, որն ընդունել է շուրջ 3000 այցելուի, և որին մասնակցել է Հայաստանի 9 մարզի 25 համայնքի 65 վարպետ:

• 2022 թվականին ընթացել են 8 հուշարձանի վերականգնման, ինչպես նաև 3 հուշարձանի վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքներ: Այս նպատակով հատկացվել է շուրջ 195 մլն ՀՀ դրամ: ՀՀ կառավարությունն առանձնահատուկ ուշադրությամբ վերականգնում է պետականության խորհրդանիշ հանդիսացող հուշարձանները, ինչպիսիք են՝ Լոռու և Տավուշի բերդերը, Դաշտադեմի և Ամբերդի ամրոցները:

• Թատրոնների և համերգասրահների ենթակառուցվածքների բարելավման համար 2022 թվականին հատկացվել է ռեկորդային՝ շուրջ 1,3 մլրդ ՀՀ դրամ՝ 2021 թվականի շուրջ 300 մլն ՀՀ դրամի համեմատ: Հատկացումներ են ստացել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, Հայաստանի երգի պետական թատրոնը, Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնը, Երևանի մնջախաղի պետական թատրոնը: Բացի այդ, շուրջ 100 մլն ՀՀ դրամ է հատկացվել Հայաստանի ազգային պատկերասրահին՝ վերելակների փոխարինման համար:

• Մշակութային հաստատությունների շուրջ 90%-ը գրանցել է սեփական եկամուտների աճ: Որոշ կառույցների եկամուտները գրեթե հավասարվել են պետական հատկացումների ծավալների 50%-ին: Օրինակ, Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի սեփական եկամուտները կազմել են պետական բյուջեից հատկացվող գումարի շուրջ 75%-ը, իսկ Երևանի կամերային պետական թատրոնի դեպքում սեփական եկամուտները նույնիսկ

գերազանցել են պետական հատկացումների ծավալը՝ ի հաշիվ տոմսերի վաճառքի ծավալների աճի:

- Մշակութային և գեղարվեստական կրթության ոլորտում շարունակական կրթամշակութային նախագծերին («Մեկնարկ», «Դպրոցականի ֆիլհարմոնիա», «Քո արվեստը դպրոցում», «Դաս Ա», «Դասարան+Դասական») 2022-ին ավելացել են նոր նախաձեռնություններ՝ «Դասարվեստ», «Արվեստանոցներ Տավուշի մարզում», «Մարզերի պատանի երաժիշտների համերգաշարեր», «Իմ սիմֆոնիկ»: «Դասարվեստ» նախագծով Հայաստանի բոլոր մարզերում, այդ թվում՝ սահմանամերձ համայնքներում, աշակերտները հնարավորություն են ունեցել ծանոթանալու Ազգային պատկերասրահի գլուխգործոցներին: 17 կրթամշակութային ծրագրերին մասնակցել է ավելի քան 660 դպրոցի շուրջ 19 000 աշակերտ: Առաջին անգամ իրականացվել է «Խոսող կտավներ» նախագիծը տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար:
- Գրքի երևանյան ամենամյա փառատոնը 2022 թվականին վերածվել է միջազգային փառատոնի, որին մասնակցել է 7 երկիր, 165 գրող, 30 հրատարակչություն: Փառատոնին մասնակցել է շուրջ 15 000 այցելու, անցկացվել է 60 տարբեր միջոցառում, վաճառվել է ավելի քան 10 000 գիրք:
- Հանրային հեռուստաընկերության և Եվրոպական հեռարձակողների միության համագործակցությամբ 2022 թվականին Երևանում կայացել է 20-րդ հոբելյանական «Մանկական Եվրատեսիլ» մրցույթը, որին մասնակցել են 16 երկրի ներկայացուցիչներ: Երևանում կայացած «Մանկական Եվրատեսիլը» շուրջ 33 մլն դիտում է ունեցել: Միջինում, տվյալ պահի բոլոր հեռուստադիտողների 12,8%-ը դիտել է Հայաստանի հանրային հեռուստատեսության կազմակերպած մրցույթը: Մրցույթի առցանց դիտումները ևս գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը. ուղիղ հեռարձակումը 2021 թվականի համեմատ 4 անգամ ավելի շատ մարդ է դիտել: «Մանկական Եվրատեսիլ 2022» մրցույթը հեռուստատեսային վարկանիշով աննախադեպ է նաև Հայաստանի հեռուստատեսության պատմության մեջ:

Շրջակա միջավայր

- 2022 թվականին Ջրային օրենսգրքի և հարակից օրենքների փաթեթի ընդունմամբ.

- 2024 թվականի հունվարի 1-ից սահմանվել է ձկնաբուծարաններում ջրի փակ շրջանառու համակարգի պարտադիր պահանջ: Համակարգի արդյունավետ ներդրման նպատակով ձկնաբույծների հետ տարվում են աշխատանքներ՝ համատեղ ձևավորված աշխատանքային խմբի շրջանակներում:
- Սահմանվել է բնօգտագործման վճարի դրույքաչափ՝ հիդրոէներգետիկ նպատակով մակերևութային ջրերի օգտագործման յուրաքանչյուր խոր. մ-ի համար 0,1 ՀՀ դրամ, որը պետական բյուջե շուրջ 620 մլն ՀՀ դրամ տարեկան լրացուցիչ մուտք կապահովի:
- Վերանայվել են ՋԹ-ների համար նախատեսված պետական տուրքերի դրույքաչափերը, որը պետական բյուջե շուրջ 13,6 մլն ՀՀ դրամ տարեկան լրացուցիչ մուտք կապահովի:

- 2024 թվականի հունվարի 1-ից սահմանվել է նաև ՀԷԿ-երի համար տվյալների առցանց փոխանցմամբ էկոլոգիական թողքի հաշվառման պարտադիր պահանջ:

- 2022 թվականի ընթացքում տեղադրվել է 25 համակարգ, որից 17-ն Արարատյան դաշտում: Համակարգերի ներդրմամբ առցանց եղանակով ապահովվում է ջրօգտագործողների օգտագործած ջրի ծավալի վերաբերյալ ստույգ և ճշգրիտ տվյալների հասանելիություն: 2024 թվականից առցանց ջրաչափական համակարգերի առկայությունը պարտադիր է բոլոր ջրօգտագործողների համար, որոնց թիվը ներկա պահին 1287 է:
- Ուսումնասիրվել է Արարատի մարզի 65 և Արմավիրի մարզի 81 համայնքներում առկա 1873 խորքային հոր, գույքագրվել է լուծարման կամ կոնսերվացման ենթակա 44 հոր, որից առաջնահերթ է դիտարկվել 29-ը:
- 2022 թվականին ոռոգման նպատակով Սևանա լճից բաց է թողնվել 165 մլն խոր. մ՝ օրենքով սահմանված տարեկան 170 մլն խոր. մ ջրաքանակից քիչ (2021 թվականին նույն ցուցանիշը կազմել է 227,6 մլն խոր. մ):
- «Սևան» ԱՊ-ի կողմից կատարվել են 46,66 հեկտար անտառմաքրման աշխատանքներ (2021 թվականին նույն ցուցանիշը կազմել է 4,18 հա):
- 2022 թվականի արդյունքներով ոլորտի կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերը 2019 թվականի համեմատ աճել են շուրջ 750 մլն ՀՀ դրամով, մասնավորապես՝
- ✓ «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 71,4 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Դիլիջան» ԱՊ» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 25,8 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 44,5 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Խոսրովի անտառ» ՊԱ» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 2,2 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Արփի լիճ» ԱՊ» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 8,2 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 178,5 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 308,5 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Զվարթնոց» ԱՕԿ-ի մուտքերն աճել են 105,8 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի մուտքերն աճել են 3,4 մլն ՀՀ դրամով,
- ✓ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մուտքերը նվազել են 3,7 մլն ՀՀ դրամով:
- Իրականացվել են ԲՀՊՏ ՊՈԱԿ-ների ձեռնարկատիրական գործունեության զարգացմանն ուղղված քայլեր, մասնավորապես՝
- ✓ հողատարածքների վարձակալական մեկնարկային նոր գները մոտարկվել են շուկայականին,
- ✓ սահմանվել են հողամասերի վարձակալության պայմանագրերի նոր չափորոշիչներ:
- Կատարվել են 237 հեկտար անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ, նախորդ տարվա ցուցանիշը գերազանցվել է 21 հեկտարով: Աճեցվել է 250 հազար հատ փակ արմատային համակարգով տնկանյութ:
- Իրականացվել է 2 համապետական ծառատունկ (2022 թվականի մայիսի 7-ին և նոյեմբերի 5-ին):

- Կատարվել են 4440 հեկտար անտառածածկ տարածքում վնասատուների դեմ ավիացիոն-քիմիական պայքարի աշխատանքներ:
- Անտառամերձ բնակչությանն անվճար տրամադրվել է շուրջ 80 հազար խոր. մ պահեստային թափուկ վառելափայտ, ինչը նախորդ տարվա 74,3 հազար խոր. մ-ի համեմատ ավելի է մոտ 7,7 %-ով:
- Կանոնակարգվել է սիգի արդյունագործական որսը: Սևանա լճում գրանցվել է սիգի պաշարի զգալի աճ՝ շուրջ 2300 տոննայից հասնելով 5300 տոննայի, որի հիման վրա 2022 թվականին նախորդ տարվա համեմատ կրկնապատկվել է արդյունագործական որսի թույլատրելի սահմանաչափը՝ դառնալով 600 տոննա: Ներգրավվել է շուրջ 800 ձկնորս՝ նախորդ տարվա 327-ի համեմատ: Փաստացի որսված 578 տոննայի համար գանձվել է մոտ 37,6 մլն ՀՀ դրամ բնօգտագործման վճար (2021 թվականին նույն ցուցանիշը կազմել է 20,8 մլն ՀՀ դրամ): Սահմանվել է սիգի ձկնկիթի արտահանման արգելք:
- Սևանա լիճ թափվող գետեր է բաց թողնվել շուրջ 15 500 հատ ամառային իշխան և շուրջ 163 000 հատ գեղարքունի իշխան:
- Վայրի բնություն է բաց թողնվել ՀՀ-ում բնության մեջ անհետացած համարվող ազնվացեղ եղջերուների առաջին խմբաքանակը (3 առանձնյակ):
- «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի շրջանակներում 2018-2022 թվական-ներին ջերմաարդիականացվել է շուրջ 140 շենք (2022 թվականի ընթացքում՝ 59 շենք, որից 25 բազմաբնակարան և 34 հասարակական նշանակության): Արդյունքում բազմաբնակարան շենքերում առաջանում է առնվազն 50% խնայողություն:
- Ընդունվել է Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը, որը ներառում է 26 առաջնահերթ միջոցառում՝ ուղղված կլիմայի փոփոխության հանդեպ առավել խոցելի ջրային ռեսուրսների պահպանությանը:
- 2022 թվականի ընթացքում Հայաստան է ներմուծվել էլեկտրական շարժիչով 5486 տրանսպորտային միջոց, որից միայն էլեկտրամոբիլ՝ 2663՝ 2021 թվականի 1890-ի համեմատ:
- Մեկնարկել է Հայաստանում թափոնների կառավարման համակարգի բարելավման 4-ամյա ծրագիրը, որն ուղղված է արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի ներդրման օրենսդրական կարգավորմանը, ինչպես նաև պիլոտային ծրագրով ընտրված համայնքում աղբի տարանջատման ազգային մոդելի մշակմանը և ներդրմանը, թափոնների կառավարման ոլորտում կարողությունների զարգացմանը:
- Գյումրու «Շիրակ» օդանավակայանում շահագործման է հանձնվել վերջին սերնդի օդերևութաբանական կայան:
- «Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» պիլոտային ծրագրի շրջանակներում առաջին անգամ իրականացվել է շուրջ 40 հեկտար փակված քարհանքի տարածքի լանդշաֆտի վերականգնում:

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընտրական իրավունք և ինստիտուցիոնալ ժողովրդավարություն

• 2022 թվականին մեկնարկել է սահմանադրական բարեփոխումների իրականացման նոր գործընթացը, որով պայմանավորված ձևավորվել են Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, ինչպես նաև Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովը, որոնք 2022 թվականի ընթացքում հանրության լայն շրջանակների հետ ունեցել են տասնյակ քննարկումներ ինչպես Երևանում, այնպես էլ Շիրակի, Լոռու, Վայոց ձորի և այլ մարզերում: Քննարկումներից հետո որոշում է կայացվել պահպանել խորհրդարանական կառավարման ձևը՝ այն հետագայում առավել զարգացնելու հեռանկարով:

• ՀՀ կառավարությունը մեկնարկել է նաև նախորդ ընտրությունների ընթացքում վեր հանված խնդիրների բացահայտմանն ու լուծմանն ուղղված աշխատանքների իրականացման գործընթացը: Սահմանադրական բարեփոխումների համատեքստում նախատեսվում են սահմանադրական կառուցակարգերի լավարկումներ:

Դատաիրավական բարեփոխումներ

• 2022 թվականին ավարտվել են Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման աշխատանքները: Ստեղծվել է նաև Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, իսկ Վճռաբեկ դատարանում քաղաքացիական և վարչական պալատի փոխարեն ձևավորվել են երկու առանձին՝ քաղաքացիական և վարչական պալատներ, ինչպես նաև ստեղծվել է նոր՝ հակակոռուպցիոն պալատը՝ ապահովելով հակակոռուպցիոն գործերի եռաստիճան քննության ողջ շղթան:

• Դատական գործերի մասնագիտացված քննությունն ապահովելու և դատարանների ծանրաբեռնվածությունը հնարավորինս նվազեցնելու նպատակով Երևան քաղաքում առանձնացվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի քաղաքացիական և քրեական դատարանները:

• Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի դատավորների վարձատրությունն ավելացել է միջինը 400 հազարից մինչև 600 հազար ՀՀ դրամով՝ կազմելով շուրջ 1,4 միլիոն ՀՀ դրամ՝ Սահմանադրական դատարանի դատավորների համար, և շուրջ 1,1 միլիոն ՀՀ դրամ՝ Վճռաբեկ դատարանի դատավորների համար (հարկումից հետո):

• Դատական համակարգը նոր պրոֆեսիոնալ կադրերով համալրելու նպատակով նախատեսվել են դատավորների ներգրավման առավել ճկուն ընթացակարգեր՝ հնարավորություն ընձեռելով ընդգրկվել դատավորների հավակնորդների ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսանելու, սակայն որակապես ավելի բարդ քննություն հանձնելով, ինչպես նաև նախատեսվել է որոշակի մասնագիտական ստաժ ունեցող անձանց համար միայն բանավոր քննություն հանձնելու պահանջը՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար:

• Ընդլայնվել է գործերի քննության պարզեցված և գրավոր ընթացակարգերի կիրառությունը, դատավորներին հնարավորություն է ընձեռվել միասնական համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ստանալու գործի քննության համար անհրաժեշտ տվյալներ առանց պետական մարմիններին դիմելու:

• Վեճերի լուծման արբիտրաժային կարգի խթանման նպատակով՝ մինչև 5 մլն ՀՀ դրամի բռնագանձման արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման համար դատարանից կատարողական թերթ ստանալու անհրաժեշտությունը վերանում է:

• Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմամբ պայմանավորված՝ ամբողջությամբ ավարտվել են Երևան քաղաքի Բաշինջաղյան 100, Վազգեն Սարգսյան 5, Գարեգին Նժդեհ 23/1, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեներում նորոգման և հիմնանորոգման աշխատանքները: Շենքերը հագեցվել են անհրաժեշտ նյութատեխնիկական և կահավորման բոլոր միջոցներով և հանձնվել շահագործման:

• Բարելավվել է հաշտարարության ինստիտուտը՝ որոշ ընտանեկան գործերով սահմանելով մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջը, առցանց հաշտարարության իրականացման հնարավորությունը, ինչպես նաև կատարելագործելով հաշտարարների ուսուցման և որակավորման գործընթացը:

• Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնական կայքում ներդրվել է «Անձնական գրասենյակ» էլեկտրոնային հարթակը, որում գրանցվելով՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք կարող են ամբողջական տեղեկատվություն ստանալ իրենց նկատմամբ հարուցված կատարողական վարույթների մասին:

• Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակը լրացվել է ևս 3 խմբով, 10-ով ավելացվել է հանրային պաշտպանների թվակազմը: Որոշակի մասնագիտական պահանջներին բավարարող անձանց համար նախատեսվել է հնարավորություն մասնակցելու փաստաբանի որակավորման քննություններին, առանց փաստաբանական ակադեմիայում ուսանելու:

• Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ներդրվել է աշխատակիցների պարգևատրման նոր պիլոտային տարբերակ, որով աշխատակցի պարգևատրման չափը որոշվում է իր կատարած աշխատանքին համապատասխանող ցուցիչների միջոցով: Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գանձված կատարողական ծախսերն ավելի քան 1,3 մլրդ ՀՀ դրամի չափով գերազանցել են ծառայության պահպանության համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը: Քաղաքացիների հաշիվների ապաարգելադրման գործընթացի թվայնացման և ժամկետների կրճատման նպատակով՝ գործող 13 առևտրային բանկում օպտիմալացվել է դրամական միջոցների բռնագանձման գործընթացը (2-3 օր՝ նախկին 7 օրվա փոխարեն):

• Արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ձեռք է բերել ժամանակակից ստի դետեկտոր (պոլիգրաֆ): Ձեռք է բերվել նաև հատուկ սարքավորում՝ նախատեսված փաստաթղթերի, թղթադրամների, ձեռագիր գրառումների և ստորագրությունների, լիարժեք հետազոտության կատարման համար: Նոր տեխնիկայով հնարավոր է դարձել նաև մոդելավորել ու ստանալ դեպքի վայրի,

դրանում առկա հրազենային վնասվածքների տեղակայությունների 3D ձևաչափով պատկերներ և պարզել հրազենային վնասվածքներն առաջացնող զենքի և կրակողի դիրքը դեպքի վայրում:

• 2022 թվականին մեկնարկել է Հայաստանում ժամանակակից պահանջներին բավարարող, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային գործեր քննող նոր Արբիտրաժային կենտրոն ստեղծելու գործընթացը, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2023 թվականի առաջին կիսամյակում:

Քրեական և քրեադատավարական ոլորտի բարեփոխումներ

• Կալանավորմանն այլընտրանք հանդիսացող՝ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների, ինչպես նաև ազատության սահմանափակում պատժատեսակի կիրառությունն ապահովելու համար ձեռք են բերվել էլեկտրոնային հսկողության անհրաժեշտ միջոցները (200 միավոր ոտքին կամ ձեռքին կրելու համար) և ծրագրային ապահովումը: Ներկա դրությամբ 46 անձի նկատմամբ կիրառվել են տնային կալանք կամ վարչական հսկողություն խափանման միջոցները, որից 36-ը՝ տնային կալանք, իսկ 10-ը՝ վարչական հսկողություն: Խափանման միջոցները կիրառվել են ինչպես նախաքննության փուլում, այնպես էլ դատական վարույթում քննվող քրեական գործերով՝ ապահովելով քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծը:

• Վերանայվել է նաև նախաքննության մարմինների և դատախազության աշխատակիցների համալրվածությունը՝ Քննչական կոմիտեի հաստիքների թիվն ավելացնելով 210-ով, Հակակոռուպցիոն կոմիտեինը՝ 100-ով, իսկ Դատախազությանը՝ 20-ով:

• 2022 թվականի ընթացքում կատարված օրենսդրական բարեփոխումների շրջանակում ՀՀ պետական եկամուտների կոմիտեում դադարեցվել է քննչական ծառայությունը, իսկ նախկին ՊԵԿ քննիչներին ընդդատյա քրեական վարույթների նախաքննությունը 2023 թվականի հունվարի 1-ից վերապահվել է ՀՀ քննչական կոմիտեին: Սրանով ապահովվելու են քրեական վարույթների ընթացքում օրենքների նույնական կիրառումը, մեկ միասնական մարմնում նույն գործառույթների և առավել արդյունավետ քննության իրականացումը:

Կոռուպցիայի դեմ պայքար

Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ կառավարության համար ունի սկզբունքային նշանակություն: Այս առումով անհանգստացնող ահազանգ էր այն, որ «Transparency International»-ի «Կոռուպցիայի ընկալման ցուցիչ 2022 թ.» զեկույցում Հայաստանը գրանցել է հետընթաց՝ 180 երկրների շարքում զբաղեցնելով 63-րդ տեղը (46 միավոր) և նախորդ տարվա զեկույցի համեմատ դիրքերը զիջելով 5 հորիզոնականով (49 միավոր): Ըստ զեկույցի՝ անկումն արտացոլում է հակակշիռների պահպանման, իրավապահ մարմինների ամբողջականության

ապահովման, դատական անկախության ապահովման և քաղաքացիական տարածքի պաշտպանության խափանումները:

Այսուհանդերձ, ԵՄ աջակցությամբ 2022 թվականին հրապարակված Արևելյան գործընկերության պետությունների եվրոպական և միջազգային ստանդարտներին մոտարկման և գնահատման մասով 2020-2021 թվականների ինդեքսի համաձայն՝ Հայաստանը «կոռուպցիայի դեմ պայքար» հորիզոնականում զբաղեցրել է 1-ին տեղը՝ 0,88 միավորով (առավելագույնը՝ 1 միավոր):

Հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում ՀՀ կառավարությունն իրակա-նացրել է հետևյալ քայլերը.

- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբվել են մեկ իրավական ակտում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում՝ ապահովելով առկա կարգավորումների միասնականությունը և բացառելով տարբեր օրենքներում տարաբնույթ կարգավորումների առկայությունը:
- Հաստատվել է հայտարարագիր ներկայացնող անձանց նոր շրջանակը՝ ներառելով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50% և ավելի ՀՀ և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարներին (կոլեգիալ գործադիր մարմնի անդամներին):
- Կատարելագործվել է հավատարմագրային կառավարման ինստիտուտը՝ սահմանելով պաշտոնատար անձի և հավատարմագրային կառավարչի փոխկապակցվածությունը բացառող կարգավորում, զուգահեռաբար հավատարմագրային կառավարիչների համար սահմանելով մասնագիտացվածության պահանջ: Վերանայվել է շահերի բախման հասկացությունը՝ ներառելով նաև պոտենցիալ շահերի բախման իրավիճակը, ինչպես նաև հստակեցվել է շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքների շրջանակը:
- Օրենսդրական բարեփոխումներ են իրականացվել՝ միտված ազդարարման համակարգի կատարելագործմանը: Հստակեցվել են ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները, նախատեսվել է նոր ազդարարման տեսակ՝ ազդարարում հանրությանը: Մարդու իրավունքների պաշտպանը սահմանվել է որպես իրավասու մարմին, որը կհավաքի պետական մարմինների կողմից ստացված վիճակագրությունը, և դա ենթակա կլինի հրապարակման: Բացի դրանից, Մարդու իրավունքների պաշտպանին վերապահվել են ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու, ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման և այլ լիազորություններ:
- 2022 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ դատարան է ներկայացվել ընդհանուր 21 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ և ներկայումս քննվում են ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: Ներկայացված հայցերով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 52 մլրդ ՀՀ դրամ, բռնագանձման է ենթակա նաև 296 գույք (նշված գույքերի մեծամասնության միջին շուկայական արժեքների հանրագումարը շուրջ 34 մլրդ ՀՀ դրամ է): Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով

ներկայացված հայցի նախնական ապահովում կիրառելու մասին միջնորդությունների հիման վրա 2022 թվականին արգելադրվել է շուրջ 360 անշարժ և շուրջ 60 շարժական գույք, ինչպես նաև շուրջ 100 իրավաբանական անձանցում ունեցած մասնակցություններ:

- 2022 թվականին քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված 29,4 մլրդ ՀՀ դրամի վնաս:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ

- 2022 թվականի սեպտեմբերից քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալները հնարավորություն են ստացել միջնակարգ կրթություն ստանալ նաև 19 տարեկանից հետո՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Ներկայումս այդ ծրագրին մասնակցում է 82 դատապարտյալ:
- Դատապարտյալների անվտանգ և ապահով փոխադրումներն իրականացնելու նպատակով ձեռք են բերվել և համապատասխան սարքավորումներով կահավորվել են 10 ժամանակակից տրանսպորտային միջոցներ:
- «Աբովյան», «Արմավիր», «Սևան» քրեակատարողական հիմնարկներում կատարվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ՝ հատուկ հարմարեցված պայմաններ ստեղծելով անազատության մեջ պահվող և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ներդրվել է տեսահսկման համակարգ՝ բաղկացած շուրջ 400 տեսախցիկից:
- 2022 թվականին իրականացվել են 2021 թվականի դեկտեմբերին փակված «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գույքի, սպառազինության և այլ միջոցների գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքները:
- Բանտային բժշկության ոլորտի բարեփոխումներով քրեակատարողական հիմնարկներում ներդրվել է նաև հեռաբժշկության ծրագիրը: Այն ապահովելու է դատապարտյալների օպերատիվ կերպով բժշկական ծառայությունների ստացումը:
- Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքների իրականացման շրջանակներում ՀՀ-ում առաջին անգամ բացվել է Մասնագիտական ուսուցման կենտրոն, որտեղ դասավանդվելու են տարբեր հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ:
- Հայտարարվել է նոր քրեակատարողական հիմնարկի նախագծանախահաշվային աշխատանքների մրցույթը: Նախատեսվում է առաջիկա 3-4 տարիների ընթացքում շահագործման հանձնել քրեակատարողական հիմնարկի սանրաձև մոդելին համապատասխան նոր հիմնարկ, որը կունենա 800-850 անձանց պահման համար նախատեսված պայմաններ: Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ պայմանավորված՝ կփակվեն «Նուբարաշեն», «Երևան-Կենտրոն»,

«Դատապարտյալների հիվանդանոց» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները:

• Մշակվել է օրենսդրական փաթեթ, որով քրեակատարողական ծառայությունում ներդրվելու է քրեակատարողական ծառայողների ատեստավորման համակարգ: Ըստ այդմ՝ քրեակատարողական ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձինք պարտավոր են լինելու երեք տարվա ընթացքում անցնել ատեստավորում:

• Անդրադառնալով բանտային բնակչության խտության ցուցանիշներին՝ հարկ է ընդգծել, որ 2022 թվականի դրությամբ միջին օրական հաշվարկով քրեակատարողական հիմնարկներում պահվել է 2265 անձ, որոնցից՝ 1055-ը եղել է դատապարտյալ, իսկ 1210-ը՝ կալանավորված անձ: 2021 թվականի համեմատությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվն ավելացել է 207-ով:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• **Ռազմավարական պլանավորման և քաղաքականությունների մշակման** գործառույթների կատարելագործման նպատակով հաստատվել են Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը և 3-ամյա անելիքների ճանապարհային քարտեզը. ռազմավարությունն առաջին անգամ հռչակել է պետական հատվածի համապարփակ և խորքային բարեփոխումների օրակարգը: Մեկնարկել են ռազմավարական պլանավորման, մարդկային ռեսուրսների կառավարման, ծառայությունների թվայնացման և ինստիտուտների արդիականացման ուղղությամբ բարեփոխումները:

• **Պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների լավարկման** ուղղությամբ քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ) է հիմնվել միավորված 5 համայնքում: Ներկա դրությամբ ՔՍԳ-ներ են գործում հանրապետության 53 համայնքի 72 բնակավայրի վարչական գրասենյակներում: Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին պետական գրանցման ավտոմատացված համակարգ մուտք գործելու նպատակով մուտքի անուն տրամադրելու համար 2022 թվականին պայմանագրեր են կնքվել Կադաստրի կոմիտեի և 12 համայնքի հետ: Կադաստրի կոմիտեի ծառայություններն ավելի հասանելի դարձնելու նպատակով ներդրված թվային լուծումների շնորհիվ գրանցվել է քաղաքացիների կողմից առցանց դիմումների թվի աճ. եթե 2021 թվականին առցանց ներկայացվել է 91 260 դիմում, ապա 2022 թվականին այդ թիվը կազմել է 194 039, որը կազմում է ընդհանուր դիմումների մոտ 25%-ը:

• **Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի** ձևավորման նպատակով հաստատվել են ՀՀ-ում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները: 2022 թվականի հուլիսի 29-ին գործարկվել է ԱՏՏԵ ՀՀ ազգային գեոպորտալը: Ազգային գեոպորտալի

քարտեզագրական բաղադրիչում՝ maparmenia.am հարթակում արտացոլված են Կադաստրի կոմիտեի կողմից վարվող բազային շերտերը՝ գետային ցանցը, լճերը, ճանապարհները, ռելիեֆը, կադաստրային քարտեզները, օրթոֆոտոհատակագծերը և այլն: Այդ շերտերն առցանց հասանելի են հանրությանը: Ազգային գեոպորտալի հնարավորություններն ընդլայնելու նպատակով գործարկվել է առցանց քարտեզագրական ծառայությունը՝ WMS:

- **Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման** ոլորտում 2022 թվականին համայնքների միավորման գործընթացի խոշոր փուլն իրականացվեց: ՀՀ-ում ներկայումս առկա է 71 համայնք՝ ներառյալ Երևանը և Գյումրին: 58 միավորված համայնքներին տրամադրվել է 466 միավոր կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկա, 45 միկրոավտոբուս, 3625 աղբի կոնտեյներ, տեղադրվել են 121 արևային պանել, որոնց ֆինանսավորումը կատարվել է հետևյալ համամասնությամբ՝ 20%՝ ՀՀ կառավարություն, 5%՝ շահառու համայնքներ, 75%՝ միջազգային դոնոր կազմակերպություններ:
- ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով 2018-2022 թվականների ընթացքում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել է 2070 ծրագիր՝ 107,2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ 53,4 մլրդ ՀՀ դրամ՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ, 51,4 մլրդ ՀՀ դրամ՝ համայնքների համաֆինանսավորմամբ և 2,4 մլրդ ՀՀ դրամ՝ մասնավոր ներդրումների ներգրավմամբ:
- Միայն 2022 թվականին ՀՀ համայնքներում իրականացվել է շուրջ 36,6 մլրդ ՀՀ դրամի սուբվենցիայի ծրագիր, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմել է 18,84 մլրդ ՀՀ դրամ, ՀՀ համայնքների համաֆինանսավորումը՝ 17,24 մլրդ ՀՀ դրամ և մասնավոր ներդրողների մասնակցությունը՝ 521,5 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականին Երևան քաղաքում իրականացվել են հետևյալ խոշոր ծրագրերը.

  - ✓ Ձեռք է բերվել 8,6 մ երկարությամբ 150 հատ 7,9 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ ավտոբուս, որոնք շուտով կսկսեն շահագործվել:
  - ✓ Ձեռք է բերվել 12 մ երկարությամբ 87 հատ 10,6 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ ավտոբուս, որոնք շուտով կսկսեն շահագործվել:
  - ✓ Ձեռք է բերվել 12 մ երկարությամբ 15 հատ 2,78 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ տրոլեյբուս, որոնք մարտի սկզբին կլինեն ՀՀ-ում:
  - ✓ Փոխարինվել է 467 հատ վերելակ՝ 4,6 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ: 2018 թվականից մինչ օրս Երևան քաղաքում ընդհանուր առմամբ փոխարինվել է 1041 վերելակ, իսկ այս տարի նախատեսվում է փոխարինել ևս 700 վերելակ, որից 600-ի գումարը հատկացվելու է ՀՀ կառավարության կողմից:
  - ✓ Կառուցվել և վերակառուցվել է 6 կմ կոյուղատար և հեղեղատար համակարգ:
  - ✓ Լուսավորության արդիականացման շրջանակներում միայն 2022 թվականին փոխարինվել է 6512 լուսատու, իսկ 2018 թվականից մինչ օրս փոխարինված լուսատուների շնորհիվ տարեկան էլեկտրաէներգիայի խնայողությունը կազմում է առնվազն 439 մլն ՀՀ դրամ:

- ✓ Շահագործման է հանձնվել Արգավանդ-Շիրակ կամուրջը, իսկ Աշտարակ-Բաբաջանյան ճանապարհը շահագործման կհանձնվի 2023 թվականին:
- ✓ Մետրոպոլիտենում փոխարինվում են օդափոխության 14 համակարգեր:
- ✓ Մետրոպոլիտենում ավարտվել են դրենաժային թունելի փորման աշխատանքները:
- ✓ Երևանյան լճի տարածքում եղեգներից մաքրվել է 8 հեկտար տարածք, տեղադրվել է աղբարոսիչ ցանց, ընթացքի մեջ են հանգստի գոտու կառուցման աշխատանքները: 2023 թվականի ընթացքում Հրազդան գետի երկայնքով նախատեսվում է կառուցել ևս 3 աղբարոսիչ ցանց, ինչպես նաև ջրի մաքրման կայան:

• Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում ավարտական փուլում են Հրազդան համայնքում ԵՄ չափանիշներին համապատասխան առաջին սանիտարական աղբավայրի, Ակունք և Մարտունի բնակավայրերում երկու փոխաբեռնման կայանների շինարարական աշխատանքները:

• 2022 թվականի ընթացքում սահմանամերձ համայնքներին հատկացվել է շուրջ 997 մլն ՀՀ դրամ:

Պետական գույքի կառավարում

• Օտարվել է 20,7 մլրդ ՀՀ դրամ արժեքով պետական գույք (անշարժ գույք, բաժնեմաս, շարժական գույք)՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով շուրջ 1378% աճ:

• 2022 թվականի պետական և համայնքային բյուջեների փաստացի մուտքերը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնությամբ) կազմել են ընդհանուր 11,2 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ առնվազն շուրջ 300% աճ:

• Անշարժ գույքի օտարումից (ներառյալ՝ լուծարային գործընթացը) ստացվել է 5,3 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ առնվազն 350% աճ), շարժական գույքի օտարումից՝ 178 մլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ 20% աճ), հողերի կադաստրային արժեքի վճարումներից՝ 4 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ 263% աճ), մասնավորեցումից՝ 845 մլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ 107% աճ), վարձակալությունից՝ 470 մլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ 146% աճ), կապի սարքավորումներից՝ 319 մլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ 18% աճ):

• Օտարման, մասնավորեցման, վարձակալության, օգտագործման իրավունքով տրամադրման պայմանագրերով ստանձնված ներդրումային պարտավորությունները կազմել են 84,2 մլրդ ՀՀ դրամ:

• Նվիրատվությամբ (անհատույց սեփականաշնորհմամբ) չսեփականաշնորհված բնակեցված տարածքների բնակիչներին տրամադրվել են 38 բնակելի տարածք (35 ընտանիքի):

• 2022 թվականին հաստատվել են Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Հարկաբյուջետային քաղաքականություն

- Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազեցման և մինչև 2026 թվականը 60%-ից ցածր մակարդակի ապահովման, ինչպես նաև հարկաբյուջետային կանոններով սահմանված պետական ֆինանսների «ոսկե կանոնների» ամբողջական պահպանման վերադարձի թիրախներն ապահովված են: Մասնավորապես 2022-2026 թվականների ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման ծրագրով նախատեսված էր 2022 թվականին 60,5%, իսկ 2026 թվականին՝ 53,8%, մինչդեռ 2022 թվականի արդյունքներով կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշն արդեն իսկ նվազել է 50%-ից՝ կազմելով 46,7% և միաժամանակ ապահովվել է ամբողջական համապատասխանություն «ոսկե կանոնին»: Սա ստեղծում է լրացուցիչ «կայունության պաշար» հնարավոր ռիսկերին դիմակայելու համար:
- 2022 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը կազմել է 252 մլրդ ՀՀ դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 79,2%-ը, իսկ արտաքին վարկերի հաշվին պակասուրդի զուտ ֆինանսավորումը՝ 66,2 մլրդ ՀՀ դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 20,8%-ը: Նախորդ տարվա համեմատությամբ ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորման կշիռն աճել է 38,6%-ով: 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամով արտահայտված պարտքի կշիռը կազմել է 37,9%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 9,1%-ով, որը մեղմել է պարտքի զգայունությունը փոխարժեքի տատանումների նկատմամբ:
- Հարկային օրենսգրքում իրականացվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ, որոնք հնարավորություն են ստեղծել մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիի համակարգը դարձնելու մետաղների միջազգային գներին ավելի արձագանքող և ավելի պրոգրեսիվ՝ դրանով իսկ մետաղների բարձր գների պայմաններում պետական բյուջեի համար ապահովելով լրացուցիչ հարկային եկամուտներ: Բարձրացվել է նաև 2023 թվականի ռոյալթիի կանխավճարների չափը և 25%-ի փոխարեն սահմանվել է 30%:
- Բարձրացվել է խաղային ոլորտի (ինտերնետ շահումով խաղերի և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի) հարկային բեռը, մասնավորապես, ինտերնետ շահումով խաղերի և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի մասով խաղադրույքներ ընդունելու իրավունք ձեռք բերելու համար սահմանվել են պետական տուրքեր՝ ինտերնետ շահումով խաղերի մասով յուրաքանչյուր 100 մլրդ ՀՀ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝ 175 մլն ՀՀ դրամի չափով, տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի մասով՝ յուրաքանչյուր 50 մլրդ ՀՀ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝ 50 մլն ՀՀ դրամի չափով: Խաղային ոլորտի մասով վերոնշյալ պետական տուրքի դրույքաչափերը կիրառվելու են 2023 թվականի հուլիսի 1-ից:
- «Գովազդի մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություն և լրացումներ, ինչի արդյունքում ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի, տոտալիզատորի գովազդների հանդեպ կիրառվում են

սահմանափակումները, որոնք կիրառվում են շահումով խաղերի և խաղատների գովազդների նկատմամբ: Մասնավորապես՝ արգելվել է.

- ✓ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի (այդ թվում՝ տոտալիզատորի) կամ դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- ✓ հեռուստահաղորդակցության ալիքներով և ռադիոյով,
- ✓ համացանցով (բացառությամբ իր պաշտոնական կայքի),
- ✓ արտաքին գովազդը (բացառությամբ (խաղասրահի, բուքմեյքերային գրասենյակի) շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, ՀՀ սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում),
- ✓ արգելվում է գովազդելու վիճակախաղը մարզադաշտերի կողային վահանակների միջոցով մարզական իրադարձությունների ընթացքում և (կամ) այդ մարզական իրադարձություններին մասնակցող թիմերի մարզահագուստի վրա:

- 2022 թվականից ուժի մեջ է մտել կանոն, ըստ որի անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ են համարվում նաև պետական և համայնքային սեփականության հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինությունները: Անշարժ գույքի հարկ վճարում են նաև պետական և համայնքային սեփականության հողամասերի և շինությունների անհատույց օգտագործողները, ինչպես նաև կառուցապատման կամ վարձակալության իրավունքով տրամադրված՝ պետական և համայնքային սեփականության հողամասերի մշտական օգտագործողները՝ ստորգետնյա և վերգետնյա շենքերի, շինությունների կամ կառույցների մասով:
- Ըստ 2022 թվականից ուժի մեջ մտած կանոնի՝ շինարարության թույլտվության ժամկետները երկարաձգելիս պետք է վճարվի տուրք, որպեսզի կանխվեն շինարարության ժամկետների՝ անընդհատ և չհիմնավորված երկարաձգումները:
- Ընդունված օրենսդրական փաթեթով նախատեսվել է 2023 թվականից սկսած՝ երեք հաջորդական տարիների ընթացքում ներդնել ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիների եկամուտների հայտարարագրման և դրան զուգահեռ «սոցիալական ծախսերի» համակարգ, որի շրջանակներում հայտարա-րատուները հնարավորություն կստանան իրենց վճարած եկամտային հարկի գումարներից հետ ստանալու տարվա ընթացքում իրենց (կամ ընտանիքի անդամների) համար կատարված ու փաստաթղթերով հիմնավորված՝ առողջապահության, կրթության և բնակարանային ապահովության ծախսերի մի մասը:
- 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքը, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքում 300 հազար ՀՀ դրամը գերազանցող գործարքները պետք է իրականացվեն անկանխիկ: Ընդ որում, առանձին գործարքների, օրինակ՝ կրթաթոշակների, պետական գնումների,

բժշկական, կրթական, նոտարական, փաստաբանական, այդ թվում՝ խորհրդատվական բնույթի այլ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, անկախ գումարային մեծությունից, պետք է ամբողջությամբ անկանխիկ իրականացվեն: Անկանխիկ են լինելու նաև աշխատավարձերի վճարումները, բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից վարկերի և փոխառությունների տրամադրումը, ապահովագրական հատուցումները:

Հարկային և մաքսային վարչարարություն

- 2022 թվականի շուրջ 8,5 մլրդ ՀՀ դրամ անվանական ՀՆԱ-ի պայմաններում փաստացի Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է մոտ 22,7%, մնալով նույնը նախորդ տարվա համեմատ: Սակայն եթե վարչարարության գնահատման նպատակով 2021-2022 թվականների հարկային եկամուտների մեջ ներառենք նաև եկամտային հարկի գծով վերադարձված գումարները, ինչպես նաև 2022 թվականին մաքսատուրքի գծով ԵՏՄ ընդհանուր բյուջեից շուրջ 58,3 մլրդ պակաս ստացված գումարը, ապա ճշգրտված Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի մոտ 23,9%, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից (23,2%) ավելի կլինի մոտ 0,7 տոկոսային կետով: Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ էական աճ արձանագրվել է բոլոր հարկատեսակներով, մասնավորապես՝
  - ✓ ԱԱՀ աճը՝ 22,2%,
  - ✓ շրջանառության հարկինը՝ 25,7%,
  - ✓ շահութահարկը՝ 40,5%:
- Բացառությունը միայն մաքսատուրքն է, որը նախապես պլանավորվածից հայտնի հանգամանքների պատճառով ԵԱՏՄ-ից պակաս ստանալու հետևանքով հարկեր/ՀՆԱ ցուցանիշը չի բարելավվել: Մաքսատուրքերից մուտքերի նվազման պատճառը ԵԱՏՄ-ում լոգիստիկ շղթաների փոփոխություններն են և ԵԱՏՄ երկրներից հատկապես Ռուսաստանում մաքսատուրքերի հավաքագրման նվազումը, որի հետևանքով նվազել է նաև մաքսատուրքերի ԵԱՏՄ ընդհանուր բյուջեն:
- 1000 խոշոր հարկ վճարողների վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 1,5 տրլն ՀՀ դրամ կամ ընդհանուր հարկային եկամուտների շուրջ 78%-ը, որը 32%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2022 թվականի մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2021 թվականի, այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ մինչճգնաժամային համարվող ժամանակահատվածի նկատմամբ: Շուրջ 212,3 մլրդ ՀՀ դրամով կամ 32%-ով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների մասով, իսկ ցանկի վերջին հարյուրյակում գտնվող հարկատուների վճարումները կազմել են շուրջ 28 մլրդ դրամ՝ 2021 թվականի համեմատ 10 մլրդ ՀՀ դրամով ավելի: 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին հարյուրյակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը կազմել է 32 անգամ, որը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն ցածր է:
- 2022 թվականի արդյունքներով հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) հարկ վճարողների կողմից հայտարարագրվել է շուրջ 10,2 տրլն

ՀՀ դրամ շրջանառություն, որն ավելի է 2021 թվականի շրջանառությունից (8,2 տրլն ՀՀ դրամ) շուրջ 25%-ով:

- Հարկային մարմնի կողմից իրականացվող վերլուծությունների, կամերալ ուսումնասիրությունների արդյունքում 2022 թվականի ընթացքում բյուջե է հաշվեգրվել շուրջ 31,4 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ հարկ, որը նախորդ տարվա նույն ամիսների ցուցանիշը գերազանցում է շուրջ 44,7%-ով:
- Ներդրվել է ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների (e-vat) համակարգ (համակարգը ներդրված է և գործում է), որի շնորհիվ հարկային դաշտ են բերվել ՀՀ ռեզիդենտներին էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունները: 2022 թվականի հաշվետու տարվա համար ներկայացված հաշվարկների հիման վրա մարված գումարը կազմում է 1,6 մլրդ ՀՀ դրամ:
- 2022 թվականին սահմանվել է հարկային ուսումնասիրության նոր՝ թեմատիկ ուսումնասիրության տեսակ: Միայն 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում թեմատիկ ուսումնասիրության մեխանիզմի արդյունքում առաջացել է շուրջ 1 մլրդ ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն:
- 2022 թվականին հաստատվել են հարկային պլանավորման չարաշահման կանխարգելման կանոնները:
- Սահմանվել և առանձնացվել է ևս մեկ հարկային ստուգման տեսակ (տրանսֆերային գնագոյացման ստուգում):
- Ներդրվել և գործում է «տվյալների մեծ շտեմարանների» (Big Data) վերլուծական համակարգը (Big Data Analytics - Power BI), որը հնարավորություն է տալիս կատարելու վերլուծական աշխատանքներ՝ ստեղծելով տարբեր չափանիշներով հաշվետվություններ:
- 2022 թվականի ընթացքում հաստատվել են հատուկ հսկողություն պահանջող խոշոր հարկ վճարողների և շինարարության ոլորտի հարկային կարգապահության բարելավման ծրագրերը, որոնցով սահմանվել և իրականացվում են իրացման շրջանառությունների թերհայտարարագրման դեպքերի բացահայտմանը և փաստաթղթավորման պահանջների պահպանմանն ուղղված միջոցառումներ:
- Հաստատվել է ռիսկային երկրներից ներմուծում իրականացնող արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների մաքսային կարգապահության բարելավման ծրագիրը:
- 2022 թվականի ընթացքում հարկային մարմնի կողմից հսկողական աշխատանքների շրջանակներում իրականացվել է 1117 համալիր հարկային ստուգում, կայացվել է հարկ վճարողների չկատարած հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ 25 060 որոշում՝ շուրջ 89,7 մլրդ ՀՀ դրամի չափով:
- Հաշվետու ժամանակաշրջանում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու մասին 36 000 որոշումներով փաստացի գանձվել է շուրջ 554 մլն ՀՀ դրամ:
- 2022 թվականի ընթացքում հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովն ուսումնասիրել է հարկ վճարողների կողմից

ներկայացված 2115 բողոք, որից 51,5%-ը կամ 1089 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է:

- 2022 թվականի ընթացքում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 101 տնտեսավարողի:
- Պարզեցված մաքսային ընթացակարգերի ներդրմամբ բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների համար 2022 թվականին հնարավորություն է ստեղծվել մաքսային ձևակերպումներն իրականացնելու ցանկացած օր՝ 24-ժամյա աշխատանքային ռեժիմով:
- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի մշակմանն ուղղված աշխատանքների շրջանակում իրականացվել է ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված մարմինների վերադասավորում, մասնավորապես ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գործառույթները 2022 թվականի դեկտեմբերի 1-ից իրականացնում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմինները, իսկ ՀՀ ոստիկանության գործառույթները՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:
- 2022 թվականին ներդրվել է թույլատվական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգը, որի շահագործման շնորհիվ մաքսային հայտարարագրում իրականացնելիս պահանջվող մի շարք թույլատվական փաստաթղթեր ստանալու համար այլ պետական լիազոր մարմիններ և մի շարք հավատարմագրված կազմակերպություններ այցելելու անհրաժեշտությունը վերացել է:
- 2022 թվականին ներդրվել է մաքսային վճարների և մաքսային մարմինների կողմից գանձվող այլ վճարների էլեկտրոնային եղանակով վճարման համակարգը, որը տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում վճարումներ կատարելու էլեկտրոնային եղանակով:
- Գործարկվել է Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հետ տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգը:
- Ներդրվել և գործարկվել են էլեկտրոնային կառավարման հետևյալ համակարգերը և գործիքակազմերը՝

✓ Սահմանահատման ինտեգրված վերահսկողության,
✓ Կշեռքների կենտրոնացված համակարգի,
✓ Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների և պաշարների տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրման,
✓ «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման,
✓ Ապրանքների և ապրանքների կատեգորիա հանդիսացող տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման գործիքակազմի, որն ապահովում է ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողում:

- 2022 թվականի ապրիլի 4-ից մինչև մայիսի 4-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն անցկացրել է իր գործունեության վերաբերյալ գնահատման հարցում, որին մասնակցել է 641 կազմակերպություն (այդ թվում՝ ԱՁ) և ֆիզիկական անձ: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ ՊԵԿ գործունեությունը դրական են գնահատել հարկային մարմնի մասով հարցման մասնակիցների 87,1%-ը, մաքսային մարմնի մասով՝ 81,2%-ը, իսկ ընդհանուր հարցման մասնակիցների՝ 86,1%-ը:

Առաջընթացներ միջազգային վարկանիշերում

Միջազգային կազմակերպությունների հրապարակվող զեկույցներում Հայաստանն առաջընթաց է արձանագրել հետևյալ ցուցիչներում՝ «Economist Intelligence Unit»-ի «Ժողովրդավարության ցուցիչ», «Varieties of Democracy»-ի «Ժողովրդավարության զեկույց», «Reporters Without Borders»-ի «Մամուլի ազատության ցուցիչն աշխարհում», «Freedom House»-ի «Համացանցի ազատություն» զեկույց, «World Economic Forum»-ի «Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույց, «Freedom House»-ի «Անցումային շրջանի երկրներ» զեկույց, ՄԱԿ-ի «Էլ. Կառավարություն» զեկույց և Էկոնոմիկայի և խաղաղության ինստիտուտի «Խաղաղության համաշխարհային ցուցիչ»:

- Ըստ «Economist Intelligence Unit»-ի «Ժողովրդավարության ցուցիչ 2022 թվական»-ի՝ 167 երկրի (տարածքի) շարքում Հայաստանը զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը՝ բարելավելով դիրքերը միանգամից 7 հորիզոնականով: 2018 թվականից ի վեր Հայաստանում գրանցվել է կայուն աճ «ընտրական գործընթաց և բազմակարծություն» կատեգորիայում: Առկա է ընդհանուր առաջընթաց «կառավարության գործունեություն» կատեգորիայում, չնայած որ անցյալ տարվա համեմատ ՀՀ միավորը մնացել է անփոփոխ: 2022 թվականի «քաղաքացիական ազատությունների» մասով, անցյալ 2 տարվա համեմատ, գրանցվել է դրական դինամիկա, ինչը կարևոր է՝ հաշվի առնելով 2020 թվականի 44-օրյա պատերազմի և Քովիդ-19-ի պատճառով ստեղծված ճգնաժամը:
- «V-Dem» ինստիտուտի 2022 թվականի «Ժողովրդավարության զեկույցում» Հայաստանն ընտրական ավտոկրատիայից անցում է կատարել դեպի ընտրական ժողովրդավարություն: Ըստ զեկույցի՝ 2011 թվականից ի վեր առաջատար ժողովրդավարացող 10 երկրից միայն 3 են (ներառյալ Հայաստանը) վերջին 3 տարվա ընթացքում կարողացել պահպանել իրենց տեղն այդ շարքում:
- ՀՀ-ում ազատությունների, հատկապես համացանցային և մամուլի ազատության դրական դինամիկա են արձանագրել նաև «Freedom House»-ն ու «Reporters Without Borders»-ը՝ առանձնացնելով ՀՀ-ում զրպարտության քրեականացման, ինչպես նաև հետպատերազմական սահմանափակումների վերացումը: «Freedom House»-ի «Համացանցային ազատություն 2022» ցուցիչում Հայաստանը որակավորվում է որպես «ազատ» երկիր և 70 երկրի շարքում ստացել է 74 միավոր՝ գրանցելով դրական դինամիկա նախորդ տարվա 71 միավորի համեմատ: «Reporters Without Borders»-ի 2022 թվականի «Մամուլի ազատության ցուցիչն աշխարհում» զեկույցում Հայաստանը 180 երկրից զբաղեցնում է 51-րդ

հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ դիրքերը բարելավելով 12 հորիզոնականով:

- «Freedom House»-ի «Անցումային շրջանի երկրներ» 2022 թվականի զեկույցում Հայաստանն արձանագրել է առաջընթաց՝ 3,04 միավորով գրանցել է 0,8 միավորի դրական դինամիկա՝ 2021 թվականի համեմատ. բարելավվել են դիրքերը ժողովրդավարական կառավարման, ընտրական գործընթացի և դատական իշխանության անկախության ցուցանիշներում:
- Գենդերային անհավասարությունը գնահատող «World Economic Forum»-ի «Համաշխարհային գենդերային ճեղքվածքի 2022 թվականի զեկույցում 146 երկրից Հայաստանը զբաղեցնում է 89-րդ տեղը՝ բարելավելով դիրքերը նախորդ տարվա համեմատ: Առկա է դրական դինամիկա առանձնացված հիմնական 4 ուղղություններով. Հայաստանին ամենաբարձր միավորները տրվել են կանանց կրթության և առողջապահության հասանելիության, իսկ ամենացածրը՝ տնտեսական մասնակցության ու քաղաքական ներգրավվածության մասով:
- ՄԱԿ-ի «E-Government Survey 2022» զեկույցում 193 երկրից Հայաստանը զբաղեցնում է 64-րդ հորիզոնականը՝ 4 հորիզոնականով բարելավելով դիրքերը 2020 թվականի զեկույցի համեմատ (հրապարակվում է 2 տարին մեկ անգամ): Էլ. կառավարության զարգացման ոլորտում Հայաստանն ընդգրկված է բարձր ցուցիչ ունեցող երկրների խմբում: Զեկույցը նաև առանձնացնում է 2021-2025 թթ. Թվայնացման ռազմավարություն ունենալու փաստը, ինչպես նաև էլեկտրոնային կառավարման նորարարական նախագծերը:
- Էկոնոմիկայի և խաղաղության ինստիտուտի «Խաղաղության համաշխարհային ցուցիչ» զեկույցում 163 երկրից Հայաստանը 1.990 միավորով զբաղեցնում է 83-րդ հորիզոնականը՝ բարելավելով դիրքերը 3 հորիզոնականով նախորդ տարվա համեմատ (2.020 միավոր): Այս ցուցանիշով Հայաստանն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում, իսկ Ռուսաստան և Եվրասիա տարածաշրջանում՝ 2-րդը՝ Մոլդովայից հետո:
- Ըստ 2022 թվականին հրապարակված «Արևելյան գործընկերության անդամ երկրների ընդհանուր գնահատման 2020-2021 թվականների ինդեքս» զեկույցի՝ Հայաստանը ԱլԳ անդամ երկրների շարքում գլխավորել է «Ժողովրդավարություն և լավ կառավարում» վարկանշային աղյուսակը և առաջատար է հետևյալ 5 ուղղություններով՝ պայքար կոռուպցիայի դեմ, անկախ դատական համակարգ, կարծիքի և արտահայտվելու ազատություն, հավաքների և միավորումների ազատություն, անկախ ԶԼՄ-ներ և ժողովրդավարական իրավունքներ, ընտրություններ և քաղաքական բազմակարծություն:

Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին

2022 թվականին Հայաստանը ներկայացվել է՝

- ✓ Մոսկվայում կայացած սննդարդյունաբերության և ալկոհոլային խմիչքների «ՊրոդԷքսպո» միջազգային ցուցահանդեսին,
- ✓ Կատարում կայացած AgriteQ 2022 գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսին,

- ✓ Եկատերինբուրգի «ԻՆՆՈՊՐՈՄ 22» միջազգային արդյունաբերական ցուցահանդեսին,
- ✓ «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» ցուցահանդեսին (շարունակվել է 2022թ.),
- ✓ Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում կազմակերպված միջազգային ցուցահանդեսին,
- ✓ Միլանում կայացած «Տեքստիլ Ալիանս Հայաստան-Իտալիա» համաժողովին,
- ✓ Մոսկվայում կայացած «ExpoElectronica-2022» միջազգային ցուցահանդեսին,
- ✓ Բարսելոնայում կայացած «Mobile World Congress» ցուցահանդեսին,
- ✓ Փարիզում կայացած «Viva-Tech» ցուցահանդեսին,
- ✓ Փարիզում կայացած «73-րդ տիեզերագնացության կոնգրեսին»,
- ✓ Մոսկվայում կայացած MITT (Moscow International Travel & Tourism) ցուցահանդեսին,
- ✓ Դուբայում կայացած ATM (Arabian Travel Market) ցուցահանդեսին,
- ✓ Լոնդոնում կայացած WTM (World Travel Market) ցուցահանդեսին,
- ✓ Շարժայում կայացած «Շարժայի ժառանգության օրեր» միջազգային փառատոնին,
- ✓ Ֆրանկֆուրտի Գրքի միջազգային ցուցահանդեսին,
- ✓ Վենետիկի ժամանակակից արվեստի միջազգային 59-րդ բիենալեին,
- ✓ Առանձին տաղավարով՝ որպես պատվո հյուր Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում Ջերբայում (Թունիս) կազմակերպված մշակութային ավանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

27.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ